

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ  
ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ  
25 ԱՄԵԱԿԻ

ԱՆԹԻԼԻԱՍ

2013



**ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ  
ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՂՐՈՆԻ 25-ԱՄԵԱԿԻ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

	<b>Էջ</b>
1. Հայրապետական օրհնութեան խօսք <i>ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ</i>	9
2. Ապագայի հունձքերուն ակնդէտ <i>Գեղամ արք. Խաչերեան - Առաջնորդ Լիբանանի Հայոց</i>	11
3. Յառաջարան	13
4. Երկու Խօսք - Այս Յուշամատեանը	15
5. Կենսագրական Գիծեր Փրոֆ. Խաչեր Գալուստեանի <i>Տիկ. Վանուհի Գալուստեան</i>	19
6. Առաջին Հրապարակային Հաղորդագրութիւն Կեղրոնի <i>Դիւան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի</i>	27
7. Խաչեր Գալուստեան Հիմնադրամ Հայ Ուսուցչաց համար <i>Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ - 7 Փետրուար 1988</i>	28
8. Կեղրոնի Հիմնադրութեան Հանդիպումի Նախնական Գրառութիւն <i>Տիկ. Վանուհի Գալուստեան</i>	30
9. Հիմնադրամի Առաջին Նիստի Ատենագրութիւն	33
10. Համապարփակ Տեղեկութիւններ Կեղրոնի Բացման Առիթով	39
11. Ուսումնական Ծրագիր <i>Գրիգոր Շահինեան, Հայկ Թիլպեան</i>	45
12. Բնորոշում Խաչեր Գալուստեան Հիմնադրամի Գործնական Դասանիւթերու – <i>Հիմնադրամի Յանձնախումբ</i>	48
ա. Զարգացման Հեռանկարներ հնգամեակի Ատենագրութենէն	52
բ. Երկրորդ Տասնամեակի Մեմին	55
գ. Ընկերային, Մշակութային եւ Աշխատանքային Գործունէութիւն <i>Գրիգոր Շահինեան</i>	58
դ. Կեղրոնի Մանկավարժական Գործունէութեան Երկշաբաթեայ Ծրագիր	62

13. Կեղրոնի Բացման Պաշտօնական Արտօնագիր, Վկայականի Պետական Ճանաչում, Վկայականի Նմոյշ՝ Հայերեն եւ Արաբերեն Լեզուներով	66
14. Դասախօսական Կազմի Անուններ	77
15. Շրջանաւարտներու Անուանացանկ՝ 1989-1990-էն Մինչեւ 2011-2012 Ուսումնական Տարեշրջան	82
16. Շրջաբերական՝ 1995 ին <i>Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ</i>	93
17. 6 Մարտ 1992, Վկայականներու Բաշխման Հանդէս	96
1. Ոսկեբերան Արզումանեանի Բացման Խօսքը	97
2. Համադրական Տեղեկագիր՝ Կեղրոնի Վարիչ՝ Գրիգոր Շահինեանի Կողմէ	100
3. Վեհափառ Հօր Հայրական Խօսքը՝	105
Ոսկեբերան Արզումանեանի Խօսքէն՝ Արտասանուած, 18 Օգոստոս 1999ին	109
18. Նամակագրութիւն Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Գրիգոր Շահինեանի միջեւ	110
19. Պոլսահայ Բանաստեղծ՝ Զարեհ Խրախունիի Վկայութենէն	112
20. Յարատեւ Ուսանող, Յարատեւ Սերմնացան <i>Ճիրայր Դանիէլեան</i>	114
21. Արժեւորում Հանգուցեալ Վարիչ Գրիգոր Շահինեանի բերած նպաստին – Այժմու Վարիչ՝ <i>Կարօ Յովհաննէսեան</i>	121
22. Մանկավարժական Անտիպ Գրութիւններ Հանգուցեալ Փրոֆ. Խաչեր Գալուստեանէն	138
• Դաստիարակը	139
• Նպատակներ դաստիարակութեան մէջ	140
• Նպատակի մը բնութիւնը	141
• Դատանիշեր լաւ նպատակներու	144
• Կիրարկում դաստիարակութեան մէջ	146
• Դաստիարակչական արժէքներ	149
• Հայ դաստիարակը	153

23. Մանկավարժական Հիմնախնդիրներ	157
1. A Sustainable World View	158
<i>Նուշիկ Գալուստեան/Շիրեճեան,</i>	
<i>Դոկտ. Թեկնածու, 2014</i>	
2. How Children Understand The Environment	163
<i>Դոկտ. Կարին Գալուստեան</i>	
3. The Importance Of Collaboration In Teaching	166
<i>Դալար Գալուստեան`</i>	
<i>Դոկտ. Թեկնածու 2013</i>	
24. Քսանհինգամեակի Առիթով	168
<i>Շահէ Գալուստեան</i>	
25. Ազգապահպանումի Եւ Ազգապահակութեան Կրթութիւն	172
<i>Շահէ Գալուստեան</i>	
26. Մանկավարժական Եւ Ուսուցչանոցի Հեռակայ Համալիրի Ծրագիր	178
- Նկարագրութիւն	179
- Համալիրի Ցատակագիծ	181
27. Հրատարակչական Գործունէութիւն	183
28. Ֆանարի Գալուստեան Օժանդակ Հիմնադրամ	188
29. Հայկական Վարժարաններու Ցանկ	190
(Որոնց Հետ Կեդրոնը Համագործակցած Է)	





ՆՍՕՏ Արամ Ա.  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ





ARMENIAN CATHOLICOSATE  
OF CILICIA  
Antelias, Lebanon



كاثوليكوسية  
الأرمن الأوثوذكس  
أنطلياس، لبنان

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**  
Անթիլիաս, Լիբանան

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ**  
**ԽԱՋԵՐ ԴԱԼՈՒՍՏԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ**  
**ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵՍԿԻՆ ԱՌԹԻՒ**

Հոգևորական անհուն գոհունակությամբ կ'ողջունենք Խաչիք Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի առաքելութեան 25-ամեակը: Արդարեւ, լուրջ մտահոգութեան ու հիմնական կարիքի ծնունդ էր մանկավարժական այս կեդրոնի հիմնադրութիւնը: Հայ ուսուցչական կազմերը նոր ախեռով կենսատրեկու ու անոնց մանկավարժական կազմաւորում տալու կարիքը դարձած էր հրամայական: Այս անհրաժեշտութեան ընդառաջեց Լիբանանի հայ գաղութէն ներս երկար տարիներու կրթական վաստակ ունեցող Խաչիք Գալուստեանի բնասանիքը: Հանգուցեալ մանկավարժին երազը եղած էր այս ծրագիրը. եւ ահա իր բնասանիքը կու գար հանգուցեային հրազը իրականացնելու՝ ընդառաջելով Երջանկայիշատակ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի փափախին:

Խաչիք Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը, իր հետևողական ու նուիրեալ աշխատանքով արդարացուց իր նպատակը՝ մեծ բխով ուսուցիչներ կազմաւորելով եւ իր կարեւոր ներդրումը կատարելով հայ դպրոցի մարդակերտումի ու հայակերտումի առաքելութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կատուցին ու համազգային առաքելութեան մաս կազմող մանկավարժական այս կեդրոնը պէտք է դառնայ աւելի կազմակերպ իր գործունէութեամբ ու նպատակաւոր իր կոչումով: Ինչո՞ւ: Առաջին, որովհետեւ հայ մանուկի դաստիարակութեան լծուած հայ ուսուցիչներու հետգիտով, հասարցող ներկայութիւնը հայ դպրոցներէն ներս սկսած է դառնալ լուրջ մտահոգութիւն: Երկրորդ, որովհետեւ հայերէն գիտցող եւ հայագիտական նիւթերու մասին ընդհանուր տեղեկութիւններ ունեցող հայ ուսուցիչներու բխը զգալի նահանջի մէջ է: Այս խորապէս մտահոգիչ երևույթը համապիտոյճեան է: Ահա այս կացութեան դիմաց Խաչիք Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը կոչուած է ո՛չ միայն մանկավարժական մերտաներով ու գիտելիքներով կազմաւորել հայ ուսուցիչը, այլ նաեւ զինք զինել հայագիտական հիմնական գիտելիքներով:

ARMENIAN CATHOLICOSATE  
OF CILICIA  
Antelias, Lebanon



كاثوليكوسية  
الأرمن الأثوذكس  
أنطلياس، لبنان

**ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԻՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**  
Անթիլիաս, Լիբանան

Այս մասձումներով ու սպասումներով կ'ողջունենիք Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի 25-ամեակը: Այս առիթով Մեր խոր յարգանքը կ'ընձայեն Երջանկալիշատակ Գարեգին Վեհափառ Հայրապետին, կ'օրհնենք յիշատակը Փրոֆ. Խաչեր Գալուստեանին, Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք հանգուցեայ քնտանիքին ու կ'օրհնենք յիշատակը բոլոր անոնց որոնք ծառայելին այս Կեդրոնին ներս ու ալժմ հեռացած են այս աշխարհէն՝ տնօրէն թէ ուսուցիչ, յանձնախումբի անդամ թէ աշակերտ: Հայրական սիրով կ'ողջունենք Կեդրոնին յանձնախումբը, տնօրէնը, ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը: Խոր Աստուած նորանոր իրագործումներով աւելի ծաղկեցնէ մանկավարժական այս կեդրոնին հայակերտ աստուերիներ:

Հայրական օրհնութեամբ

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

10 Յուլիս, 2013  
Անթիլիաս, Լիբանան



## ԱՊԱԳԱՅԻ ՆՈՒՆՉՔԵՐՈՒՄԸ ԱԿՆԴԷՏ

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորման Կեդրոնին քսանհինգ տասնէր անցեալի իրագործումներուն աօրնթեր, միաժամանակ քարերուսարիկ աօրիս մըն է ալսօր, մեր մքրածունները սեօեօեալու հայկական ներկայ իրականութեան վրայ, աւսօր պարագաներուն, կարեւիօթիւններուն ու ակնկալութիւններուն:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորման Կեդրոնը ինրնին կատայց մըն է, որուն գործունէութիւնը մեզ կը հրաւիրէ, սեղաւորաւսալու կարգ մը իրականութիւններու:

Աւսջին, Խաչեր Գալուստեան մանկավարժ անձին, որ իր սմրոցջ էլլայեանը նուիրունցալ սօր սերունդի դաստիարակութեան, աւոոցջ դաստիարակութեան: Եւ իքրե հայ դաստիարակ, շաք քեանկան էր, որ իր մանկավարժական գործունէութենէն սեմանս պնրի չմնար յաղկապէս մեր սօր սերունդներու հայեցի դաստիարակութիւնը:

Երկրորդ, այն անձանց, որոնք մեժ դաստիարակին՝ Խաչեր Գալուստեանին գործը իր սեօալատելի մանուան սրայմաւառ կիսաք ջըողոցին՝ իր ազնիւ րիկիւնց եւ զաւակները, որոնք Խաչեր Գալուստեանը վերսօրին կեանքի կոցեցին մակավարժական կազմաւորման կեդրոնը էիմնեալ ծրարքով:

Մեժի Տանն Կրիկիայ Երանաշէրի Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ հովանաւորեց եւ իրագործեց մեժ մանկավարժին ընրանիքին վաօխարը, եւ սեղաւոր, Մեժի Տանն Կրիկիայ Գանակայ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որոն անմիջական հակըղթեան ներքեւ օրէ ցօր գօրգօցող Մակավարժական Կազմաւորման Կեդրոնը կը նշէ իր քսանհինգամնայ յըրէեանը:

Ինչպէս նաեւ այն անձանց, որոնք Մանկավարժական Կեդրոնի գործունէութեան աւաջին օրնե ցալսօր, սեմիջական գորմակիցները Լոսան վերեւ յիշուամ սօրկաւոնելի անձնաւորութեանց:

Երրօրդ, Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորման Կեդրոնին քսանհինգամնայ վարակին՝ հայապահպանման աւօրեայ մեր մարաւոսին սրիամակն դիգրօմ: Որքան որ հայեցի կրթութեան համակարգին մեջ ժամանակին եւար



քայլ պահող նոր դատագիրքերու կայիցը ունիւք այսօր, այդքան ալ եւ անլի հայեցի դատարարութիւնն եւ ոգի ջանքով «իկն» ուսուցիչներուն պէտք ունիւք այսօր, որոնք գիրքն հայագիտական կիւթի դատագիրքը ոգիի եւ ապրումի վերածնւ :

Յօդուեանկան այն առիթը, սկզբնող քաննիինգ փայիներուն սերնդակերպման նպաստող երաշխաբաշար աշխատանքը գնահատելու եւ արժեւորելու չափ եւ անլի, մեզ կը խրախուսէ գալիք փայիներուն հաշուոյն, մեր հայկական հասարական կեանքին զարգացման ու խորգաւանման համար լատարինս կրանադրութեանը ուշխարակի մեջ լարուած մնարու : Խօսելը Կայուսրեան Մանկավարժական Կազմատորման Կեդրոնը, հայեցի կրթութեան ոլորտին մեջ միակի է, որ յանձնառու կը մնայ հայ մանկավարժի պատրաստելու : Եւ բանի որ Տայ Կարոցիի առարելութիւնը մեր նոր սերունդները հայեցի կրթութեանը դատարարակեյն է, ապա ուրեան, այդ առարելութեան յաջողութեան գրաւականը կը մնայ իր կոչումին գիտակից մանկավարժ դատարարակ հայ ուսուցիչը :

Այս նկարառումներով կը դիտենք Խօսելը Կայուսրեան Մանկավարժական Կազմատորման Կեդրոնին քաննիինգ ամենակը, ինչպէս նաև գալիք փայիներու գործունէութիւնը մանկավարժութեան կազմատրում մեծաթի հայ ուսուցիչներով, որոնք մեզ պիտի պատեն գալիք սերունդներու բերքի հունձրերուն ակնդէպ :

Վ.Վ.Վ. Վ.Վ.Վ.

ԱՌԱՋՆԱԿՆ ԼԻՐԱՆԱԿԻ ՏՍՅՈՅ

20 Փետրուար 2013

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս յուշամատեանի հրատարակութիւնը, քսանհինգ տարուան տեղեկագրութիւն կամ արձանագրութիւն ըլլալէ աւելի, պերճախօս փաստն է, որ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը կրցած է իր գոյութիւնը պահել ու մանաւանդ ծառայել իր կրթական առաքելութեան:

Արդարեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանին վայելող այս իրայատուկ Կեդրոնը, նախ՝ երջանկայիշատակ ՏՏ Գարեգին Բ. Կաթողիկոսի, ապա՝ ՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի, ամբողջ քառորդ դար, մնաց պատնէշի վրայ, այն հաստատուն հեռանկարով, որ

ան կը պատրաստէ մասնագէտ  
մանկավարժներ, որակաւոր  
ուսուցիչներ եւ յանձնառու  
դասատուներ:

Ինչպէս իր հիմնադրութենէն սկսեալ, նաեւ յետագային, այս Կեդրոնը բարեբեր եւ բախտորոշ նպաստ մը եղաւ հայ ուսուցչաց դասին՝ մասնաւորաբար, ու հայ մանկավարժութեան՝ ընդհանրապէս, որովհետեւ բոլորին մօտ՝ հովանաւոր, հիմնադիր, ուսուցչակազմ թէ յաճախող, կար խոր հաւատք, թէ նման մանկավարժական հիմնարկ մը կրնար լիովի ծառայել հայ դաստիարակին մասնագիտական կազմաւորումին, առաւել՝ կրնար զարկ տալ անոր մեթոտաբանական ուսուցումի ձեւաւորումին:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը գործեց տքնաջանօրէն ու հետեւողականօրէն, պատասխանատու կողմերու բարեխնամ ու բժախնդիր հոգատարութեան ներքոյ, լիբանանահայ (նաեւ սփիւռքահայ) մանկավարժութեան ու մանկավարժին տալով վերանորոգուելու ու վերակազմաւորուելու մասնագիտական յղացք, կշիռ ու բովանդակութիւն, միանգամայն:

Անվարանօրէ՛ն, պէտք է ընդունիլ, որ մանկավարժական այս կեդրոնը, իր օրինակելի գործունէութեամբ եւ արդիւնաւէտ աշխատունակութեամբ, կրցաւ իրեն վստահուած ու շնորհուած կարելիութիւնները լաւագոյնս օգտագործել ու զանոնք

դնել տրամադրության տակ հայ դպրոցի պահպանման եւ յարատեւման ի խնդիր:

Այս բոլորը աւելի պարտաւորեցուցիչ կը դարձնեն Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի առաքելութեան շարունակականութեան հրամայականութիւնը, յատկապէս այս հանգրուանին, երբ Հայ դպրոցը պէտք ունի թարմաշունչ աւիշի ու վարակիչ աւիւնի, իսկ Հայ ուսուցիչը՝ վերապատրաստման ու վերակազմաւորման մասնագիտական հնարքներու:

Գալուստեան Կեդրոնը, գոհացուցիչ չափանիշներով, ցարդ կատարած է եւ յաջողած՝ իր մանկավարժական առաջադրութիւններուն մէջ,

Հայ ուսուցիչին տալով կազմաւորման  
համապատասխան հիմք եւ ուղի, նաեւ՝  
ասպարեզային աստիճանաւորական  
(պետական) ընդունում ու ճանաչում:

Այս իրագործումներու յաջողութեան մէջ, որոշապէ՛ս, Կեդրոնի առաջին տեսուչը՝ հանգուցեալ Գրիգոր Շահինեան, յիշատակելի բացառիկ ու շնորհակալ դեր ու նպաստ ունեցած է, զայն պահելու իր արժանի մակարդակին ու պատուանդանին վրայ, գլխաւորութեամբ Կեդրոնը ղեկավարող Յանձնախումբին, ինչպէս նաեւ ընտրանի դասախօսակազմի մը օժանդակութեամբ ու ներգործութեամբ, որոնց աւանդը այսօր եւս կը շարունակուի, նոր տեսուչ՝ Պրն. Կարօ Յովհաննէսեանի օրօք, շնորհիւ անոր ձեռնհաս ու կազմակերպչական ղեկավարութեան:

\*

\* \*

25-ամեակը հանգրուան է, մանաւանդ եթէ ան արդարացուցած է իր գոյութեան նպատակը, իսկ նոր 25-ամեակի մը դիմաւորումը, իր հեռանկարային ծրագիրներու իրականացումով ու դրսեւորումով, կը պահանջէ աւելիով փարիլ ու կառչիլ այդ գոյերթին, այս պարագային,

հայ մանկավարժութեան ու հայ  
մանկավարժին տալով  
մասնագիտական որակաւորումի  
հայադրոշմ կնիք:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը ա՛յդ է որ կ'ընէ ու կը հետապնդէ, իսկ այս յուշամատենը ատոր արտացոլացումն է:

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

### ԱՅՍ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԸ

Յոբելինական այս գրքոյկը հանրագումարի կը բերէ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի անցած ուղին, իր հիմնադրութենէն (1987) մինչեւ 2012 թուականը, իր գործունէութեան եւ արձանագրած իրագործումներուն համապատկերը ներկայացնելով, համապատասխան բաժիններով ու տեղեկագրութիւններով:

Այս հրատարակութեան նախաձեռնութիւնը, յատկապէս 25 ամեակին առիթով, կը միտի ցոյց տալ այս Կեդրոնին խաղցած դերը եւ անոր վերապահուած տեղը հայ մանկավարժական կեանքին մէջ, ատենին գործած կամ (գործող) հայագիտական կամ հայերէնագիտական հիմնարկներէն ա՛յն տարբերութեամբ ու նոյնիսկ առաւելութեամբ, որ անիկա

Հայ ուսուցիչին ու ուսուցչուհիին  
հնարաւորութիւն կու տայ ինքզինք  
կատարելագործելու՝ արդիական  
գիտելիքներով, գործնական ցուց-  
մունքներով ու նորահնար մօտե-  
ցումներով,

մեկնելով դաստիարակչական հիմունքներու կազմաւորման իւրացումէն ու հունաւորումէն:

Կեդրոնի ցարդ տուած հունձքը, կը հաստատէ իր գոյութեան արժանաւորութիւնն ու յատկանշութիւնը, երբ վերահասու կ'ըլլանք անոր բերած նպաստին, թէ՛ յաճախող թեկնածուներու որակաւորութեան աստիճանաւորումով, թէ՛ դրոշմուած դրական ազդեցութեամբ տուեալ դպրոցներուն վրայ, թէ՛ աշակերտներու դաստիարակութեան վրայ ձգուած ուսանելի տպաւորութիւններով:

Այս բոլորը իրագործելի եւ կիրարկելի դարձան, անշուշտ, մասնագէտ, փորձագէտ ու վաստակաւոր դասախօսներու հոյլով մը, որ Կեդրոնին կենսունակութեան եւ արդիւնաւէտութեան տուաւ իր միտքէն, հոգիէն ու փորձառութենէն, ամենայն հետեւողականութեամբ, նուիրումով ու բժախնդրութեամբ:

Համոզուելու համար այս Կեղրոնի ձեռք բերած յաջողություններուն, գոյերթին, շահեկան եւ առարկայական մանրամասնութիւններուն, Յուշամատեանին մէջ ներառնուած են՝

- Օրհնութեան խօսքեր, գնահատանքի գիրեր, վկայութիւններ, եւայլն:
- Կեղրոնի հիմնադրութեան պատմութիւն (կտակ, ատենագրութիւն, շրջաբերական, կոչ, եւայլն)
- Կեղրոնի կրթական ծրագիր, նպատակ, բնոյթ
- Կեղրոնի պետական արտօնագիր – կանոնագրութիւն, վկայական
- Դասախօսական կազմ՝ հիմնադրութենէն ի վեր
- Շրջանաւարտներու ցանկ
- Մանկավարժական գրութիւններ (Խաչեր Գալուստեան եւ ընտանիքի անդամներ)


Ահաւասիկ, ընդնահուր գիծերու մէջ, բայց խօսուն եւ ընդգրկուն չափանիշներով, Կեղրոնին ամբողջական պատկերը, իր արժանիքներով, բարեմասնութիւններով եւ օգտաւէտութեամբ, որ արդարօրէն կը յուշէ անոր անգնահատելի քաջալերական ներգործութիւնը Հայ մանկավարժական միտքի առողջացման ու հասունացման վրայ:

Եթէ քսանհինգ տարուան մանկավարժական աշխատանք մը իր բարեբերութեամբ ու հանրօգուտութեամբ, արդարացուցած եւ արժեւորած է իր առաքելութիւնը ու հեռանկարային կարգ մը յուսադրիչ ծրագիրներով կը ձգտի շարունակել իր ուղին,

յանուն Հայ մանկավարժին մասնագիտական կազմաւորումին, հայ դպրոցին զօրակցութեան ու հայ աշակերտին դաստիարակութեան,

ապա, զայն պահելն ու կենսաւորելը անխուսափելի անհրաժեշտութիւն են:





Փրոֆ. Խաչեր Գալուստեան



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՆ ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՄԹԻԼՈՍԱՆ - ԼԻԲԱՆԱՆ

Թի:

Անթիլիաս,

## Մ Ե Մ Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ը

Այսպիսի հանչյցանք ՄՆՆԸ հանգուցեալ Խաչեր Գալուստեանր: Գրող, մատուցան, դասախոս եւ ուսուցիչ ըլլալէ առաջ ու վեր Խաչեր Գալուստեանք մանկավարժ էր քառիւն ամբողջական առումով: ՄՆՆԸ զինք մօտէն հանչյցանք կրք դասախոս էինք Հայկազեան Համալսարանին մէջ: Ապա զինք հանչյցանք Մեր Առաջնորդութեան շրջանին: Նաեւ մօտէն գործակցեցանք իր հետ Լիբանանեան տագնապի սկզբնական շրջանին, լիբանանահայ կրթական կեանքը աւելի կազմակերպելու մեր հաւաքական նիւթի ծիրէն ներս:

Խաչեր Գալուստեանի համար հայ մարդու կազմաւորումը, հայուն միջնշմարիտ հայու տիպարին կերտումը հիմնական մտահոգութիւն էր: Ինք կը հաւատար, որ արդի մանկավարժական բոլոր միջոցները հարկ է օգտագործել այս նպատակին համար: Հանգուցեալը խորապէս կը հաւատար որ գիտութիւնը կենսական դեր ունի ուսանողին կազմաւորման մէջ, սակայն, իրեն համար Լականը, հայուն մէջ հայու կազմաւորումն էր: Եւ իր ամբողջ կեանքի ընթացքին Խաչեր Գալուստեան փորձեց ներդաշնակութիւն մը ստեղծել հայ ուսանողին կեանքին այս երկու տարածքներուն միջև:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար Խաչեր Գալուստեան միշտ մնաց սիրելի անձ մը: Ան սերտ գործակցութիւն հաստատած էր Երջանկայիշատակ Խորէն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսներուն հետ: Արդարեւ Կաթողիկոսարանի մշակութային առաւելութեան նկատմամբ իրենց ունեցած գնահատանքին ու վստահութեան որպէս արտայայտութիւն, ինչպէս նաեւ անմտացնելու համար հանգուցեալի յիշատակը, իր Տիկիներ՝ Վանուհին եւ իր զաւակը՝ Շահէն որոշ գումար մը տրամադրելով, Կաթողիկոսարանէն ներս հաստատելին Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորման Կեդրոնը: Այսօր տասնութ տարիներէ ի վեր յաջողութեամբ կը գործէ այս կառուցողական գլխաւորութեամբ Պրն. Գրիգոր Շահինեանի, շարունակելով հանգուցեալին կրթական ու մանկավարժական աւանդը:

Ընդհանրապէս սփիւռքիէն ներս ու մասնաւորաբար Լիբանանի միջ Խաչեր Գալուստեան միշտ պիտի մնայ տիպար մանկավարժ մը ու հայակերտումի առաւելութեան նուիրումը բազմազատակ ուսուցիչ մը:

Ս. Պ. Թարաթ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

15 Դեկտեմբեր, 2005  
Անթիլիաս, Լիբանան

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

Փրոֆ. Խաչեր Գալուստեան ծնած է Մարաշ, 21 Հոկտեմբեր 1915ին: Երեք տարեկանին Մարաշի Գերմանական «Պէյթ-շալոմ» որբանոց դրուած է, հորը զինուորագրուած ըլլալուն պատճառով: Մարաշի աղէտ՝ 7 Փետրուար 1920էն ետք, որբանոցը փոխադրուած է «Էրքորն», դարձեալ Մարաշ, աւելի ապահով վայր մը: Մարաշի դէպքին ան կորսնցուցած է մայրը, նշանուած քոյրը եւ երկու եղբայրները:

1921ին, որբանոցը փոխադրուած է նախ Հոմս՝ վեց ամիս, Սուրիա, եւ ապա՝ Ճիպէյլ, Լիբանան: Փրոֆ. Խ. Գալուստեան Ճիպէյլի Մերձաւոր Արեւելքի Ընկերակցութեան (Near East Relief = N.E.R.) որբանոցը մնացած է մինչեւ 1924: Երբ որբերը կը սկսին ցրուել, ան կը դրկուի Հալէպ, իր հորը մօտ, որ կրկին ընտանիք կազմած էր Չալօղլեան ընտանիքէն՝ Տիկ. Ովսաննայի հետ:

Փրոֆ. Խ. Գալուստեան իր նախակրթարանի ուսումը կը ստանայ Մարաշի, Ճիպէյլի որբանոցները եւ Հալէպի Հայ Աւետարանական Պէթէլ նախակրթարանը: Ան իր երկրորդական եւ Կրտսեր գոլէճի ուսումը կը ստանայ Հալէպի Ամերիկեան գոլէճ, ուրկէ ընթացաւարտ կ'ըլլայ 1932ին:

Փրոֆ. Խ. Գալուստեան ուսուցչական պաշտօն կը վարէ Հալէպի Կիլիկեան վարժարանին մէջ, 1932-38, աւանդելով գիտական, ուսողական եւ մարզանքի դասեր: 1938-42՝ ան կը պաշտօնավարէ Թրիփոլիի Ամերիկեան Բարձրագոյն վարժարանը (Tripoli Boys School) աւանդելով բարձրագոյն դասարաններուն՝ գիտական-ուսողական եւ մարզանքի դասեր:

Փրոֆ. Խ. Գալուստեան, 7 Յուլիս 1941ին ամուսնացաւ բնիկ Ատանացի, Ասատուր աղա Միսիրեանի աղջկան՝ Վանուհիին հետ: Վանուհին եղաւ բառին բովանդակ առումով իրաւ գործակից մը եւ քաջալերող մը իր ամուսնոյն բոլոր ծրագիրներուն: Անոնք ունեցան չորս զաւակներ.

1. Մովսէս-Վարուժան.- Երկրորդական ուսումը ստացած է ՀԲԸՄիութեան Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանին մէջ: Համալսարանական վկայականներ՝ Տարրաբանութեան մէջ ստացած է B.S, M.S. տիտղոսները՝ Պէյրութի Ամերիկեան համալսարանէն. Ph.D.-ին «Նոթըր Ելմ» համալսարանէն, Post Doctoral տիտղոսներ U.C.L.A.-էն, Լոնտոնի Իմփրիըլ գոլէճէն: Ան որպէս քիմիագիտութեան դոկտոր պաշտօնավարեց U.C.L.A., Պէյրութի Ամերիկեան համալսարան եւ ապա Նիւ Եորք-ի «Ճօրտիէմ» համալսարան:

1964	B.Sc. Organic Chemistry	A.U.B.
1966	M.Sc. Organic Chemistry	A.U.B.
1970	Ph.D Stereochemistry	Notre Dame Univ./ Indiana, U.S.A.

2. Շահէ.- Երկրորդական ուսումը ստացած է ՀԲԸՄիութեան Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի եւ Ինթըրնէշնէլ գոլէճի մէջ I.C.: B.S. մեքենագիտական երկրաչափութեան վկայականը ստացած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն:



1967	B.Sc. Bachelor of Engineering (Major Mechanical)	A . U . B .
1995	Engineering Management	A.B.I.

3. Սեդա.- Երկրորդական ուսումը ստացած է ՀԲԸՄիության Կիպրոսի Մելգոնեան Կրթական հաստատությունն էլ Ահլիեի Երկրորդական վարժարանն է: Կրտսեր գոլէճի վկայագիրը Պէյրութի Ամերիկեան աղջկանց գոլէճէն, B.S.-ը դեղագործութեան, M.S.-ը վկայականները Իմիունօլոճի Պէյրութի Ամերիկեան համալսարանն է:

1971	B.Sc. Pharmacy	A.U.B.
1973	M.Sc Immunology	A.U.B.
1995	M.A. French Literature	Villanova Univ./ Philadelphia, PA U.S.A.

4. Հուրի-Սեւան.- Ուսանած է Գալուստեան Համապարփակ Կրթական հաստատութեան մէջ, ուրկէ անցած է International College, անկէ՝ Պէյրութի Ամերիկեան համալսարան (B.S.), ապա Միացեալ Նահանգներ Temple University, ուրկէ 1985 Մայիսին Speech Therapy-ի վկայական ստացած է:

1981	B.Sc. Biology & Psychology	A.U.B.
1985	M.A. Speech Language Pathology	Temple Univ./ Philadelphia, PA, U.S.A.
2000	Ph.D. Communicative Disorders	Univ. of Wisconsin/Madison U.S.A.

Փրոֆ. Գալուստեան իր սերունդին պատկանող բոլոր հայ մանուկներուն, պատանիներուն նման ժուժկալ կեանք մը ունեցած է:

Ուսման հանդէպ կանուխէն սեր էլ հետաքրքրութիւն ցոյց տուած է, որուն մէջ մեծ դեր ունեցած է հայրը՝ Մովսէս. հակառակ անուս ըլլալուն, միշտ քաջալերած է ուսումը շարունակել: Ան յաճախ կ'ըսէր թէ հայրը եղած է խոհեմ, հաշտարար ոգիով առլցուն, աշխատասէր էլ բարի, հակառակ շատ պարզ արհեստ ունենալուն – ջուլիակ – էլ կանուխէն մահացած ըլլալուն՝ 52 տարեկան (18 Յունուար 1932):

Փրոֆ. Գալուստեան 1944-53ին կը պաշտօնավարէ որպէս Տնօրէն Պէյրութի Հայ Աւետարանական Բարձրագոյն վարժարանին մէջ: Այդ շրջանին Բարձրագոյն վարժարանը կը դառնայ Կրտսեր գոլէճ՝ Հայ Աւետարանական գոլէճ յաւելումով՝ ֆրէշմէն Սոֆոմոր դասարաններու. դարձեալ այդ շրջանին հաստատութիւնը կ'ունենայ իր բնաւրածարանները, կազմակերպուած գրադարանը էլ պաշտօնական ճանաչում կը ստանայ Պէյրութի Ամերիկեան համալսարանն է:

Փրոֆ. Գալուստեան 1953-60ին կը պաշտօնավարէ ՀԲԸՄիութեան Դարուի Յակոբեան Երկրորդական վարժարանին մէջ որպէս տնօրէն: Այդ շրջանին վարժարանը կը դառնայ լրիւ երկրորդական եւ պաշտօնական ճանաչում կը ստանայ Պէյրութի Ամերիկեան համալսարանին կողմէ: Անկախ իր պաշտօնական ճանաչումէն, հաստատութիւնը իր շրջանաւարտները կը ներկայացնէ Օքսֆորտ եւ Քէմպրիճ համալսարաններու G.C.E.-ի քննութիւններուն:

Փրոֆ. Գալուստեան իր պաշտօնավարութեան հետ կը շարունակէ իր ուսումը եւ 1958ին կը ստանայ Մագիստրոս M.A. տիտղոսը Մանկավարժութեան մէջ, Պէյրութի Ամերիկեան համալսարանէն: Իր ւարտաճառի թեզի նիւթն էր «Սերտողութիւն մը Լիբանանահայ Դպրոցներու Մասին», (A Study of Armenian Schools in Lebanon), որ քննիչներու կողմէ մեծ գնահատանքի կ'արժանանայ:

Փրոֆ. Գալուստեան 1960-64ին կը պաշտօնավարէ որպէս տնօրէն Կիպրոսի ՀԲԸՄիութեան Մելգոնեան Կրթական հաստատութեան: Իր պաշտօնավարութեան ընթացքին, կրթական ծրագիրի բարձրացումով, հաստատութիւնը կը վերածուի Կրտսեր գոլէճի, որ կը ճանչցուի տեղական պետութեան կողմէ որպէս երկու դասարան աւելի բարձր քան լրիւ երկրորդական վարժարան: Պէյրութի Ամերիկեան համալսարանը սկզբունքով կ'ընդունի Կրտսեր գոլէճներու շարքին դասել երբ այդ հարցը ուսումնասիրութեան նիւթ դառնայ պատկան ժողովի կողմէ: Այդ շրջանին կը հաստատուին բնագիտութեան եւ տարրաբանութեան արդիական բնալուծարանները:

Այդ շրջանին հաստատութիւնը կեդրոն կը դառնայ G.C.E.-ի սովորական եւ յառաջացած մակարդակներուն: Հակառակ կղզիին մէջ տիրող դժուար կացութեան, հաստատութիւնը կ'ունենայ 298 երկսեռ աշակերտ, 285-ը՝ գիշերօթիկ: Հաստատութիւնը 1964ին շրջանաւարտներ կ'ունենայ երկրորդական եւ Կրտսեր գոլէճի բաժնէն շուրջ 50 հոգիներ:

Փրոֆ. Գալուստեան 1964 Հոկտեմբերին Ամերիկա կը մեկնի իր ուսումը շարունակելու համար: 10 Փետրուար 1966ին կը ստանայ յառաջացեալ Ուսմանց Վկայականը – Փէնսիլվանիոյ Ֆիլատելֆիա քաղաքի Թէմբլը համալսարանէն, Պատուոյ յիշատակութեամբ (Diplom of Advanced Graduate Studies) համազօր՝ Դոկտորայի:

Ամերիկայէն վերադարձին կը սկսի պաշտօնավարել Հայկազեան գոլէճի մէջ որպէս մանկավարժութեան փրոֆէսօր՝ 1966-1976: Իր պաշտօնավարութեան ընթացքին կը վարէ ընկերային գիտութեան – մանկավարժութիւն, հոգեբանութիւն, ընկերաբանութիւն, - ամպիոնը եւ նաեւ գիշերային գոլէճի եւ Հայ Ուսուցչանոցի ու Ամառնային դպրոցի տնօրէնութիւնը: Գիշերային գոլէճի եւ Հայ Ուսուցչանոցի հիմնադիրը եղաւ:

Հայկազեան գոլէճ պաշտօնավարութեան ընթացքին Հայ Ուսուցչանոցի համար պատրաստեց բազմազրուած երեք գիրքեր՝ «Դաստիարակութեան Հոգեբանութիւնը», «Դաստիարակութիւն եւ Ընկերային Գիտութիւններ», «Հասկնալ Մանուկները»: Չորրորդ մըն ալ լոյս տեսաւ, յետ մահու, «Ուրուագիծ Դաստիարակչական Հոգեբանութեան»:

Փրոֆ. Գալուստեան սիրած է ուսուցչական ասպարէզը եւ կը սիրէր կոչել եւ կոչուիլ ուսուցիչ-դաստիարակ: Ան կը հաւատար դաստիարակութեան եւ

դաստիարակութեան բարիքներուն: Ան կը հաւատար թէ դաստիարակուած անձը իր *հարստութիւնը* միշտ իր հետ կը կրէ մինչեւ մահ:

Երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարած է նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցներէն ներս եւ ապա՝ կրօնական դաստիարակութեան խորհուրդի անդամ եղած է, Հալէպ եւ Պէյրութ:

1950ի ամառը երեք ամիս Ֆրանսա մեկնած է եւ հետեւած Սորպոնի ֆրանսական դաստիարակութեան (La Civilization Francaise) դասընթացքներուն, Լիբանանի ֆրանսական մշակութային կեդրոնի կրթաթոշակով:

1956ի ձմեռը երեք ամիս մեկնած է Անգլիա՝ Երկլեզուի (Bilinguism) ուսուցման ծանօթանալու համար: Պրիթիշ Քաունսըլի կրթաթոշակով մեկնած է Կալէս (Wales), այցելած 30 տարբեր դպրոցներ, մօտէն ծանօթանալով իւրաքանչիւր դպրոցի ուսումնական ծրագիրի տեսական եւ գործնական երկլեզուի ուսուցման:

1960ի ամառը Գալուստ Կիւլպէնկեան կրթաթոշակով Ժընեւի համալսարանի ամառնային դասընթացքներուն հետեւած է մէկ ամիս եւ անկէ՝ Փարիզ՝ Սուրիոյ եւ Լիբանանի երկրորդական վարժարաններու տասը տնօրէններու հետ Սէվրի Ուսուցչանոցի դասընթացքներուն եւ դասախօսութիւններուն:


1965ի ամառը, Ամերիկա ուսանած շրջանին, Փրոֆ. Գալուստեան իր համալսարանին կողմէ դրկուած է Հէրիզպուրկի վերատեսուչներու (Superintendent) երկու շաբաթ տևող ժողովներուն, ուր կը քննուէր զանազան ուսանիւթերու (discipline) վերամշակումը:

1984 Հոկտեմբերին հրաւիրուած է Գլաձորի Համալսարանի 700-ամեակի տօնակատարութիւններուն, որմէ խանդավառուած Կեդրոնին մէջ տուած է իր տպաւորութիւնները շատ բարձր գնահատելով հայրենիքի նուաճումները:

Փրոֆ. Գալուստեան պատանեկան տարիքին անդամ եղած է ՀԲԸՄիութեան եւ հիմնադիրը Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան՝ ՀԵԸ Հալէպ: Ան կը հաւատար թէ ՀԵԸ-ը պատանիներու եւ երիտասարդներու համար գեղեցիկ միջավայր մըն է իրենց տաղանդները եւ ճարտարութիւնները զարգացնելու ու ուրիշներն ալ դէպի կեանք հրաւիրելու: Ան ՀԵԸ-էն ներս երկար տարիներ վարչական պաշտօններ վարած է որպէս վարչական գործադիրի անդամ, Ասպետներու հիմնադիր անդամ, Կեդրոնականի անդամ եւ ատենապետ:

Փրոֆ. Գալուստեանի իտեալը եղած է ունենալ իր սեփական դպրոցը: Իրեն գործակից ունենալով իր կողակիցը եւ շնորհալի զաւակները, այդ իտեալն ալ իրականացած է 1974 Հոկտեմբերին: Դպրոցը կոչուած է «Գալուստեան Համապարփակ Կրթական Հաստատութիւն», որ ունեցած է մանկապարտէզ, նախակրթարան, միջնակարգ եւ երկրորդական բաժիններ՝ գիշերօթիկ բաժինով: Հաստատութիւնը կոչուած էր որակաւոր դաստիարակութեան կեդրոն դառնալ:

Հաստատութիւնը շարունակեց գործել մինչեւ 1981 Օգոստոս, որմէ ետք, քաղաքական ապահովական պայմաններու բերմամբ ականայ փակուեցաւ:







Ն. Ս. Օ Տ Տ ԳԱՐԵԳԻՆ Բ.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



# ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԻ



## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼՐԿՐՈՅ ԿԱԹՈՒՐԱՍ - ԼԻՐԱՆԱՍ

Թի

Արիվիտա

198

### ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նրէկ, Կիրակի, Յունուար 12-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագի աւարտին, ըզգմովապակ հայ մանկավարժ, դաստիարակ, տնօրէն եւ ուսուցիչ՝ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի մահուան քառասունքին առիթով կատարուած հոգեհանգստեան արարողութեան ընթացքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս յատուկ խօսքով մը զնահատեց հանգուցեալ Խաչեր Գալուստեանի մանկավարժական վաստակը եւ այդ առիթով յայտարարեց որ հանգուցեալի ընտանիքը՝ Տիկինը եւ զաւակները, ի յիշատակ իրենց թանգկազին ամուսնոյն եւ նոր, մէկուկէս միլիոն լիբանանեան ոսկիի մեծագումար նուիրատուութեամբ մը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ հաստատեցին հիմնադրամ մը, որ պիտի կոչուի Փրոֆ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Հիմնադրամի տարեկան եկամուտը միայն պիտի յատկացուի հայ ուսուցչի պատրաստութեան այնքան կենսական գործին, որուն ամենաջերմ հաւատացողներէն եւ գործնապէս նուիրեալներէն մէկն էր Փրոֆ. Խաչեր Գալուստեան ինք:

Վահագն Հայրապետը օրհնելէ ետք յիշատակը ըզգմաջան դաստիարակ Խաչեր Գալուստեանին՝ ջերմօրէն զնահատեց իր Տիկնոջ՝ Վանուհիի եւ զաւակներուն այս յոյժ զնահատելի եւ օրինակելի արարքը ի սէր հայ ուսուցչի պատրաստութեան զարգացման եւ ի ծառայութիւն հայ նոր սերունդի առողջ դաստիարակութեան:

Դիմն ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ

18 Յունուար, 1986  
Անթիլիաս-Լիբանան.

ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱՅ ՀԱՄԱՐ

1. Վաստակաւոր հայ մանկավարժ եւ դաստիարակ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի յիշատակին հաստատուած է այս Հիմնադրամը իր Տիկնոջ՝ Վանուհիի եւ զաւակներուն կողմէ:

2. Հիմնադրամին ընդհանուր գումարն է մէկուկէս միլիոն լիբ. ոսկի, որուն տարեկան տոկոսային եկամուտը միայն պիտի յատկացուի առաջադրուած նպատակին:

3. Հիմնադրամը կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին ներքեւ:

4. Կը մատակարարուի յատուկ Յանձնախումբով, որ նշանակուած է Կիլիկեան Սբ. Աթոռի Գահակալին կողմէ: Յանձնախումբին նախագահն է Վեհափառ Հայրապետը՝ ինք: Իսկ ցկեանս պատուոյ անդամ է Տիկին Վանուհի Գալուստեան՝ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի տիկինը:

5. Յանձնախումբին պարտականութիւնն է որոնել կամ ստեղծել գործնական միջոցներ, որոնցմով կարելի ըլլայ պատրաստել ուսուցիչներ հայ դպրոցներուն համար եւ բարձրացնել որակը ուսուցիչներուն, ոչ միայն Լիբանանի, այլ նաեւ արտասահմանի այլ հայ դպրոցներուն համար:

Գարեգին Բ. Կաթողիկոս  
Մեծի Տանն Կիլիկիոյ

7 Փետրուար 1986



Տիկ. Վանուհի Գարուստեան

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ  
ԳՐԱՌՈՒԹԻՒՆ  
ՏԻԿ. ՎԱՆՈՒՀԻ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ – ՓԵՏՐՈՒԱՐ 1986

*Յետագայ էջերով՝ առաջին հանդիպումին գրառութիւնը, զոր իր ձեռագիրով կատարած է Տիկ. Վանուհի Գալուստեան (այրին՝ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի), հիմնադրելի մանկավարժական Կեդրոնի գործունեւան ազդանշանը տալով, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Գարեգին Բ.ի ու մասնակցութեամբ համապատասխան ազգայիններու:*



Handwritten title

- 1. Handwritten entry 1
- " Handwritten entry 2
- " Handwritten entry 3
- " Handwritten entry 4
- " Handwritten entry 5
- " Handwritten entry 6
- " Handwritten entry 7
- " Handwritten entry 8
- " Handwritten entry 9
- " Handwritten entry 10
- " Handwritten entry 11
- " Handwritten entry 12
- " Handwritten entry 13
- " Handwritten entry 14
- " Handwritten entry 15
- " Handwritten entry 16
- " Handwritten entry 17
- " Handwritten entry 18
- " Handwritten entry 19
- " Handwritten entry 20
- " Handwritten entry 21
- " Handwritten entry 22
- " Handwritten entry 23
- " Handwritten entry 24
- " Handwritten entry 25
- " Handwritten entry 26
- " Handwritten entry 27
- " Handwritten entry 28
- " Handwritten entry 29
- " Handwritten entry 30



## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

*Առաջին վաերագրական ատենագրությունը, ուր արդեն աշխատանքի ծրագիրը, նպատակը ու ձևը աւելի կը բիրեղանան, իսկ վերահսկող յարձնախումբի կազմը՝ վերջնական պատկեր, անոր վստահելով նախնական որոշակի պարտականություններ, որպէս մեկնակէտային գործնական քայլեր:*

14 Փետրուար, 1986

Վայր՝ Վեհափառ Հօր գրասենեակ

Ներկաներ՝

ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Կաթողիկոս, Հոգեշնորհ Արշալիր վրդ. Գափուճեան, Տիկ. Վանուհի Խ. Գալուստեան, Տիարք Ոսկեբերան Արզումանեան, Ժիրայր Դանիէլեան, Գրիգոր Շահինեան եւ Հայկ Թիլպեան: Բացակայ՝ Տիար Շահէ Խ. Գալուստեան:

Ժողովը սկսաւ ժամը 5:10ին: Նախագահեց Վեհափառ Հայրապետը: Ժողովի սկիզբը Վեհափառը “Հոգւոց” արտասանելէ ետք հանգուցեալ փրոֆեսորի հոգիին խաղաղութեան համար, վեր առաւ Պրն. Գալուստեանի կրթական, մանկավարժական եւ դաստիարակչական մարզերու մէջ ունեցած շուրջ 50-ամեայ վաստակը ու ուրախութիւն յայտնեց որ յետ մահու եւս իր գործը պիտի շարունակուի՝ ստեղծուած հիմնադրամի շնորհիւ: Ապա, Վեհափառը շնորհակալութիւն յայտնեց Գալուստեան ընտանիքի անդամներուն, որոնք իրենց հօր ցանկութիւնը՝ գործնականի վերածելով ստեղծած են Ուսուցչաց պատրաստութեան համար յատուկ ֆոնտ մը, կաթողիկոսութեան հովանիին ներքեւ:

Բացման խօսքէն ետք Վեհափառը ծանօթացուց ներկաները, որոնք ընդառաջելով Վեհափառ Հօր հրաւերին եկած էին մաս կազմելու հիմնադրամի Յանձնախումբին: Վեհափառը ուրախութիւն յայտնեց Տիկ. Գալուստեանի ներկայութեան համար ու շեշտեց որ հանգուցեալ փրոֆեսորի կողակիցը պիտի մնայ Յանձնախումբի պատուոյ անդամ: Ծանօթացումէն ետք, Յանձնախումբի դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով.

ա.- Տիար Ոսկեբերան Արզումանեան Ատենապետ

բ.- Տիար Հայկ Թիլպեան Ատենադպիր

Պրն. Արզումանեան շնորհակալութիւն յայտնեց վստահութեան համար ու յոյս յայտնեց, որ Յանձնախումբի անդամներու գործակցութեամբ կարելի պիտի դառնայ դրական արդիւնք ձեռք ձգել ուսուցիչներ պատրաստելու դժուարին բայց օգտակար աշխատանքէն:

Տիկ. Գալուստեան անձնապէս իր եւ չորս զաւակներուն անունով շնորհակալութիւն յայտնեց նախ Վեհափառ Հօր իր հետեւողական աշխատանքին համար ու Յանձնախումբի անդամներուն՝ իրենց գործակցութեան համար:

Այս բոլորէն ետք ժողովը անցաւ աշխատանքի:

Առաջին հերթին կարդացուեցաւ հինգ կէտերէ բաղկացած Գալուստեան Հիմնադրամը իր ընդհանրութեան մէջ ներկայացնող գրութիւն մը՝ պատրաստուած Վեհափառին կողմէ (էջ 28):

Ապա, որպէս միակ օրակարգ որոշուեցաւ քննել հիմնադրամի նպատակները իրագործելու գծով որդեգրուելիք գործընթացը:

Կարգ մը հարցեր կը կարօտէին պատասխանի:

- Ուսուցչաց հիմնարկ մը սկսի՞լ թէ գործակցիլ գոյութիւն ունեցող բարձրագոյն ուսմանց կեդրոններուն հետ.
- Մասնագիտական ուսման կրթաթոշակներ յատկացնե՞լ թէ վերաորակաւորումի դասընթացքներ սկսիլ.
- Ի՞նչ նիւթերու (հայերէն, այլ լեզուներ, ուսողութիւն, գիտական նիւթեր) եւ ո՞ր մակարդակի (Մանկապարտէզ, Նախակրթարան, Երկրորդական) համար ուսուցիչներ պէտք է պատրաստել.
- Մահմանափակուիլ միայն Լիբանանի հայկական վարժարաններու պահանջո՞ւմ թէ մտածել արտասահմանի հայ վարժարաններու կարիքներու մասին նաեւ:

Յետ մտքերու փոխանակման, սկզբունքային կերպով որոշուեցաւ.-

ա. Նկատի ունենալով հիմնադրամի եկամուտը, մոռնալ ուսուցչաց հիմնարկ, ուսուցչանոց, ունենալու գաղափարը, որ մեծածախս ձեռնարկ մըն է, հետեւաբար, կարելութեան սահմաններուն մէջ գործակցիլ գոյութիւն ունեցող բարձրագոյն ուսմանց կեդրոններու հետ - Հայկազեան գոլէճ, Համազգայինի Հայագիտական Կեդրոն, Ե. Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ, Դպրեվանք, եւլն... - հետեւողականօրէն կամ պարագայաբար դասընթացքներ կազմակերպելով, կամ կրթական ծրագիր մը մշակել ուսուցիչներու պատրաստութեան գծով, որուն մէջ նկատի առնուին մանկավարժական առարկաներ եւ մասնագիտական թեքում ունեցող նիւթեր ու այս դասընթացքը հրամցնել թեկնածուներուն, գործակցութեամբ վերոյիշեալ հիմնարկներուն, սակայն Յանձնախումբիս անմիջական հսկողութեան ներքեւ:

բ. Առժամաբար մոռնալ անհատ դիմողներու կրթաթոշակներու դրութիւնը, նկատի ունենալով որ բազմաթիւ կարելիութիւններ գոյութիւն ունին/Կիւլպէնկեան, ՀԲԸՄ, Ճոն Կուրճ, եւլն...:

գ. Առաջին հերթին նկատի ունենալ նախակրթարանի մէջ դասաւանդելու կոչուած թեկնածուներու պարագան, քանի երկրորդականի ուսուցիչները անպայման կ'ունենան համալսարանական պատրաստութիւն, մինչ նախակրթարանի մէջ ուսուցանելու համար ներկայացուած դիմումագրերը առաւելաբար կու գան երկրորդական վարժարաններու շրջանաւարտներէ: Լիբանանցի թեկնածուներուն համար նկատի ունենալ կրթական ծրագրի հետ առընչուող բոլոր նիւթերու յատուկ դասընթացք, իսկ եթէ արտասահմանէն

թեկնածուներ ունենանք, որոնք կ'ուզեն հետեւիլ մեր մշակած ծրագրին, այդպիսիներու պարագային նկատի ունենալ հայերէն, հայոց պատմութիւն եւ կրօն, որովհետեւ դժուար է պատշաճիլ զանազան երկիրներու մէջ կիրարկուող կրթական ծրագիրներուն:

դ. Չսահմանափակուիլ Լիբանանով ու կարելիութիւն ստեղծել որ արտասահմանէն շնորհալի տարրեր հետեւին մանկավարժական դասընթացքներու (այս մէկը պայմանաւորուած է երկրիս ապահովութեան վիճակով):

Այս մեկնակէտը նկատի ունենալով՝

Ա. Տիարք Գրիգոր Շահինեանին ու Ժիրայր Դանիէլեանին վստահուեցաւ մշակումը կրթական ծրագրի մը, որ հիմնուած ըլլայ Լիբանանի մէջ գործող հայագիտական հիմնարկներու ծրագիրներուն վրայ, կրնայ որոշ պատշաճեցումներով դասընթացքի վերածուիլ, նպատակ ունենալով միջնակարգի եւ երկրորդականի ուսուցիչներ պատրաստել (նոր թէ արդէն գործի վրայ եղող): Հայագիտական նիւթեր դասաւանդող այս ծրագրի թեկնածուները պէտք է ունենան պաքալորիա կամ համագոր վկայագիր:

Բ. Տիարք Ռ. Արզումանեանին եւ Հ. Թիլպեանին վստահուեցաւ ուսումնասիրել կարելիութիւնը BT մակարդակի ծրագրի մը, որուն կարենան հետեւիլ միջնակարգը աւարտած աշակերտներ ու երեք տարուան վրայ երկարող ամենօրեայ կրթական ծրագիրը աւարտելէ ետք ստանան պետական պաքալորիա թեքնիք մանկավարժութեան մէջ (այս մէկը գործակցաբար Արիեստից եւ Արուեստից վարժարաններուն):


Յիշեալ երկու ծրագիրներու մանրամասն ուսումնասիրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ նիստին՝ Չորեքշաբթի, Մարտ 19ին:

Վեհափառ Հօր շնորհակալութեան խօսքէն ետք, նիստը աւարտեցաւ ժամը 7:20ին:

Հայկ Յ. Թիլպեան  
Ա.դպիր

Ոսկերերան Արզումանեան  
Ա.պէտ

Գարեգին Բ. Կաթողիկոս  
Նախագահ





Արամ Ա. կաթողիկոս կը զրուցէ Յանձնախումբի անդամներուն հետ



# ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏԵՂԵԿՈՒԹՒԻՒՆՆԵՐ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

*Յետագայ շրջաբերականը ամբողջական տեղեկություններ կու տայ նորարաց  
Կեդրոնի կազմին, նպատակին, ընդունման պայմաններուն, դասանիւթերու եւ  
ընդհանրապէս ուսումնասիրութեան ծրագիրին հետ առընչուող հարցերուն  
մասին:*

**ԽՈՒՄԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՆՈՒՅՆ ՔԱՆՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ԵՒ**

**ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ԿԵՆՏՐՈՆ**

**ԿԵՆՏՐՈՆ**

**ԿԵՆՏՐՈՆ**

## ԵՆԿՁՈՐ ՔԱՆՈՒՄՏԵՐՆԵ ԶԻՐՆԵՔՐՈՒՄ

Հիմնադրամիջուկը կազմավորվել է Տիգրան Արևելիկյանի և Գրիգոր Գրիգորյանի կողմից և իր արձակներում կազմել է շրջանակ կազմից ահապահվելու համար անհրաժեշտ փողերի հավաքումը:

Հիմնադրամիջուկի հարստացումը նպաստեցին հիմնադրամի ստեղծումը և կազմակերպումը:

Հիմնադրամի ստեղծումը իր զուգանությամբ կազմակերպում է հիմնադրամի և հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր արձակների և կազմակերպության կողմից կազմակերպվող բոլոր արձակների կազմակերպումը:

Կազմակերպության անունը կազմակերպում է հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր արձակների և կազմակերպության կողմից կազմակերպվող բոլոր արձակների կազմակերպումը: Հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր արձակների և կազմակերպության կողմից կազմակերպվող բոլոր արձակների կազմակերպումը:

Հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր արձակների և կազմակերպության կողմից կազմակերպվող բոլոր արձակների կազմակերպումը:

Պ. Կազմակերպության կողմից

Կազմակերպություն

Պ. Կազմակերպություն

Կազմակերպություն

Պ. Կազմակերպություն

Պ. Կազմակերպություն

Պ. Կազմակերպություն

Պ. Կազմակերպություն

Հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր արձակների և կազմակերպության կողմից կազմակերպվող բոլոր արձակների կազմակերպումը:



## ԱՐՁԱՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՐԵՆՆԵՐՈՒՄ

Հիմնադրամիջոցներով օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին և անհատներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Հիմնադրամիջոցներով օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Հիմնադրամիջոցներով օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին և անհատներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել, օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին և անհատներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին և անհատներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:

Ս. Կրթության բնագավառում

Առևտրային

Պ. Հայկական համայնքներին

Կրթության բնագավառում

Ս. Կրթության բնագավառում

Պ. Հայկական համայնքներին

Ս. Կրթության բնագավառում

Պ. Հայկական համայնքներին

Օգնություններ են ցուցաբերվում հայկական համայնքներին և անհատներին՝ իրենց աշխատանքներում, ինչպես նաև՝ կրթության բնագավառում, որտեղ անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել:



Վերջինս չի ընդունում հարգանքները և փնտրում է իր փնտրանքները:

Ունեցվելի էր պահանջարկը՝ դրամայի պահանջարկը:

1. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
2. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
3. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
4. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
5. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
6. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
7. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
8. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
9. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:
10. Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:

Նորից հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:

Հարգանքները չեն ուղղվում դեպի հարգանքները:



# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գ. ՄՇԱԿՈՒՄ

## 1. Նպատակ եւ Գործելակերպ

Որոնել կամ ստեղծել գործնական միջոցներ, որոնցմով կարելի ըլլայ պատրաստել ուսուցիչներ հայ դպրոցներուն համար եւ բարձրացնել որակը ուսուցիչներուն, ոչ միայն Լիբանանի, այլ նաեւ արտասահմանի դպրոցներուն համար:

## 2. Միջոց եւ պայմաններ

Խաչեր Գալուստեան Հիմնադրամէն կրնան օգտուիլ, ձրի դասընթացքի թէ մասնակի կրթաթոշակի ձեւով, բոլոր այն հայ երիտասարդ-երիտասարդուհիները, որոնք երկրորդական իրենց ուսումը աւարտած են եւ կ'ուզեն նուիրուիլ մանկավարժական ասպարեզին: Կրնան նոյնպէս օգտուիլ արդէն իսկ ուսուցչական ասպարեզին նուիրուած անհատներ:

Անոնք գրաւոր դիմում կը ներկայացնեն Հիմնադրամի Յանձնախումբին եւ, ընդունուելու պարագային, պայմանագրութիւն կը ստորագրեն՝ իրենց ուսումի տարիներուն համապատասխան ժամանակով ծառայելու հայկական վարժարանի մը մէջ, պետական օրէնքի սահմանած սակով, յետ շրջանաւարտութեան:

Գրաւոր դիմումի սկզբունքային ընդունումէն ետք, թեկնածուները պէտք է ծանօթացումի տեսակցութիւն մը ունենան Յանձնախումբի անդամներուն հետ:

Այս պայմաններու գոհացուցիչ ձեւով լրացումէն ետք միայն, թեկնածուները կ'արտօնուին հետեւելու դասընթացքին եւ օգտուելու մասնակի կրթաթոշակէ եւ ստորագրելու վերեւ յիշուած պայմանագիրը:

## 3. Յանձնախումբի կազմակերպած դասընթացքը

3.1 Ծարադրական գործնական աշխատանք/ յատկանշական գրութիւններու լեզուական կառոյցի ուսումնասիրութիւն եւ ինքնագիր շարադրութիւն	45 պահ*
3.2 Հայերէն լեզուի ուսուցումի կերպ նախակրթարանի մէջ	45 պահ
3.3 Հայերէն լեզուի կամ գրականութեան ուսուցումի կերպ միջ-նակարգ/երկրորդականի մէջ	45 պահ
3.4 Հայոց պատմութեան ուսուցումի կերպ նախակրթարանի մէջ	45 պահ
3.5 Հայոց պատմութեան ուսուցումի կերպ միջնակարգի եւ երկրորդականի մէջ	45 պահ
3.6 Գործնական մանկավարժութիւն	45 պահ
3.7 Լսա-տեսողական սարքերու եւ գրամեքենայի օգտագործում	45 պահ

Ծանօթ: \* Հաւասար երեք վարկանիշի

3.8 Մանկական հոգեբանություն	45 պահ
3.9 Նախակրթարանի մէջ աւանդուող այլ նիւթեր/ թուաբանություն, իրագիտություն, աշխարհագրություն, գե ղարուեստներ, եւ այլ... ուսուցումի գործնական կերպեր	45 պահ
3.10 Կրօնի եւ Քրիստոնէական Դաստիարակութեան ուսուցումի կերպ նախակրթարանի մէջ/Ազգային աւանդութիւններ եւ ժառանգութիւն ներառեալ	45 պահ

- Նախակրթարանի ուսուցիչ ըլլալ ուզողը պարտադրաբար պէտք է հետեւի 1, 6, 7, 8 ինչպէս նաեւ 9 կամ 2, 4, 10 դասանիւթերուն ըստ իր նախընտրու-  
թեան, երկու տարուան ընթացքին, շաբաթական 3 յետմիջօրէի հաշիւով,  
օրական 2 պահ:
- Ուսուցումի կերպին վերաբերող դասերը կը բաղկանան երեք մասերէ.  
Տեսական բացատրութիւններ՝ 20 պահ, կրաւորական մասնակցութիւն  
տրուած դասի մը՝ 15 պահ, դասատուութեան գործնական աշխատանք՝  
20 պահ: Արդէն պաշտօնավարող ուսուցիչներուն այս դասերու վերջին  
երկու մասերը կը տրուին իրենց իսկ դպրոցին մէջ: Ազատ ուսանողներուն  
համար կ'ըլլայ յատուկ կարգադրութիւն, որպէսզի կարենան խումբով հե-  
տեւիլ դասատուութեան կրաւորական եւ գործօն աշխատանքներուն՝  
դասախօսի հսկողութեամբ:
- Միջնակարգի եւ երկրորդականի Հայերէն լեզուի ուսուցիչ ըլլալ ուզողը  
պարտադրաբար պէտք է հետեւի 1, 3, 5, 6, 7, 8 դասանիւթերուն, երկու  
տարուան ընթացքին, շաբաթական երեք յետմիջօրէի հաշիւով: Այլ նիւթեր  
դասաւանդող ուսուցիչներուն համար կը նախատեսուի յատուկ կարգա-  
դրութիւն:
- Այս դասընթացքին հետեւողը կը ստանայ յատուկ վկայագիր Խաչեր  
Գալուստեան Հիմնադրամի Յանձնախումբէն: Վկայուելու համար  
անհրաժեշտ է ապահովել 24 վարկանիշ:

4. B.A.\* վկայականի ստացում/Նախապայման՝ Բ. Պաքալորիա կամ  
համազօր վկայագիր

Իրենց ուսումը ակադեմական վկայականով մը պսակել ուզող թեկնածուները,  
Յանձնախումբի կազմակերպած դասընթացքէն զատ, կրնան հետեւիլ հետեւեալ  
դասերուն եւ ստանալ համապատասխան վարկանիշ:

4.1 B.A.-ի համար պահանջուած դասեր/պարտադիր՝ Սոֆոմոր դասարան  
ընդունուած ուսանողներուն համար /

- English 101 – 102 and/or 201 – 202
- Intercultural Studies 201 – 202, 211 – 212

*Ծանօթ: Հայկազեան գոլէճէն վկայական՝ B.A. ստանալու համար պայման է որ  
ուսանողը գոնէ 30 վարկանիշ ապահովէ հաստատութենէն*

- One course in Religion or a substitute (philosophy)
- At least 36 credits in the major (18 credits must be taken at H.C.)

#### 4.2 Հայագիտական յաւելեալ Նիւթեր

Հոս կը մտնեն մեր պատրաստած ցանկի նիւթերը Հայկագեանի, Հայագիտական Հիմնարկի եւ Հիւսիսեանի մէջ անոնց հետեւելու հնարաւորութեան, պահերու դասախօսներու վկայականի անհրաժեշտութեան յիշատակութեամբ

Ֆրէշմէն ընդունուող ուսանողներէն շրջանաւարտութեան համար կը պահանջուի 124 վարկանիշ:

Բ. Պաքալորիա ունեցող ուսանողը պարտի ապահովել 94 վարկանիշ՝ ստանալու Պսակաւոր տիտղոսը:

5. Պետական մանկավարժական վկայականի ստացում:

ՍԵՐՏԵԼԻ

1987

Գ. Շ., Հ. Թ.

**ԲՆՈՐՈՇՈՒՄ**  
**ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**  
**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԱՆԻԻԹԵՐՈՒ**

*Այս բնորոշմամբ, Խաչեր Գալուստեան Հիմնադրամի Յանձնախումբը պատրաստած է գործնական դասանիւթերու մեթոտներու ծրագիր մը, որ նախակրթարանին եւ երկրորդականին համար ունի ուղղիչ ու դաստիարակիչ դեր:*

*Իր շահեկանութիւնն ու արդիականութիւնը կորսնցուցած չըլլալով, գայն ներառելը այս հրատարակութեան մէջ, որոշապէս օգտակար կրնայ հանդիսանալ:*

\*

\*       \*

Այս դասանիւթերու հիմնական նպատակն է աւանդումը մեր դպրոցներուն մէջ տրուող զանազան նիւթերու ուսուցումի կերպին (methodology), նկատի ունենալով, սակայն, որ հիմնարկի ուսանողները կրնան անհրաժեշտ հմտութիւնը չունենալ այդ նիւթերուն, թելադրելի է որ դասախօսները մեթոտին հետ աւանդէն նաեւ ընդհանուր ծանօթութիւններ անոնց մասին: Տեսական եւ փորձառական դասերու 20 – 5 - 20 բաշխումը ընդհանուր սկզբունք մըն է միայն. անհրաժեշտ պարագային, կարելի է տարբեր բաշխում նկատի ունենալ: Թելադրելի է, օրինակ, վերը արտայայտուած մտահոգութեամբ, որոշ նիւթերու տեսական բաժինին աւելի ժամանակ յատկացնել եւ ուրիշներու՝ նուազ: Բոլոր պարագաներուն ալ, պէտք է որդեգրել կենդանի եւ ոչ-վարդապետական (dogmatic) մօտեցում մը, որ ապահովէ թեկնածուներու մասնակցութիւնը եւ գործակցութիւնը:

### **1. Շարադրական Գործնական Աշխատանք**

Այս նիւթը պարտադիր է բոլորին:

Անոր նպատակն է մտերմիկ ծանօթութիւնը հայերէնին՝ յատկանշական հատուածներու ուսումնասիրութեան եւ ինքնագիր շարադրութիւններու ընդմէջէն: Զանազան բնոյթի գրութիւններու (գեղարուեստական, գիտական, լրագրական, կենցաղային, եւայլն) ուսումնասիրութեան առիթով, կը կատարուի գործնական վերաքաղը հայերէնի քերականութեան (նեռարեալ կէտադրութիւնը), ինչպէս նաեւ լրացումը ուսումնառութեան հաւանական բացերուն:

Շարադրութիւնները կրնան նաեւ գրական-գեղարուեստական բնոյթ ունենալ, բայց գեղարուեստը չէ անոնց նպատակը, այլ հայերէնի անսխալ գործածութիւնը՝ զանազան բնոյթի գրութիւններու մէջ:

### **2. Հայերէն Լեզուի Ուսուցումի Կերպ Նախակրթարանի մէջ**

Դասանիւթի տեսական բաժնի պահերը կը յատկացուին հայերէնի զանազան ենթանիւթերու (ընթերցանութիւն, ուղղագրութիւն, քերականութիւն, շարադրութիւն, եւայլն՝ ըմբռնուած իբրեւ մէկ ամբողջութիւն) ուսուցումի կերպի բացատրութեան:



Փորձառական բաժինի պահերուն մէկ հինգերորդը կը յատկացուի հայերէնի դասերու կրաւորական ներկայութեան: Ուսանողները կը հետեւին նախակրթարանի ուսուցիչի մը կողմէ տրուած հայերէնի դասերու եւ կը քննարկեն դասաւանդումի առաւելութիւններն ու թերութիւնները: ց

Փորձառական բաժինի պահերուն, չորս հինգերորդը կը յատկացուի ուսանողներու տալիք դասերուն: Իւրաքանչիւր պահէ ետք, կը քննարկուին ուսանողին առաւելութիւններն ու թերութիւնները:

### 3. Հայերէն Լեզուի եւ Հայ Գրականութեան Ուսուցումի Կերպ Միջնակարգի եւ Երկրորդականի մէջ

Այս դասանիւթը մասամբ ունի նախորդին բովանդակութիւնը: Կը փոխուի անշուշտ դասաւանդութեան մակարդակը եւ կ'աւելնայ գրականութեան ուսուցումի կերպը:

Գրականութիւնը պէտք չէ հասկնալ իբրեւ կենսագրութիւններու եւ գործերու մեքենական կրկնութիւն: Պէտք է վերլուծուին յատկանշական հատուածներ՝ անոնց բովանդակութիւնը ըմբռնելու եւ իւրայատկութիւնը վեր հանելու դիտաւորութեամբ: Գրականութեան պատմութիւնը առաջնահերթ պէտք չէ նկատուի, կարելորը հաղորդութիւնն է երկին հետ, անկէ առնուած հատուածի մը ընդմէջէն, եւ գնահատումը գրողներու ուրոյն արժանիքներուն:

### 4. Հայոց Պատմութեան Ուսուցումի Կերպ Նախակրթարանի մէջ

Նախակրթարանի առաջին երկու տարիներուն, պէտք չէ կառչիլ դասագիրքերուն, այլ ժամանակագրական ընդհանուր ընթացք մը նկատի ունենալով՝ ծանրանալ հայոց պատմութեան կարեւոր դէպքերուն վրայ եւ ներկայացնել հայոց պատմութեան օրինակելի դէպքերը:

*Այս շրջաբերականին կարելությունը այն է, որ Կեդրոնի առաքելության յաջողությունը կը պարտաւորեցնէր անոր գործունէութեան ծիրը հասցնել միջ-գաղութային մասնակցութեան, որուն համար ալ, Արամ Ա. Կաթողիկոս կոչ ըրած է թեմակալ Առաջնորդ Սրբազաններուն, քաջալերել նոր թեկնածուներու ընտրութիւնն ու ապահովութիւնը:*

*Նոյն տրամաբանութեամբ, Կեդրոնի վարիչը՝ Գրիգոր Շահինեան, հանդէս եկած է լրացուցիչ հաղորդագրութեամբ մը, ուր հանրագումարի բերած է առ այդ իրագործուած արդիւնքները, որոնք հանրօգուտ եւ յուսադրիչ ըլլալու բոլոր տուեալները ունին:*



# ԿԱԹՈՂՐԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻՏԱՆՆ ԿՐԼԻԿՈՅ

ԱՆՇՈՒՆԱՍ - ԼԻՌԱՆԱՍ

ԻՒՆ 150/95

Անթիլիաս, ...22...Նոյեմբեր, 1995...

## Շրջաբերական գիր Քրեական Առաջնորդ Սրբազաններուն

Ինչպև գիտէք, ութ սարկներ, ի վեր Մայրավանէէն ներս և Կարողիկոսութեան անմիջական եսկուդարեան տակ կը գործը. Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը:

Իր թ. սարևըջտնի սկզբնաւորութեան, Մանկավարժական Կազմաւորումի այս Կեդրոնը կը ներկայանայ իրրեւ ուրոյն պիմագլծ և սեփական աւանդութիւններ ունեցող կրթական հիմնարկ մը, որ բնական տն եւ զարգացում կ'ապրի:

Ան ունի ներկայիս երկնիւղ ծրագիր մը, որ կ'ապահովը կազմաւորումը մանկա-օլարտէզի վարժաւիկներու եւ նախակրթարանի ուսուցչուիկներու: Ի կարկին կարկի է գբաղիլ նաև երկրորդականի դաստոռներու պատրաստութեամբ, երէ թեկնածուները ունենան համալսարանական մակարդակ:

Այս կազմաւորումը զուտ **մեթոտական** է՝ չիտաչաճեւելու համար աչիտատանքը գալուբիւն ունեցող հայագիտական հիմնարկներու, որոնք գիտելիք կը ջամբն իրենց ուսանողներուն:

Խաչեր Գալուստեան Կեդրոնը ունի նաև **հրատարակչական** տաւեւելութիւն: Մինչեւ 1995 աւ հրատարակած է արդև երկիտայական, մանկական և պատանեկան մարզերու պատկանող 16 պատկերագարչ կատարկներ և հայերկնի մեթոտարանութեան ուղեցույց մը: Հրատարակութեան ստորտոտ հն 5 այլ աշխատութիւններ:

Խաչեր Գալուստեան Կեդրոնի երրորդ տոտեւելութիւնը **ճառագայրումի** աշխատանքն է: Անոր մանկավարժները իրենց նպատարը բերած են հայրենի կրթական նիգին, ինչպև նաև Պէյրութի, Հալէպի, Դամասկոսի եւ Թեկրանի հայկական դպրոցներու աշխատանքին: Մրագրում է զուգահեւ զործուներթիւն մը եւս, որ կրկնակ արտայտութիւն պիտի գանը. թ. տարեշրջանէն սկսելու պիտի բնդուներին եւ մանկավարժական դեկավարութիւն ստանան հայրենիէէն եւ քայր գաղութները, եկող ուսուցչուսուցչուիկներ և կազմակերպութիւն միջ-բնական **սեմինարներ**՝ վարժի վախտանկումի և ուսուցումի կերպի բնդիտնութիւն սկզբունքներու նշլամի նպատակով:

Ուր տարւան բնրացիկն շուրջ 70 հագի անցած 1 այս Կեդրոնէն, բայց բոլորը չին տարտած տնոր երկամեայ բնրացր: Ճամբորդութեան, ամուսնութեան և այլ պատանաներով աւելի Լոն 30 հագի բերի ուսումով և տաւեց վկայականի եւտացած 1 Կեդրոնէն: Վկայում շրջանաւարտներու թիւը, թ. տարևըջտնի սեմին, 36 է՝ յաչորդական 6 հունճներու վրայ բաժնում: Ինչ որ կը նշանակէ, որ միջին հաշուով տարին 6 հագի գացած է ծառայելու հակական զանազան վարժարաններու մէջ:



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

ԱՄԹԻԼՈՍԱ - ԼԻՌԱՍԱՆ

Թիւ 450/95

Անթիլիաս, 22 Նոյեմբեր, 1995

Ներկայիս Կեդրոնի պատասխանատուներու ձգտումն է ունենայ 40 ուսանողուհի, Լասեր՝ մանկապարտեզի եւ Լասեր՝ նախակրթարանի դասընթացներուն համար, իւրաքանչիւր բաժինէն տարին 10 շրջանաւարտ տալու հեռանկարով:

Վերսիշկայ տեղեկութիւններուն աւորերի, կարեւորութեամբ Ձեր ազնիւ ուշադրութեան կ'ուզենք յանձնել հետևեալ կէտերը.-

1.- Վերսիշկայ Կեդրոնին նպատակն է նաև ուսանողներ ունենայ մեր այլ գաղութներէն: Հետեւաբար, եթէ Ձեր բնէն ներս կան ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք պատրաստութիւնը ու պատրաստակամութիւնը ունին հետևելու մանկավարժական Կեդրոնի դասընթացներուն, հանկէ՛ք Ձեր կրթական մարմիններուն համրով անհրաժեշտ ֆայլերու գիմնել:

2.- Կեդրոնի ստաճեղութիւնն է նաեւ գաղութները այցելել եւ հոն տեղւոյն վրայ դասախօսարարութիւններու ու սեմինարներու նամբով օգտակար դատնույ մեր դպրոցներուն:

3.- Ինչպէս վերը յայտնեցինք, Կեդրոնը ունի իր ստաճեղութեան կապուած յատուկ հրատարակարարութիւններու շարք մը: Այս ուղղութեամբ նաեւ ունի հոր ծրագրերը:

Այս բոլոր հարցերուն գծով Ձեր բեմի կրթական մարմինները կրնան ուղղակի կապ պահել Պրն. Գրիգոր Շահինեանին հետ:

4.- Կեդրոնը, յատկապէս վերջին տարիներուն, կը դիմագրաւ հիւրական լուրջ դժուարութիւններ: Հետեւաբար, երբ Ձեր բեմէն ներս կան ուղղակիներ կամ հաստատութիւններ, որոնք նախապէս կ'ուզեն օգտակար ըլլալ այս Կեդրոնի աշխատանքներուն, զոն կը մնանք եթէ այլ ուղղութեամբ գիմնել գործնական ֆայլերու:

Սիրոյ ջերմ ողջունիւ:

Ա.Ա.Մ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԷՍ  
(Կեդրոնի Բ. եւ Գ. հունձքերու)

*6 Մարտ 1992-ին, վկայականներու բաշխման հանդէսին առիթով, երբ վկայուեցան տասը շրջանաւարտուհիներ, եզրափակիչ խօսքը արտասանեց ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Կաթողիկոս, բացման խօսքը՝ Հիմնադրամի Յանձնախումբի ատենապետ՝ Պրն. Ոսկերեան Արզումանեան, իսկ Կեդրոնին խօսքը՝ վարիչ Պրն. Գրիգոր Շահինեան, որոնք լուսարձակի տակ առին Կեդրոնի գործունէութեան գնահատելի հանգրուանները եւ ընդհանրապէս այս մարզէն ներս արձանագրուած կառուցողական իրագործումները:*



ՊՐՆ. ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔ

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը պիտի բոլորէ այս տարի իր գոյութեան վեցերորդ տարին: Հիմնուած 1986ին հանգուցեալ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի ազնիւ կողակիցին եւ զաւակներուն կողմէ, ի յիշատակ իրենց ողբացեալ ամուսնոյն եւ հօր, քաջալերութեամբ եւ սիրայօժար գործակցութեամբ Միծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին, ան իր դռները բացաւ 1987ի Նոյեմբերին, Կաթողիկոսարանի լուսաբաշխ կամարներուն ներքեւ:

Անոր նպատակը ծառայել է հայ աշակերտի դաստիարակութեան եւ ուսուցման նուիրուիլ ուզող երիտասարդ-երիտասարդուհիներուն, առաջադրելով անոնց տալ մանկավարժական համապատասխան կազմաւորում:

Արդարեւ, բոլորիս ալ ծանօթ իրողութիւն է որ չի բաւեր երկրորդական վարժարանէ վկայեալ ըլլալ, գիտելիքներու որոշ պաշար մը ամբարել, կարենալ արդիւնաւէտ կերպով դասաւանդելու համար նախակրթարաններու մէջ, այլ անհրաժեշտ է մասնագիտական ուսումներով եւ փորձառական աշխատանքներով կազմաւորուիլ եւ մանաւանդ սիրել ասպարէզը՝ ի գին զոհողութեան, դիմագրաւելու համար մանուկներու եւ պատանիներու հետաքրքրական, բայց որքան դժուար եւ բազմապահանջ աշխարհը:

“Ինչպէս արձանագործը կամ փորագրիչ արուեստագէտը պէտք ունի ճանչնալու յատկանիշները իրեն յանձնուած մետաղին կամ աստղծին եւ ծանօթացած ըլլալու աշխատանքին համար պահանջուած մասնագիտութեան, կը գրէ նշանանաւոր հեղինակ մը, նոյնպէս ուսուցիչ մը պէտք ունի ծանօթանալու մանուկի հոգեբանութեան, աճող տարիքին համընթաց անոր հոլովոյթին, մտային եւ ֆիզիքական զարգացման փուլերուն եւ մանաւանդ գիտնալու սորվեցնելու ճշգրիտ եղանակը”: Համաձայն ուրիշ հեղինակի մը, “20-րդ դարու Արեւմտեան աշխարհի մանկավարժութիւնը հիմնաւորուած է մանուկին անձին գիտական ծանօթութեան եւ անոր զարգացման վրայ”:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ պետական պարտադրանք է որ բոլոր անոնք որոնք կ’ընդգրկեն ուսուցչական ասպարէզ, ծանօթ ըլլան մանկավարժութեան, որովհետեւ կ’ընդունին որ մարդ անհատը ամենաթանկագին դրամագլուխն է, որուն վրայ պէտք է գորգուրալ ազգովին:

Արդարեւ մարդակերտումի նուիրական գործը, որ կը սկսի տունէն ու կ’ամբողջանայ դպրոցով, ամենակենսական պատասխանատուութիւններէն մէկն է մարդկային ընկերութեան:

Հայ ժողովուրդի գոյատեւման, անոր մշակութային ժառանգի գոյատեւման, անոր մշակութային ժառանգին անվթար պահպանման եւ մեր ընդհանրական տենչերու իրականացման հիմնական կռուաններէն մէկն է հայ դպրոցը:

Տոգորուած այս գաղափարներով, ողբացեալ վաստակաւոր Փրոֆ. եւ բազմերախտ մանկավարժ Խաչեր Գալուստեան մնայուն մտատանջութեամբ կը տազնապէր:

Իր մահէն յետոյ, յարգելով հանգուցեալին գաղափարները եւ իրենք ալ համոզուած

անոնցմով, իր ազնիւ կողակիցը՝ Տիկին Վահուհի Գալուստեան եւ իր աննման զաւակները անձեռնմխելի հիմնադրամ մը յանձնեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, որպէսզի անոր տարեկան եկամուտը յատկացուի հայ ուսուցիչ պատրաստելու նուիրական ծառայութեան:

ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Կաթողիկոսի կողմէ նշանակուած Յանձնախումբ մը, բաղկացած կրթական հարցերու քաջածանօթ անձերէ, կը զբաղի հիմնադրամի մատակարարումով: Անոր մաս կը կազմէ, ցմահ, Տիկին Վահուհի Գալուստեան եւ անոր կը նախագահէ Վեհափառ Հայրապետը:

Նախապատրաստական աշխատանքներէ յետոյ, Յանձնախումբը պատրաստեց ուսուցիչներու մանկավարժական կազմաւորման նուիրուած յատուկ կրթական ծրագիր, գոր գործադրութեան դրաւ, ինչպէս վերեւ յիշեցինք, Նոյեմբեր 1987ին:

Յանձնախումբը կը գործէ օժանդակութեամբ բոլորիս ծանօթ դաստիարակ, համալսարանի դասախօս եւ գրագէտ Պրն. Գրիգոր Շահինեան, որ վարիչ-տնօրէնն է:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը պէտք չէ շփոթել գիտելիքներ բաշխող, ուսում ջամբող այլ հաստատութիւններու, յատկապէս հայագիտական հիմնարկներու հետ, որոնց ծառայութիւնը հայ մշակոյթին ակներեւ է:

Ինչպէս իր անունը ցոյց կու տայ, ան կ'առաջնորդէ տալ ուսանողին “սորվելու եւ սորվեցնելու” եղանակը: Տեսական ուսումներով եւ գործնական աշխատանքներով ան կը միտի ծանօթացնել մանուկը իր ներաշխարհով ու առաջարկել ուսուցման մասնայատուկ եղանակ համապատասխան ընտրուած առարկային, աշակերտի տարիքին եւ անոր հոգեկան ու մտային կառոյցին:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը իւրայատուկ աշխարհ մը չէ: Ան կապուած է այն ասպարեզին, որուն կ'առաջնորդէ իր թեկնածուները եւ այդ իսկ պատճառով կարելի չէ բաւարար կերպով ըմբռնել անոր կարեւորութիւնը առանց նկատի ունենալու ուսուցչական ազնուագոյն ասպարեզը: Արդարեւ, ինչպէս յաճախ կը յիշուի, որեւէ ծառայութիւն այնքան նուիրական չէ որքան ան որ կը սատարէ մարդ անհատի եւ տիպար քաղաքացիի պատրաստութեան ու կը ձգտի հայ մանուկը խարսխել իր իրաւ արմատներուն:

Առաջնորդուած այս տեսլականով, այս Կեդրոնը արդէն իսկ դրական իր համեստ մասնակցութիւնը կը բերէ աճող նոր սերունդներու դաստիարակութեան եւ ուսման, տրուած ըլլալով որ հետզհետէ բազմացող իր շրջանաւարտները իրենց մանկավարժական կազմաւորումը ի սպաս կը դնեն հայ ժողովուրդի կրթական ծառայութեան:

Այս առթիւ պիտի ուզէի ողջունել կրթական հաստատութիւններու պատասխանատուները, որոնց սերտ գործակցութեան պէտք ունինք կարենալ ամբողջացնելու համար մեր ուսանողներու կազմաւորումը:

Կը շնորհաւորեմ նոր վկայեալները, որոնք ի հեճուկս անցեալ տարիներու դժնդակ պայմաններուն, յարատեւ ճիգերով հետեւեցան դասերուն եւ այսօր պիտի ստանան վարձատրութիւնը իրենց արդիւնաւետ ջանքերուն:

Կը շնորհաւորեմ հաստատութեան վարիչ-տնօրէն Պրն. Գրիգոր Շահինեանը, որ

ձեռնահասություններ եւ նուիրումով վարեց զայն, նաեւ ուսուցչական կազմը իր կատարած գնահատելի աշխատանքին համար:

Յարգանքի խօսք ունիմ ողբացեալ ՓրոՖ. Իսաչեր Գալուստեանի յիշատակին, իր ազնիւ Տիկնոջ, Տիկին Վահուհի Գալուստեանի եւ իր զաւակներուն, յատկապէս Պրն. Շահէին, որոնք մնայուն ներկայութիւն եղան հաստատութեան կեանքին մէջ:

Շնորհակալութիւն եւ խոր երախտագիտութիւն կը յայտնեմ Վեհափառ Հայրապետին, որ ոչ միայն սիրայօժար կերպով հաստատութեան տրամադրութեան տակ դրաւ անհրաժեշտ սենեակներն ու սրահները, այլ իր գուրգուրանքին ու հոգածութեան առարկան դարձուց զայն իր քաջալերանքով, իմաստուն ցուցմունքներով ու մշակութային գործակցութեամբ:



## ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝

### ԿԵԴՐՈՆԻ ՎԱՐԻՉ՝ ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Առաջին անգամն է որ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը կը կազմակերպէ վկայականներու բաշխման հարապարակային հանդիսութիւն մը, մեր գաղութի կրթական մարմիններու եւ տնօրէն-տնօրէնուհիներու ներկայութեան: Կ'օգտուիմ այս առիթէն, համառօտ, բայց համադրական զեկուցում մը ներկայացնելու համար այս Կեդրոնի գործունէութեան մասին:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը սկսած է գործել 2 Նոյեմբեր 1987 ին: Այդ օրը տեղի ունեցաւ բացումը Կեդրոնին՝ Վեհափառ Յօր, Տիկին Վանուհի Խաչեր Գալուստեանի եւ Գալուստեան Հիմնադրամի Յանձնախումբի անդամներու ներկայութեան: Նոյն օրը սկսան դասաւանդութիւնները՝ Վեհափառին կողմէ տրուած առաջին դասով:

Այդ օրէն ի վեր անցած է չորս տարեշրջան, անայլայլ եւ անադմուկ գործած ենք Լիբանանեան պատերազմի դժուարին տարիներու ընթացքին, տուած ենք շրջանաւարտներու առաջին սերունդ մը, 14 Դեկտեմբեր 1990ին եւ ահա կը պատրաստուինք բաշխելու վկայականները, ներկայ հանդիսութեան ընթացքին:

1990 ի վերջաւորութեան մենք ունեցանք 6 շրջանաւարտուհի եւ մէկ շրջանաւարտ, Մարութեան Ծովիկ, Յովհաննէսեան Գուրգէն քահանայ, Նորընծայեան Միրէյ, Զիֆճեան Կարինէ, Պետրոսեան Սոնա, Ստեփանեան Յասմիկ եւ Տումանեան Շողիկ: Անոնք բոլորն ալ նուիրուած են ուսուցչական ասպարէզին եւ արդէն իրագործած իրենց յանձնառութիւնը՝ մեր Կեդրոնին մէջ անցուցած ժամանակին չափ պաշտօնավարելու հայկական որեւէ վարժարանի մէջ:

Այսօր կու տանք տասը շրջանաւարտուհի եւս, որոնք կը ծառայեն հայկական զանազան վարժարաններու մէջ.- Գասպարեան Միլվա, Գույումճեան Մարլէն, Դագէսեան Մարալ, Ճանճանեան Էլիզապէթ, Մինասեան Թալին, Մկրտչեան Լիւսի, Շիրիքճեան Թալին, Չափարեան Մարալ, Չոլաքեան Թալին, Տէր Ղազարեան Նելլի: Չորսը՝ երկրորդ հունձքի, վեցը՝ երրորդ:

Մինչեւ հիմա մեր դասերուն հետեւած են մօտ յիսնեակ մը անձեր, որոնք իբրեւ կանոնաւոր ուսանող, ուրիշներ՝ իբրեւ ազատ ունկնդիր: Անոնցմէ շատեր չեն շարունակած իրենց ուսումնառութիւնը՝ ճամբորդութեան բերումով կամ այլ անձնական պատճառներով: Մեր քաղաքականութիւնը եղած է միաժամանակ 15 հոգիէ աւելի ուսանող չունենալ՝ կարենալ կանոնաւոր կերպով հետեւելու համար մեր սաներու կազմաւորումին եւ կազմակերպելու անոնց գործնական աշխատանքները մեր քաղաքի զանազան ուսումնարաններուն մէջ, առանց խանգարելու այս վերջիններուն աշխատանքը:

Կանոնաւոր ուսանողներու ընդհանուր թիւը, մինչեւ հիմա, եղած է 30: Առաջին տարեշրջանին ունեցած ենք ութ հոգի, երկրորդ տարեշրջանին ունեցած ենք 5 նորեր, 1990-91 տարեշրջանին ընդունած ենք 9 դիմողներ եւ 1991-92ին՝ 8 ուրիշներ: Երեք հունձքերու 17 շրջանաւարտներէն զատ ներկայիս ունինք 7 կանոնաւոր ուսանողուհիներ, որոնք իրենց ուսումնառութիւնը կ'աւարտեն գալիք տարեշրջանի վերջաւորութեան: Մինչեւ հիմա 6 կանոնաւոր ուսանողուհիներ կ'էս ձգած են իրենց կազմաւորումը՝ ճամբորդութեան բերումով կամ ընտանիք կազմելու համար:

Եւս պէտք է ըսել որ մեր դասաւանդութիւնը չէ հիմնուած տարեկան ծրագիրի վրայ: Ունինք դասանիւթերու պարտադիր թիւ մը, որ իւրաքանչիւր ուսանող պէտք է առնէ վկայուելու համար: Մէկը կրնայ մէկ տարիէն, ուրիշ մը՝ երեք տարիէն: Ընդհանրապէս երկու տարի է միջինը: Կրթական այս դրուածքին պատճառով՝ մենք բառին բուն իմաստով դասարաններ չունինք, այլ խառն խումբեր, որոնց մէջ հին եւ նոր ուսանողներ կը գոյակցին տարեշրջանի մը կամ կիսամեակի մը ընթացքին: Այս տարեշրջանին սկիզբը, օրինակ, մենք ունէինք 14 կանոնաւոր ուսանողուհի, մինչ երկրորդ կիսամեակի սկիզբէն ի վեր ունինք 7 հոգի միայն, որոնց վրայ կ'աւելնան, անշուշտ, ազատ ունկնդիրներ:

Դասնիւթային այս կառոյցին պատճառով՝ մենք մանկավարժական մնայուն անձնակազմ ալ չունինք: Մեր միակ մնայուն պաշտօնը Կեդրոնի վարիչինն է: Դասախօսները կը գործեն կիսամեայ դրութեամբ եւ մէկ դասանիւթի վերաբերող պայմանագրով: Մինչեւ հիմա մեր հաստատութեան մէջ դասաւանդած են ու կը դասաւանդեն, Վարիչէն զատ, հետեւեալ անձերը.- Վեհափառը, Սեպուհ Օ. Վարդապետ Սարգիսեանը, Օրիորդներ՝ Մանուշակ Պոյաճեանը, Նորա Գասպարեանը, Մարալ Մանճիկեանը, Շադիկ Թորիկեանը, Յասմիկ Շահինեանը եւ Պարոններ՝ Յովհաննէս Մկրտիչեանը եւ Պետրոս Շեմմեսեանը:

Մեր աշխատանքը չի կեդրոնանար միայն Մայրավանք տեղաւորուած մեր հիմնարկութեան մէջ: Ուսանողները դուրս կու գան անկէ՝ դպրոցներու մէջ կատարուող գործնական աշխատանքներու համար եւ դասախօսները՝ մանկավարժական օժանդակութիւն հասցնելու գործակցութեան փափաք յայտնող դպրոցներու: Այսպէս՝ մինչեւ հիմա գործակցած ենք Հալէպի վարժարաններուն հետ, Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդի առաջարկով, Ժըպէյլի Թոչնոց Բոյնին հետ, ինչպէս նաեւ Եդիշէ Մանուկեան եւ Աքսոր Գասարճեան Ազգային վարժարաններուն եւ Բարեգործականի Կարմիրեան վարժարանին հետ: Համակարգուած աշխատանք կատարած ենք նաեւ Համազգայինի Ճեմարանի Մանկապարտիզպանուհիներու դասընթացքին հետ՝ համատեղ դասեր կազմակերպելով Ծաղկաձորի Ճեմարանին եւ մեր Կեդրոնին մէջ: Բաց եղած ենք ու բաց կը մնանք գործակցութեան ամէն տեսակի ձեւերու հանդէպ՝ առանց յարանուանական կամ զաղափարախօսական խտրութեան:

Համահայկական այս քաղաքականութեան բարեբաստիկ արդիւնքները կը վայելենք մեր Կեդրոնին իսկ մէջ:

Այս մթնոլորտի ստեղծումին մեծապէս կը նպաստէ ժողովրդավար մեր գործելակերպը. բոլոր որոշումները կ'առնուին խորհրդակցութենէ ետք եւ համախոհութեամբ: Ուսանողական եռանդամ խորհուրդ մըն ալ, դասախօսներու գործակցութեամբ, կը կազմակերպէ ընկերամշակութային ձեռնարկներ, որոնք կ'ընդլայնեն մեր ուսանողուհիներու մտահորիզոնը եւ կը շեշտեն ընտանեկան բնոյթը մեր Կեդրոնին:

Այս գործելակերպը, անկախաբար սոսկական իր օգտակարութենէն, կը նպաստէ նաեւ մեր կրթական առաքելութեան նպատակայարմար իրագործումին: Մեր կեդրոնին նպատակը գիտելիքներ փոխանցել եւ այդ նպատակը հետապնդող հաստատութիւններու ըրածը կրկնել չէ: Մեզի հասնող անձերը պէտք է արդէն ունենան անհրաժեշտ գիտելիքները, որ երկրորդական վարժարանի ինքզինք յարգող շրջանաւարտ մը կ'ունենայ: Մեր նպատակը այդ գիտելիքները

օգտագործելու կերպը սորվեցնելն է, մանկավարժական վերաբերում մշակելը: Կ'ուզենք այս ձևով նպաստել ստեղծումին գիտակից ու բարեացակամ մանկավարժի տիպարի մը եւ կրթական-ուսուցողական լայնախոհ մօտեցումի մը, որոնց շնորհիւ հետեւողականօրէն բարելաւուի կրթական մեր օճախնեւ մթնոլորտը եւ մակարդակը:

Մենք ունեցած ենք եւ ունինք մեր երեք  
յարանուանութիւններուն պատկանող եւ  
քաղաքական երեք հոսանքներու  
հովանաւորութիւնը վայելող վարժարաններէն եկող  
ուսանող-ուսանողուհիներ, որոնք զուտ ազգային  
հողի վրայ կը հանդիպին ու կը յարաբերին իրարու  
հետ: Մեր Կեդրոնին մթնոլորտը ջերմ է, ազատ ու  
հաղորդական եւ իսկական հաճոյք է տեսնել, թէ  
ի՛նչպէս տարբեր հորիզոններէ եկած հայ  
անհատներ սիրով ու լրջօրէն կը լծուին միասին  
համահայկական նպատակներ հետապնդող  
հաւաքական աշխատանքի:

Ի պահանջեալ հարկին՝ մենք կը զբաղինք դպրոցական բոլոր նիւթերու դասաւանդումի կերպերով, բայց մեզ առաւելաբար կը հետաքրքրէ հայկական նիւթերու դասաւանդումը, այսինքն հայերէնի, հայոց պատմութեան եւ կրօնի դասերուն նպատակայարմար ձեւով ջամբումը: Այս պատճառով ալ տասնեակ մը հիմնական դասանիւթերու կէտը կը վերաբերի այս նիւթերուն եւ մէկ երրորդը՝ զանոնք արդիւնաւոր ու հաճելի դարձնելու կերպերուն:

Խաչեր Գալուստեան հիմնադրամի Յանձնախումբը կը ծրագրէ խորացնել ու բարելաւել քառամեայ փորձառութեամբ ստուգուած մեր ծրագիրը: Արդէն իսկ որոշուած է երկարել գործնական աշխատանքներու յատկացուած ժամանակը եւ կը մտածուի մեթոտաբանական նոր նիւթեր աւելցնել դասանիւթերու ներկայ մեր ցանկին: Երկու նպատակով կազմաւորումի աւելի լայն հնարաւորութիւններ ապահովելու եւ ընտրութեան աւելի մեծ կարելիութիւններ ընծայելու համար մեր ուսանողներուն:

Զուտ կրթական իր գործունէութեան կողքին, Խաչեր Գալուստեան Կեդրոնը լծուած է նաեւ հրատարակչական օժանդակ աշխատանքի մը, որուն պտուղները բոլորս միասին կը քաղենք այսօր գոհունակութեամբ: Վեհափառ Հօր նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ եւ Զարեհ Սրբազանի գործնական եւ բոլորանուէր աջակցութեամբ հրատարակուեցան երեխայական եւ պատանեկան տարիքի պահանջներուն համապատասխանող գրքոյկներ, որոնք մեծ հետաքրքրութեամբ դիմաւորուեցան նոր սերունդին եւ դպրոցական հաստատութիւններու պատասխանատուներուն կողմէ: Հինգ անուն գիրք կայ արդէն հրապարակի վրայ.- Ամիս մը ծովուն վրայ, Սանանին Անապատը, Գիժ Ղազար, Մեր Վազըր, Իմ Գայլը:

Մամուլի տակ են մանկական տարիքի յարմար հատորի մը՝ Տարբեր եւ Կարմիր Ժամուցի վերախմբագրուած մէկ տարբերակը՝ պատանիներուն հասցեագրուած: Ուրիշներ պիտի հետեւին ասոնց եւ յատկապէս՝ շարքը մեր դիւցազնավէպի յաջորդական դրուագները մատչելի դարձնող հատորիկներու:

Միայլ մը գործեցի “հրապարակի վրայ կայ” ըսելաձեւը գործածելով քիչ առաջ: Որովհետեւ այս հատորիկներէն երկուքը սպառած են արդէն, երրորդն ալ սպառելու վրայ է: Անոնք տաք հացի պէս արագօրէն կը ծախուին: Այս պատճառով ալ նոր հրատարակութիւնները քիչ մը աւելի մեծ տպաքանակով կ’իրագործուին եւ տպագրական լուսապատճէնները կը պահուին՝ երկրորդ տպագրութեան մը ի խնդիր:

Քառամեայ մեր իրագործումներուն եւ անմիջական ապագայի բարեփոխութիւններուն համար Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը շատ բան կը պարտի Խաչեր Գալուստեան Հիմնադրամի Յանձնախումբի համերաշխ ու ներդաշնակ գործակցութեան եւ Վեհափառի նիւթական եւ բարոյական անսակարկ աջակցութեան:

Վեհափառ՝ Ն Տէր, Դուք չգոհացած Յանձնախումբը եւ Կեդրոնը ստեղծելով, մօտէն հետեւեցաք եւ ուղղութիւն տուիք երկուքին ալ աշխատանքներուն եւ նախախնամական դեր կատարեցիք Կեդրոնի գոյատեւումին մէջ, պատերազմի դժուարին օրերուն: Մեր ուսանողութեան, մանկավարժական կազմին եւ անձնապէս իմ երախտագիտութեան անկեղծ արտայայտութիւնը գտէք պարզ այն բառին մէջ, որ ամբողջ հոգիովս կ’արտասանեմ հոս. շնորհակալութիւն:

Ժամանակն է որ հիմա դիմեմ ձեզի, սիրելի շրջանաւարտուհիներ: Դուք եւ ես շատ վարժ չենք այսպէս պաշտօնական խօսքեր ուղղելու իրարու: Անցնող ամիսներուն ու տարիներուն ընթացքին մտերիմ գրոյցն էր մեր յարաբերութեան կերպը: Ձեզմէ ոմանք մէկ տարի միայն, ուրիշներ երկու եւ աւելի տարիներ յաճախեցին այս յարկը հաւատարմօրէն: Բացառօրէն զուարթ եղան մեր հանդիպումները, եթէ չհաշուենք պատերազմի պատճառած մտահոգութիւններն ու ցաւերը: Դուք ուրախութիւն պատճառեցիք ձեր դասախօսներուն եւ ինձի, եւ կը կարծեմ ուրախութիւն միայն ստացաք այս յարկին տակ ձեր գոյութենէն: Ես դառնութեան ոչ իսկ ակնթարթ կը յիշեմ:

Մանկավարժութիւնը ճշգրիտ գիտութիւն չէ: Մենք միասին սորվեցանք անոր արուեստանման գաղտնիքները եւ մարդ անհատներու յարաբերութեան բարիքն ու քաղցրութիւնը: Անշուշտ շատ բան ունիք տակաւին սորվելիք, բայց հիմա աւելի պատրաստ էք քան առաջ, ձեր նպաստը բերելու նոր սերունդի առողջ դաստիարակութեան գործին: Սրտանց յաջողութիւն կը մաղթեմ ձեզի: Անձնապէս ձեզի՝ համար, բայց նաեւ, բայց մանաւանդ մեր ազգին, որուն խոնարհ սպասարկուներն ենք մենք բոլորս անխտիր:

Գիտէք արդէն որ քարոզ կարդալը իմ սիրտովս չէ եւ չի համապատասխաներ այս Կեդրոնի սովորութիւններուն: Խորհուրդ պիտի չտամ ուրեմն, մանաւանդ պատգամ պիտի չուղղեմ ձեզի: Ջերմօրէն պիտի խնդրեմ միայ յիշել այս հաստատութեան մէջ տիրող մթնոլորտը, զայն ղեկավարող սկզբունքները եւ եթէ սիրեցիք զանոնք՝ ներշնչուիլ անոնցմէ ձեր մանկավարժական գործունէութեան ընթացքին: Մենք մարդկային իտեալներ կը հետապնդէինք միասին, համագգային մտահոգութիւններ ունէինք եւ մանկավարժական ժողովրդավար սկզբունքներ կը

գործադրելինք: Եթե անոնք կը բաւարարէին ձեզ՝ կրնաք շարունակել ներշնչուիլ անոնցմէ, եթէ ոչ՝ նոր իտեալներ պէտք է փնտռէք, այլ սկզբունքներ պէտք է դարբնէք:

Ձեր նախորդներուն եւ ձեր իսկ փորձէն գիտեմ որ վերջնական բաժանում մը չէ այս պահը: Դուք պիտի շարունակէք գալ այս Կեդրոնը, այցելել ձեր դասախօսներուն, հանդիպիլ ձեր ընկերուհիներուն: Կեդրոնը չէ դադրած, չի դադրիր ձեր տունը ըլլալէ: Եւ համեստ այս արարողութիւնը վախճան մը չէ ինքնին, հանգրուան մըն է ձեր երթին մէջ, որ, կը յուսամ, պիտի ըլլայ երջանիկ եւ օգտակար:

Միրելի հանդիսականներ, ծնողներ, կրթական մշակներ, հանրային գործիչներ, այս տաս օրիորդները ձերն էին ու ձեզի կը վերադարձնենք ահա, քիչ մը աւելի հասուն, քիչ մը աւելի պատրաստ իրենց առաքելութիւնը դիմագրաւելու: Իրենց հետ ձեզ ալ կը շնորհաւորեմ ու կը մաղթեմ որ այս ուրախ պահը դրոշմուի ձեր եւ իրենց յիշողութեան մէջ իբրեւ նոր սկիզբ կեանքի ընթացքին մէջ՝ աւելի մեծ յաջողութիւններու եւ կրթական նոր նուաճումներու հեռանկարով:





ՎԵՀԱՓԱՌ ՀՕԲ ՀԱՅԲԱԿԱՆ ԽՕՍՔԸ

Միրելի՛ ներկաներ,

Նախ, խոր գոհունակությամբ Ես այս վկայականաց բաշխումի պարզ հանդեսին վկան դառնալու ուրախութիւնը կ'ապրիմ: Ասկէ քանի մը տարիներ առաջ, երբ այս գաղափարը՝ հայ դպրոցներու ուսուցիչներու համար մանկավարժական կազմաւորման դասընթացք մը, օճախ մը հաստատելու գաղափարը, Մեր եւ Մեր գործակիցներուն մտքին մէջ ծնունդ առաւ, հաւատացէք տատամտով վերաբերում մը ունէի թէ պիտի յաջողի՝ նք այս գաղափարը կեանքի, գործի վերածել: Շատ փորձեր եղած են անցեալին, բայց չեն յաջողած, կամ մասամբ յաջողած են: Եւ կը խոստովանիմ որ մեր ալ այս փորձը համեստ փորձ մըն է, բայց

իր համեստութեանը մէջ՝ հարազատ ապրումի, հաւատքի եւ ազգին հանդէպ սիրոյ արտայայտութիւն է ան. ոչ թէ սոսկ ինքնապահպանութեան, այլ ազգին զարգացման նախանձախնդրութեամբ է որ կ'արժեւորուի վաստակը այս հաստատութեան:

Բոլորս ալ գիտենք որ մեր հայ դպրոցները քիչ մը ամէն տեղ, նաեւ Լիբանանի մէջ, տազնապի մէջէն կ'անցնին: Տազնապ մը՝ ուր ուսուցումը, կրթութիւնը ի՞նչ շրջագիծի մէջ պիտի տրուին, մեր նոր սերունդը ի՞նչ մշակութային կեանքի, ընկերային կեանքի պայմաններու տակ պիտի աճին, տարբեր քան նախորդ սերունդներուն պայմանները, այս պայմաններուն տակ ինչպէ՞ս պէտք է իրագործուի ուսուցչութիւնը. ա՛յս է հիմնական հարցը եւ այս է մեր հիմնական տազնապը:

Ես կը հաւատամ որ կազմաւորում բառը որ գործածուած է այս Կեդրոնին համար ամենէն ճիշդ բառն է: Կազմաւորումը այն նկարագրին, այն մեթոտին, վերաբերումին, որոնցմով այս երկամեայ դասընթացքէն դուրս եկող ուսանողուհիները, պիտի չըսեմ այսօր ուսանողները, պիտի կարենան այստեղ ստացուածը իւրացուցած տանիլ, բաշխել, նուիրումի՛ գաղափարով:

Ես նոր գրութիւն մը պատրաստեցի Տեառնընդառաջի իրիկունը. եթէ մամուլի մէջ լոյս տեսնէ, կը կարդաք, այլապէս, «ՀԱՄԿ»ի մէջ կը կարդաք. անոր մէջ, շատ հիմնական մտածում մը որ զիս կը չարչրկէր, ջանացի կենդանի ձեռով սելեռումի տակ դնել.- ներկայ դարը, առհասարակ, վարձատրուած պաշտօնի, վճարուած

պաշտօնի, ժամերով հաշուուած աշխատանքի, նիւթական վարձատրութեան հետ կապուած տիրապետող երեւոյթներու դարն է: Եթէ երբեք պահ մը անդրադառնանք որակային տարբերութեանը այն գործին որ մարդ կ'ընէ իր հաւատքով եւ այն գործին որ մարդ կ'ընէ իր հացին համար, անհրաժեշտօրէն, ձեւականօրէն, այն ատեն կը հասկնանք մատնանշածիս իրողութեան իմաստը: Մարդ իր ապրուստը պիտի շահի, հետեւաբար պիտի երթայ կօշկակարութիւն ընէ, ճարտարապետութիւն պիտի ընէ, օրէնսգիտութիւն կամ փաստաբանութիւն կամ բժշկութիւն ընէ, որպէսզի իր ապրուստը շահի. սա մեր վիզին պարտքն է, “ճիտին պարտք”ը. սա մեր գոյութեան հետ կապուած հարց է:

Բայց այն գործը, որուն մէջ անհատական կամ ընտանեկան ապրուստէն անդին՝ արժէք մը կ'իրագործուի, այդ գործին մէջն է, ինծի համար, ամենէն բարձր արժէքը մարդկային կեանքին:

Ինքնընծայում, ո՛չ թէ ձեւին համար, ո՛չ թէ սքեմին համար, ո՛չ թէ անունին համար, ո՛չ թէ Աթոռին համար, ո՛չ թէ դիրքի համար, այլ քու անձնական հաւատքիդ համար, քու անձնական գաղափարիդ համար, քու էութեանդ ճառագայթումին համար: Եթէ ասիկա մեռնի մեր մէջ, պաշտօնային գործունէութեան մը կը վերածուի կեանքը, եւ համը, հոտը, գեղեցկութիւնը եւ իւրայատկութիւնը կը կորսնցնէ:

Հետեւաբար,

ուսուցչութեան մէջ, ինչպէս  
հոգեւորականութեան մէջ, ինչպէս  
արուեստին նուիրումին մէջ, ինչպէս  
մտաւորականութեան մէջ, եթէ այս  
որակային տարրը նուազի, մենք  
արհեստաւորներ կը դառնանք եւ ոչ թէ  
արուեստաւորներ. ու մեր ողբերգութիւնը  
անկէ՛ կու գայ:

Ատոր համար, ես այսօր շատ ուրախ եմ, որ այսպէս տասը հայ օրիորդներ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնէն դուրս գալով, արդէն ոմանք ուսուցչուհի են, որքան կ'իմանամ, կը նուիրուին հայ մանուկին մարդկային եւ ազգային դիմագիծի կազմաւորման, սուրբ գործին:

Կը շնորհաւորեմ զիրենք, կը շնորհաւորեմ իրենց ծնողները. շնորհաւորանքի եւ շնորհակալութեան իմ երկրորդ խօսքս կ'երթայ այս հաստատութեան վարիչին՝ Պրն. Գրիգոր Շահինեանին: Ես իր մէջ միշտ տեսած ու ճանչցած եմ այն ըմբռնումը գործին, որուն մէջ իր անձը կայ եւ ոչ թէ միայն իր շահը, շահ բառը նիւթական իմաստով չեմ ըսեր.-

երբ մէկը իր առաքելութեան մէջ ինք  
իր ամբողջ էութեամբը կայ,  
հաւատացէք այդ գործը անպայման  
երջանկաբեր է եւ նաեւ՝ օգտաբեր:

Կը գնահատեմ նաեւ Ուսուցչական Կազմի անդամները, բոլոր անոնք, որոնք կը դասաւանդեն այս կեդրոնին մէջ: Կը գնահատեմ Յանձնախումբի անդամները, դուք լսեցիք Ատենապետին՝ Պրն. Ոսկերեւրան Արզումանեանին բացման խօսքը. անոր հետ միասին, Գրիգորի կողքին կեցած են Պրն. Հայկ Թիլպեանը, Պրն. Ժիրայր Դանիէլեանը, Օրդ. Մանուշակ Պոյաճեանը, Դպրեվանքի Տեսուչ Հայր Արշալիրը, եւ ալ երբեմն-երբեմն կը նախագահեմ իրենց ժողովներուն եւ իրենց ըրածներէն կ'օգտուիմ ու իմ անունով ձեզի կու տամ...: Ուրիշ խօսքով, մենք այս խումբով կ'ուզենք կենդանի պահել, առաւել գործօն պահել այս Կեդրոնի առաքելութիւնը:

\*

\* \*

Օրիորդնէ՛ր, դուք շրջանաւարտ եղաք, պատիւ առիք, հիմա պատիժը պիտի առնէք ինձմէ, չակերտաւոր “պատիժ”ը, որ օրհնութիւն է. Աստուած երբ անիծեց մարդը եւ ըսաւ քու քրտինքովդ պիտի շահիս հացդ, օրհնութիւն էր այդ անէծքը: Հետեւաբար, հիմա դուք որ այս պատիւին, վկայականին, արժանացաք, կ'ուզեմ որ երթաք եւ այս գաղափարը տարածէք ձեր շրջապատին մէջ, երիտասարդուհիներու, երիտասարդներու, ձեր շրջանակին մէջ: Պիտի գայ ժամանակը, այս խօսքս գոնէ չմոռնաք դուք շրջանաւարտներդ. պիտի գայ ժամանակը նաեւ մեր ազգի կեանքին մէջ, ուր նիւթական առաւելութիւնը, յղփացումի աստիճանին պիտի հասնի եւ պիտի դառնայ ինքն իր թշնամին, ինչպէս Արեւմտեան աշխարհի շատ մը շրջաններուն մէջ ուր հիմա ամէն ինչին տէր ըլլալու, նիւթականապէս բաւարարուած ըլլալու վիճակը կայ, բայց մարդը երջանիկ չէ: Եւրոպայի մէջ, ուրիշ երկիրներու մէջ մարդիկը հոգեկան, իմացական, արուեստի եւ այլ ոգեկան բաներու մէջ սկսած են թուլնալ. բայց կեանքը ամբողջ չի վերածուիր մէկ բանաձեւի մը՝ “կեր, արբ եւ ուրախ լեր”. եթէ ասոր պիտի վերածուինք՝ մարդ չենք:

Կը յիշեմ այս Դպրեվանքին մէջ, օր մը, մեր սքանչելի ուսուցիչներէն՝ Շահան Պերպերեանը, դասարանին մէջ երբ փիլիսոփայութիւն կը դասաւանդէր ու կը խօսէր Հերակլիտէսի մասին, յունական, նախա-Սոկրատեան շրջանի փիլիսոփայի մը մասին, անոր մէկ խօսքը մէջբերելով ըսաւ.- “Հերակլիտէս օր մը աշակերտներուն հետ ձեմած ատենը կանաչութեան մէջ, տեսաւ անդին կովեր, որոնք կ'արածէին. դարձաւ իր աշակերտներուն եւ ըսաւ “ի՜նչ երջանիկ են այս կովերը որ խոտ կ'ուտեն”. բայց երջանիկ են, գոհացած են. պարզապէս հաճոյացած են: Ու ամբողջ տարբերութիւնը մարդուն եւ կենդանիներուն միջեւ, ըստ իս, այն է, որ մարդ էակը երջանկութիւնը կ'ապրի հաճոյքէն վեր հասկացողութեամբ մը, փորձառութեամբ մը:

Հաճոյքը ֆիզիքական, զգայարանական կեանքին հետ կապուած երեւոյթ է. երջանկութիւնը այնպիսի ապրում մըն է, որ մեզ կը կտրէ հողեղինութենէն, յաւերժական արժէքներու հետ կը կապէ եւ մեզի մեր գոյութեան իմաստը կու տայ:

Կեր, իմէ, շքեղ ապարանքի մէջ ապրէ, գիտութեան արդիագոյն պտուղները վայելէ, լաւ, յետոյ ի նշ: Ա յս է կեանքը. եթէ այս է միայն կեանքը, հաւատացէք մարդը մարդ ըլլալէ կը դադրի:

Դուք այս գաղափարին առաքեալները պէտք է ըլլաք: Ըստ իս, ձեր բոլոր սորվածները՝ մանկավարժական մեթոտները, գործնական աշխատանքները եթէ երբէք զսպանակուած չըլլան այսպիսի գաղափարով եւ այսպիսի նախանձախնդրութեամբ, ուսուցչութիւնը կը դառնայ գործ եւ ժամանակով ու շահով սահմանուած աշխատանք: Ես կը յիշեմ մեր ուսուցիչները, հին ուսուցիչները, որոնք երբ տարուած ըլլային դասին մէջ գաղափարներուն, գիտութեան տուեալներով, մեզ կը խանդավառէին. ոչ զանգակի հարց կար, ոչ ալ զբօսանք կը յիշէինք. դպրոցէն դուրս ալ կը կարդայինք եւ անոնցմով մեր դպրոցը կը հարստանար:

Կը ինդրեմ ձեզմէ, սիրելի՛ օրիորդներ, որակային տարբերութիւն մը բերէք, եթէ կ'ուզէք արժեցնել այս մանկավարժական Կեդրոնը. մի՛ ըլլաք շատերուն պէս, քիչ եղէք, որպէսզի շատերը ձեզի պէս ըլլան: Եթէ այս կորսնցնենք մենք՝ կը նշանակէ մենք կորսնցուցած ենք աղը կերակուրին մէջէն, անհամ կը դառնայ մեր ազգային կեանքը:

\*

\* \* \*

Իմ խօսքիս վերջաւորութեան, Ես անգամ մը եւս այս տարի պարտք կը զգամ օրինել յիշատակը այն մանկավարժ նուիրեալ մարդուն՝ անմոռանալի Խաչեր Գալուստեանին, զոր անձամբ ճանչցած եմ, իրեն հետ միասին աշխատած եմ Դարուհի Յակոբեան դպրոցին մէջ ուսուցչութիւն ըրած ատենս, եւ այլապէս նաեւ տեսած եմ որ իրեն համար դպրոց, զիրք, մեթոտ, ուսուցում, երիտասարդութեան հետ շաղախում, ասոնք էին իր հարազատագոյն ապրումները, եւ կրնամ ըսել որ իր երջանկութիւնը գերեզմանէն անդին ալ կը տարածուի եւ երկնքի մէջ ինք երջանիկ է այսօր որ իր անունով մկրտուած այս Կեդրոնին մէջէն կը տեսնէ այսպիսի երիտասարդուհիներու ընծայումը դէպի Հայ դպրոց, դէպի հայեցի կրթութիւն:

Իմ գնահատանքի վերջին խօսքը՝ իր Տիկնոջ՝ Տիկին Վանուհիին, որ թէեւ այժմ կը գտնուի Լոս Անճելոսի մէջ, բայց մօտէն կը հետեւի այս Կեդրոնի գործունէութեան, իր զուակներուն, որոնք կը հետաքրքրուին այս գործով, եւ կը մաղթեմ առաւել տարածուի աշխատանքը թէ՛ իբրեւ ներքին տարողութիւն եւ թէ՛ իբրեւ արտաքին գործունէութիւն:

Շնորհաւորութիւններս ձեր ծնողներուն, եւ ըսեմ՝ “տարուսը ուրիշներուն”:

ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԷՆ՝  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ, 18 ՕԳՈՍՏՈՍ 1999ԻՆ

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը իբրև արգասիք իր վերջին երկու տարիներու անդուլ եւ հետեւողական ճիգերուն, այս տարի եւս կը նուիրէ ուսուցչական ազնիւ ասպարեզին, թէեւ սակաւաթիւ բայց որակաւոր կրթական մշակներ, որոնց մէկ մասը աւարտելէ ետք աւանդական երկամեայ կրթական ծրագիրը պիտի ստանան համապատասխան վկայական, իսկ ուրիշներ աւարտելէ ետք մանկապարտիզպանուհիներու կազմաւորման յատկացուած կրթական ծրագիրը, պիտի ստանան մասնայատուկ վկայական: Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել որ մանկապարտիզպանուհիներու պատրաստութեան նուիրուած անոր աշխատանքները պսակուեցան բացառիկ յաջողութեամբ, քանի որ պետական քննութիւններուն իր ներկայացուցած երեք թեկնածուներն ալ յաջողած են ու պիտի ստանան մանկապարտիզպանուհիներու պետական վկայական:

Ինչպէս գիտէք, այս Կեդրոնը մասնագիտական կեդրոն մըն է, որ կը ձգտի ապագայ ուսուցիչներուն ջամբել մանկավարժական եւ մանուկի հոգեբանութեան առնչուած ընդհանուր գիտելիքներու կողքին՝ ուսուցման մեթոտաբանութիւն, կերպ: Նաեւ ապահովել մանկապարտիզպանուհիներու պատրաստութիւնը:

Արդարեւ, արդի մանկավարժութիւնը կը թելադրէ, որ ուսուցումէ առաջ անհրաժեշտ է նաեւ ճանչնալ մանուկը, պատանին, անոնց յատուկ հոգեբանութիւնը, մանաւանդ որ անոնք յարափոփոխ հոգեբանական, ֆիզիքական, հոգեկան եւ ընկերային վիճակներէ պիտի անցնին դառնալու համար այն իտէալ անհատը, որուն պատրաստութիւնը կը ձգտին բոլոր կրթական ասպարեզին նուիրուող անձերը:

Այսպէս կրթական աշխատանքները չեն ձգտիր միայն ուսում ջամբելու եւ միտքը կառուցանելու, այլ աշակերտին մօտ զարգացնելով անոր հոգեկան արժէքները, անհատականութիւնը, կը միտին հիմնաւորել անոր նկարագրի կազմաւորումը, վերջապէս պատրաստել մարդը, հայ մարդը՝ օժտուած մտային, հոգեբանական եւ բարոյական հաւասարակշռութեամբ:

Պետութիւնը մեծ կարեւորութիւն կ'ընծայէ հոգեբանական եւ մանկավարժական գիտելիքներով օժտուած ուսուցիչներուն սորվեցնելու, նաեւ ուսումը լաւագոյնս փոխանցելու կերպը, որ յատուկ պատրաստութիւն կը պահանջէ:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը, հաւատարիմ իր կոչումին, կը ջանայ այս երկու պահանջներուն գոհացում տալով՝ պատրաստել ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ սկսելով մանկապարտեզէն:

Ան իր ծառայութիւնը ի նպաստ կը դնէ ոչ միայն Լիբանանի կրթական կարիքներուն, այլ նաեւ Լիբանանէն դուրս գալով թեմերու պահանջներուն, երբեմն աշակերտներ ընդունելով արտասահմանէն եւ երբեմն ալ ու յաճախ իր վարիչ տնօրէնին եւ մասնագէտ ուսուցիչներու օժանդակութեամբ երթալով թեմեր հոն ապահովելու համար ակնկալուած օժանդակութիւնը:

Այս Կեդրոնը ուրախ է որ այս ձեւով իր համեստ նպաստը կը բերէ հայ կրթական գործին եւ պատրաստ է տարուէ տարի առաւել եւս օգտագործելու իր կարողականութիւնը ի խնդիր իր առաքելութեան յաջողութեան:

**ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**  
**ԵՒ ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՄԻՋԵԻ**

*Կարելոր նկատուեցաւ այս բաժնին մէջ վերահրատարակել Գարեգին Բ. Վեհափառին եւ Գրիգոր Շահինեանին միջեւ կատարուած նամակագրութենէն նմոյշ մը (այժմ երկուքն ալ հանգուցեալ) ուր անոնք ինչպիսի ~ հոգատարութեամբ կ'անդրադառնան Կեդրոնին տարած մանկավարժական առոյգ գործունէութեան, անհրաժեշտ համարելով զայն պահել ու զարգացնել:*

*Դարձեալ, օգտակար է ծանօթանալ պոլսահայ անուանի բանաստեղծ Զարեհ Խրախունիի մէկ վկայութեան, զոր կատարած էր Կեդրոն այցելութեան առիթով:*

19 Մարտ, 1999

Նիւ Եորք

Սիրելի Գրիգոր,

Հաճելի անակնկալ մը եղաւ ինձի համար ստացումը Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի տասնամեայ գործունէութեան: Համատեսական հայեացքով՝ աստուածահաճոյ եւ ազգակերտական ծառայութիւն մը որ արժանի է մեր բոլորի խոր եւ անվերապահ գնահատանքին:

Բնականօրէն, Կեդրոնի հաստատման եւ տասնամեայ գործունէութեան մէջ շատեր ունին իրենց բաժինը: Բայց ճշմարտութիւնը ամբողջական չ'ըլլար եթէ չաւելցնեմ որ այդ բոլորի մէջ ամէնէն առատ քրտինքը քուկդ է, օգնականներովդ միասին: Շատեր սկիզբը թերահաւատութեամբ ու նոյնիսկ ոմանք հակամարտութեան կեցուածքով նայեցան այս գործին: Բայց փառք Աստուծոյ՝ գործի լեզուն, գործով արտայայտուած ճշմարտութեան ոչ ոք կրնայ անտարբեր կենալ: Վստահ եմ այս տասնամեակը քու կեանքին մէջ եւս կարելոր պահ մը ստեղծեց որմէ միայն երջանկութիւն կրնաս քաղել:

Սիրալիր ողջոյններս Վարիչ Մարմնի անդամներուն, ուսուցչական կազմին եւ ուսանողներուն, ապագային առաւել բեղմնալից արդիւնաւորութեան հեռանդկարով:

Հաճիս Արաքսիին եւ երեք “շնորհ”ներուն (Les Trois Grâces), Շաղիկին, Յասմիկին եւ Նանէին փոխանցել իմ սիրոյ ողջոյնները եւ սրտագին մաղթանքները: Այս տարին տագնապալից տարի մը եղաւ: Երեք արմատական վիրաբուժական գործողութիւններու ենթարկուեցայ. ապաքինումի ընթացքն ալ նուազ տառապալից չէ: Բայց պէտք է տոկալ: Բարեկամներու սէրը, աղօթքը ու մաղթանքը մեծ արժէք ունին ինձ մօտ:

Միշտ սիրոյ ջերմ ողջունիւ

Գարեգին Ա.

Անթիլիաս, 6 Ապրիլ 1999

ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Կաթողիկոս

Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին

Սիրելի Վեհափառ,

Երախտագիտութեամբ ստացայ Ձեր 19 Մարտ 1999 թուակիր նամակը՝ գրուած Նիւ Եորք եւ ուղարկուած Հռոմէն, Արտաւագո Սրբազանի ձեռքով: Ան միաժամանակ ուրախացուց զիս եւ խոովեց: Ուրախացայ կարդալով Ձեր խօսքերը Խաչեր Գալուստեան Կեդրոնին մասին, խորապէս ցաւեցայ տեղեկանալով Ձեր առողջութեան վերաբերեալ մանրամասնութիւններուն:

Շնորհակալ եմ վերջին տասնամեակի մանկավարժական գործունէութեանս մասին կատարած գովասանական Ձեր հաստատումներուն համար: Ոչ ոք պիտի կրնար Ձեզի պէս ճշգրիտ գնահատում կատարել, որովհետեւ ոչ ոք այնքան մօտէն հետեւեցաւ գործին եւ ոչ ոք Ձեզի չափ գործօն մասնակցութիւն բերաւ անոր: Փաստօրէն Խաչեր Գալուստեանը մէկ վարիչ ունէր եւ մէկ գեր-վարիչ ... Եւ իրաւունք ունիք մտածելու թէ այս տասնամեակը երջանկութեան աղբիւր եղաւ ինծի համար:

Հիմա հասած ենք կարելոր հանգրուանի մը. շնորհիւ Արամ Վեհափառի յատուկ կարգադրութեան՝ ձերբագատուած ենք նիւթական մտահոգութիւններէ, ապահոված եմ նաեւ յաջորդութիւնս՝ Կարին Փափազեան-Ջոհրաբեանը տեսչուհի նշանակել տալով: Բայց համակուած եմ մտահոգութեամբ ի տես մեր վարժարաններու նիւթական եւ բարոյական կացութեան: Անցած տարի նախակրթարան մը բոլորովին փակուեցաւ եւ աւետարանական վարժարանի մը երկրորդական բաժինը ջնջուեցաւ: Միւս դպրոցներն ալ խնայողութիւն ընելու սկսան, այնպէս որ շուրջ յիսուն ուսուցիչ-ուսուցչուհի, որոնց մէջ նաեւ մեր շրջանաւարտուհիներէն մէկ քանին, մէջտեղ մնացին: Եթէ այս կացութիւնը շարունակուի, մենք որո՞ւն համար ուսուցիչ պիտի պատրաստենք:

Ձեր հիւանդութիւնը, Վեհափառ Տէր, տխրութեամբ կը լեցնէ զիս եւ Ձեր քաջութիւնը՝ հիացումով: Բայց պիտի նախընտրէի ոչ հիանալ եւ ոչ ալ տխրիլ: Անցած զարնան, ամէն բանէ անտեղեակ, փորձեր էի տեսնել Ձեզ, երբ Երեւան էի: Ձեր գաւազանակիրը ըսաւ թէ երկիրէն դուրս կը գտնուիք: Արշալիր Գաբունճեանն ալ իմացուց որ հիւանդ էք: Բայց այն ատեն միտքէս իսկ չանցաւ որ տարի մը ետք պիտի հարկադրուիք գրաւոր փոխանցել Ձեր խօսքը, Դուք որ վարպետն իսկ էք բանաւոր արտայայտութեան:

Ամբողջ հոգիով կը մաղթեմ որ կասի աւերը հիւանդութեան ու Դուք վերագտնէք կարողութիւնը Ձեր կենդանի խօսքով հմայելու մեզ, ինչպէս անցեալին: Կը գրէք թէ “բարեկամներու սէրը, աղօթքն ու մաղթանքը մեծ արժէք ունին” Ձեզի համար: Երանի՜ նաեւ ազդեցութիւն ունենային այլապէս:

Սիրով ու յարգանքով՝

Գ. Շահինեան

ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ՝  
ԶԱՐԵՆ ԽՐԱԽՈՒՆԻՒ ՎԿԱՅՈՒԹԵՆԷՆ

Այն կարենոր հաստատութիւնը, որուն ակնարկած էի դասագիրքերու յատկացուած Զ. յօդուածիս մէջ, եւ որուն կ'ուզէի անպայման բոլոր բանիմաց ու կրթասէր հայ մարդոց ուշադրութիւնը սեւեռել, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի շրջափակի շէնքերէն մէկուն մէջ հաստատուած Խաչեր Գալուստեան Կազմաւորումի Կեդրոնն է:

Ահաւասիկ հակիրճ պատմականն ու ներկայի յստակ պատկերը այս յոյժ օգտակար, նոյնիսկ կարելի է ըսել՝ անզանցառելիօրէն անհրաժեշտ հաստատութեան, որուն կարենորութիւնը չի սահմանափակուիր տեղական-համայնքային հանգամանքով: Թերեւս իր միակ «թերութիւն»ը՝ համասփիւրքեան առումով նուազ ծանօթացուած ըլլալն է, որուն «մեղք»ը հաւանօրէն վարիչ տնօրէնին վզին կ'իյնայ, քանի որ Գրիգոր Շահինեանը ճիշդ ինծի-մեզի պէս մէկն է...: Ճեմարանցի ըլլալով հանդերձ Միախարեանցիի մը նման չափ ու կշիռի, չափաւորութեան ու կշռոյթի մարդ է, որ կը խորշի ծանուցումէ ու ցոյցէ, կը սիրէ լռիկ-մնջիկ աշխատանքն եւ «Անձայն ու խորունկէն» յառաջխաղացումը, որուն արդիւնքն է որ ի վերջոյ հանգամանօրէն պիտի խօսի գործին որակին եւ տարողութեան մասին, եւ ո՛չ թէ ապսպրանքի վրայ գրուած դրուատիքը կամ վճարովի գովազդը: Հայկական նախակրթարաններու եւ մանկապարտէզներու ուսումնական եւ դաստիարակչական մակարդակի բարձրացման նախանձախնդիր ամէն ոք եւ մանաւանդ ամէն կրթական պատասխանատու, ի՛նչ համայնքի, հատուածի կամ յարանուանութեան ալ պատկանած ըլլայ, պարտաւոր է ինքնաբերաբար հետաքրքրուիլ Խաչեր Գալուստեան Կեդրոնով եւ այնտեղ տարուած մանկավարժական կազմաւորման ու վերաորակաւորման աշխատանքով:

Խաչեր Գալուստեան Կեդրոն այցելութիւնս բաւական ուշ՝ Պէրութէն մեկնումիս մօտ տեղի ունեցաւ: Ըստ ժամադրութեան՝ երկու շնորհալի օրիորդներ, իրեցմէ մէկուն կառքով զիս առաջնորդեցին կաթողիկոսարան: Կեանքիս մէջ երկրորդ անգամ ըլլալով (առաջինը յիշողութեան մէջ մշուշոտած էր արդէն) կը մտնէի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի մեծավայելուչ շրջափակէն ներս եւ կը շնչէի վանատան մը իրիկնադէմի վեհաշուք մթնոլորտը. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը, քովը՝ Նահատակաց Մատուռը եւ Կիլիկեան Կաթողիկոսներու դամբարանը, դիմացը՝ Վեհարանը հայադրոշմ շքեղութեամբ եւ անոր ձախին՝ նորակառոյց գեղակերտ Թանգարան-Գրադարանը, որուն պաշտօնական բացումը դեռ չէ կատարուած:

Իր ամէն ինչով խիստ տպաւորիչ Մայր Տաճարին մէջ ուխտս եւ աղօթքս ընելէ ետք եւ Վեհարան ու Թանգարան այցելութիւնը տարբեր առիթի ձգելով, կ'ուղղուիմք դէպի Խաչեր Գալուստեան Կեդրոն, որ թանգարանին գրեթէ կից՝ բաղդատաբար հին շէնքի մը մէջ հաստատուած է: Զիս կը դիմաւորեն Կեդրոնի վարիչ-տնօրէն Գրիգոր Շահինեան, դասախօս-ուսուցչուհիներ եւ քսանէ աւելի ուսանողուհիներ, որոնք շրջանակի կը նստին պարզօրէն կահաւորուած սրահի մը մէջ: (...)





Պրն. Գրիգոր Շահինեան կը զեկուցէ. կողքին՝ Վեհափառ Հայրապետը, Ոսկերեքեան Արգումանեանը եւ Ժիրայր Դանիէլեանը



Կը զեկուցէ Ոսկերեքեան Արգումանեան. կողքին՝ Վեհափառ Հայրապետը, Ժիրայր Դանիէլեանը եւ Գրիգոր Շահինեանը

## ՅԱՐԱՏԵԻ ՈՒՍԱՆՈՂ, ՅԱՐԱՏԵԻ ՍԵՐՄՆԱՑԱՆ

*Կեդրոնի Յանձնախումբի ատենապետ՝ Պրն. Ժիրայր Դանիելեան, հակիրճ ուրուագիծ մը տալէ ետք Կեդրոնի կազմութեան մասին, կ'արժեւորէ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի մանկավարժական գործընթացին հանգրուանները:*

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը կը գտնուի իր հիմնադրութեան 25-ամեակի վաղորդայնին:

Կեդրոնի քսանամեակի առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը իր հայրապետական օրհնութեան խօսքին մէջ կը նշէ.- “Յիշել կը նշանակէ նաեւ գնահատել. կատարուած գործ մը գնահատել կը նշանակէ մտածել կատարելիքին մասին”:

“Յիշել”ը սակայն կը կազմէ առանցքը Արամ Ա. Վեհափառի խօսքին:


Ուրեմն՝ յիշենք:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի յղացման գաղափարը ծնունդ կ'առնէ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի անակնկալ ու անժամանակ մահէն (5 Դեկտեմբեր 1985) անմիջապէս ետք: Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ հանգուցեալ Փրոֆ. Գալուստեանի կնոջ եւ զաւակներուն նախաձեռնութեամբ, ու գործակցութեամբ կը ծրագրուի Կեդրոնի մը կազմութիւնը: Հիմնադրութեան աշխատանքներուն կը ձեռնարկուի 1986ի Փետրուարին, իսկ անոր կրթական գործունէութիւնը կը սկսի 1987ի Նոյեմբերին:

Փրոֆ. Խաչեր Գալուստեան, յուշագրական գրութեան մը մէջ, կ'ըսէ.

“Մարդուն յիշողութիւնը հարուստ շտեմարան է անցեալի լաւ եւ վատ օրերու, աղբիւր՝ ճշգրիտ պատմութեան, իմաստալից փորձառութեան եւ ապագայ կենցաղի”:

Ուրեմն՝ շարունակենք յիշել:



Ան ծնած է Մարաշ, 22 Հոկտեմբեր 1915ին, ճիշտ այն տարին, երբ ամբողջ Արևմտահայաստանի եւ Կիլիկիոյ հայութիւնը կ'ենթարկուէր անասելի եղեռնագործութեան, կ'ենթարկուէր քսաներորդ դարու առաջին ծրագրուած ցեղասպանութեան, որուն զոհերէն կ'ըլլան նաեւ Խաչեր Գալուստեանի մայրը, նշանուած քոյրն ու երէց եւ փոքր եղբայրները: Հայրը, թրքական բանակի զինուոր, կը գտնուէր Պաղեստինի ճակատը: Իսկ ինք՝ Մարաշի գերմանական Պէյթ-Շալըմ որբանոցը: Այդ պատճառով ալ կը փրկուի համատարած ջարդէն: Երեքէն մինչեւ տասնմէկ տարեկան՝ կը համտեսէ որբերու վիճակուած դառնութիւնները, նախ Պէյթ-Շալըմի որբանոցը, ապա՝ Նիր Իսթ Ռիլիֆի Ճիպէլի որբանոցը, դառնալով 'Մանկութիւն չունեցող մարդիկ' ներէն մէկը:

Որբանոցային կրթութենէն ետք, ուսումնառութիւնը կը շարունակէ Հալէպի Հայ Աւետ. Բերէլ վարժարանին, իսկ երկրորդական ու Կրտսեր գոլէճինը (Սոֆոմոր)՝ Հալէպի Ամերիկեան գոլէճի (Ալեփօ գոլէճ) մէջ, զոր կ'աւարտէ 1932ին:

Պատկերացուցէք. հազիւ 17 տարու, շրջանաւարտ Ալեփօ գոլէճէն, կը նուիրուի ուսուցչական ասպարէզի:

1932-1938՝ կը պաշտօնավարէ Հալէպի Կիլիկեան վարժարանին մէջ:

1938-1942՝ Թրիփոլիի Ամերիկեան Մանչերու Երկրորդական վարժարանին (Tripoli Boys School – T.B.S.) մէջ:

1942-1944՝ Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ կը հետեւի Մանկավարժութեան եւ Քաղաքական Գիտութիւններու դասընթացքներուն եւ կը ստանայ Պսակաւոր Արուեստից (B.A.) վկայականը:

1944-1953՝ տնօրէն Պէյրութի Հայ Աւետարանական Բարձրագոյն վարժարանին, որ, իր օրով, 1949-ին, Ֆրէշմէն եւ Սոֆոմոր դասարաններու յաւելումով, կը կոչուի Հայ Աւետարանական գոլէճ եւ կը ճանչցուի Ամերիկեան համալսարանէն: Այս դասարաններուն հիման վրայ է, որ 1955ին ծնունդ կ'առնէ Հայկազեան գոլէճը:

1958ին՝ Ամերիկեան համալսարանէն կը ստանայ Մագիստրոս Արուեստից (M.A.) վկայականը՝ հետեւելէ ետք մանկավարժական յառաջացեալ դասընթացքներու (Մանկավարժութիւն, Դաստիարակչական Հոգեբանութիւն, Մանկավարժական Իմաստասիրութիւն):

1953-1960՝ տնօրէն ՀԲԸՄիութեան Դարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական վարժարանի:

1960-1964՝ տնօրէն Կիպրոսի Մելգոնեան Կրթական հաստատութեան:

Այն բոլոր վարժարաններուն մէջ, ուր տնօրէնի պաշտօն վարած է, ան հետամուտ եղած է զարգացնելու եւ զօրացնելու գրադարաններն ու տարրալուծարանները եթէ գոյութիւն ունեցած են, կամ ալ ստեղծած է զանոնք, եթէ գոյութիւն ունեցած չեն: Գիտակցած է անոնց կենսական կարեւորութեանը նախահամալսարանական կրթութեան մէջ:

1964-1966՝ երբ յիսուն տարու է արդէն եւ իր զուակներէն մին արդէն համալսարանաւարտ եւ երկրորդ մը՝ համալսարան ւարտելու սեմին, Խաչեր Գալուստեան, ծարաւի յաւելեալ ուսումի, ինքզինք վերանորոգելու մարմաջով, կը յաճախէ Տիլատելֆիոյ Temple համալսարանը, ուր կը տիրանայ դոկտոր-փրոֆեսոր կոչումին:

1966-1975՝ տասնամեակ մը ամբողջ իբրև տնօրէն կը պաշտօնավարէ Հայկազեան գոլէճի մէջ, իր իսկ նախաձեռնութեամբ եւ գոլէճի կախազահութեան քաջալերանքով կեանքի կոչուած Գիշերային գոլէճին, Հայ Ուսուցչանոցին, Ամառնային գոլէճին, առիթ ստեղծելով բազմաթիւ ուսուցիչներու, նաեւ տնօրէններու, որ շարունակեն մանկավարժական իրենց ուսումը եւ ստանան համապատասխան Պսակաւոր Արուեստից վկայական:

Փրոֆ. Գալուստեան, հեռատես ու գիտակից մանկավարժ ու դաստիարակ, ունէր նաեւ աւելի երագներ, ծրագիրներ, որոնցմէ էր մանաւանդ՝ ունենալ սեփական իր վարժարանը:

1974ին, անհուն զոհողութիւններով, յաջողեցաւ իր երագ-ծրագիրներէն գէթ մէկուն մարմին տալ, երբ իր ընտանիքի անդամներուն հետ, եւ կարգ մը անկեղծ բարեկամներու քաջալերանքով, Պէյրութի մօտ 250 մէթր բարձրութեան վրայ գտնուող Ֆանարի շրջանի ծովահայեաց պուրակի մը մէջ բարձրացուց իր սեփական երկրորդական վարժարանը՝ Գալուստեան Համապարփակ Կրթական Հաստատութիւն (Kaloustian Comprehensive Educational Institute) անունով, որ կ'ընդգրկէր մանկամտօրէն մինչեւ պաքալորիայի Ա. Եւ Բ. դասարանները, գիշերօթիկի բաժինով մը:

1974ին, երբ մօտալուտ էր Գալուստեան Համապարփակ Կրթական հաստատութեան Ա. տարեշրջանի մեկնարկը, Խաչեր Գալուստեան, թերթի մը տրուած հարցազրոյցի մը մէջ կ'ըսէր.

“Դասական դպրոցները ընդհանրապէս որոշ քննութեան մը կը պատրաստեն [աշակերտները]: Մեր դպրոցին նպատակը պիտի ըլլայ՝ այդ քննութիւնները պատրաստելով հանդերձ, [աշակերտին] անհատական կարողութիւնները եւ հետաքրքրութիւնները քաջալերել աստիճանաւորուած եւ ոչ-աստիճանաւորուած դասաւորումներով”:

Կրթական առաջին տարեշրջանի աւարտէն առաջ, 13 Ապրիլ 1975ին բռնկեցաւ Լիբանանը ալեկոծող 15-ամեայ պատերազմը: Այլոց կարգին, վարժարանը փորձեց գոյատեւել անբարենպաստ պայմաններու մէջ: Դիմագրաւեց փորձանաւոր բազմապիսի պահեր: Հազիւ տոկաց եօթը տարեշրջան: Բազմաթիւ ուրիշ երագներու եւ ծրագիրներու հետ, փուլ եկաւ նաեւ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի տասնեակ տարիներով փայփայած այս հոյակապ երագ-ծրագիրը՝ նորածին Գալուստեան Համապարփակ Կրթական Հաստատութիւնը:

\*

\* \*

Եթէ Լիբանանի երկարամեայ պատերազմը քանդեց շատ բան, պատճառ դարձաւ, ի միջի այլոց, փակելու բազմաթիւ հայ վարժարաններ, միւս կողմէ սակայն, նոյն այդ թէժ տարիներուն, 1987ին, Անթիլիասի շրջափակէն ներս կեանքի կոչուեցաւ

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը, Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Գալուստեան ընտանիքի համատեղ ջանքերով: Ստեղծումովը այդ Կեդրոնին՝ իրականացաւ երազներէն մէկն ալ տեսլականի տէր Փրոֆ. Գալուստեանին, որ այնքա՛ն կարեւորութիւն կը ցուցաբերէր Ուսուցչանոցի մը գոյատուրին:

Գարեգին Բ. Կաթողիկոսին հրաւերին ընդառաջող անձերով՝ 14 Փետրուար 1986-ին կազմուեցաւ Խաչեր Գալուստեան Հիմնադրամի Յանձնախումբը՝ նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ հետեւեալներուն.-

- Պրն. Ոսկեբերան Արզումանեան (ատենապետ)
- Տիկին Վանուհի Գալուստեան (ընտանիքի ներկայացուցիչ)
- Պրն. Հայկ Թիլպեան (ատենադպիր)
- Հայր Արշաւիր Գաբուճեան (խորհրդական)
- Պրն. Գրիգոր Շահինեան (խորհրդական)
- Պրն. Ժիրայր Դանիէլեան (խորհրդական)

Երբ Պրն. Շահինեան նշանակուեցաւ Կեդրոնի վարիչ, իբրեւ խորհրդական, զինք փոխարինեց Օրդ. Մանուշակ Պոյաճեան:

Այսօր վերոյիշեալներէն չկան երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոսը, առաջին ատենապետը՝ Ոսկեբերան Արզումանեանը, ընտանիքի ներկայացուցիչ Տիկին Վանուհին, առաջին ատենադպիր Հայկ Թիլպեանը, Կեդրոնի առաջին վարիչ Գրիգոր Շահինեանը, որ աւելի քան քսան տարի ձեռնհասօրէն ու ամբողջական նուիրումով փարեցաւ գործին:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ ու քաջալերանքով կը շարունակէ իր արդիւնաւոր գործունէութիւնը Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը: Հիմնադրամի Յանձնախումբի ընդմիջտ հեռացած անդամներուն տեղ Վեհափառը նշանակած է նորերը, որոնք իրենց նախորդներու օրինակով կը շարունակեն ծառայել՝ զօրակցելով Կեդրոնի նոր վարիչին՝ Պրն. Կարօ Յովհաննէսեանին եւ ուսուցչակազմին:

Խաչեր Գալուստեան մանկութեան տարիներէն մինչեւ հասուն տարիքը եղաւ աշակերտ, ուսանող, յարատեւօրէն մնաց ուսանող, շարունակեց ուսանիլ. ամբարել նոր գիտելիքներ, անոնցմով հարստացնել ինքզինք: Այդ գիտելիքները, մշտանորոգ գիտելիքները, 17 տարեկանէն սկսեալ առատօրէն բաշխեց հազարաւոր աշակերտներու, դժուարութիւնները մնայուն կերպով դիմաւորելով իրեն յատուկ ժպիտով:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին շնորհիւ՝ ան կը շարունակէ ի վերուստ իրեն պարգեւուած առաքելութիւնը: Նոյն այդ Կեդրոնին շնորհիւ կը շարունակէ ապրիլ Խաչեր Գալուստեան յարատեւ ուսանողը ու յարատեւող սերմնացանը:

*ԿԵԴՐՈՆԻ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏ՝*

*ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ*





KALOUSTIAN COMPREHENSIVE  
EDUCATIONAL INSTITUTE (KCEI)  
FANAR-JDEIDET EL METN - LEBANON

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ  
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ (ԳՀԿՀ)  
ՖԱՆԱՐ - ԺՏԷՅՏԷԹ ԷԼ ՄԵԹՆ - ԼԻԲԱՆԱՆ



Պէրոյի ըն ծովեզերքը Հաստատութենէն դիտուած



ԱՐԺԵԻՈՐՈՒՄ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ  
ՇԱՀԻՆԵԱՆԻ ԲԵՐԱԾ ՆՊԱՍՏԻՆ  
ԱՅԺՄՈՒ ՎԱՐԻՉ՝ ՊՐՆ. ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

*Կեղրոնի այժմու վարիչը՝ Կարօ Յովհաննէսեան, արժեւորումը կը կատարէ իր նախորդին՝ հանգուցեալ Գրիգոր Շահինեանի բերած նպաստին, ոչ միայն իր պատասխանատուի հանգամանքով ու գործօն դերակատարութեամբ, այլեւ՝ ընդհանրապէս իբրեւ մարդ, մանկավարժ, գրականագէտ, հեղինակ եւ ազգային-մշակութային գործիչ:*

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ  
(1930 – 2009)

ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԸ

Գրիգոր Շահինեան ծնած է 13 Նոյեմբեր 1930ին, Պէյրութ: Հինգ տարեկանին իր ծնողներուն հետ կը փոխադրուի Դամասկոս: 1936ի վերամուտին կը սկսի յաճախել Դամասկոսի Ազգային Սահակեան նախակրթարանը, որուն ընթացքը աւարտած է 1943ին: Ապա կը յաճախէ Դամասկոսի մարիսթ վարդապետներու ֆրանսական վարժարանը:

1945ին Գրիգոր Շահինեան իր ծնողներուն հետ կը վերադառնայ Պէյրութ եւ նոյն տարուան վերամուտին կը սկսի յաճախել Համազգայինի Ճեմարանը, զոր կ'աւարտէ 1949ին: Կը մեկնի Պրիսթել եւ իր ուսումը իբրեւ Ճեմարանի սան կը շարունակէ տեղւոյն Ազատ համալսարանին (Université Libre de Bruxelles) մէջ. կը մասնագիտանայ գրականութեան եւ մանկավարժութեան մէջ՝ տիրանալով Պսակաւոր Արուեստներու եւ ուսուցչական վկայականներու (1956):

1979ին կը տիրանայ դոկտորականի Փարիզի Սորպոն համալսարանի գրականութեան բաժինին մէջ իբրեւ աւարտաճառ պաշտպանելով Շահան Շահնուրի ստեղծագործութիւնը: Երկրորդ դոկտորականի կը տիրանայ 1994ին Երեւանի Պետական համալսարանին մէջ, նոյն նիւթին մասին: Ուրեմն, երկու դոկտորական: Բայց ոչ մէկ ատեն ուզեց ճանչցուիլ “փրոֆեսօր” կամ “դոկտոր” տիտղոսներով: Կը ծիծաղէր բոլոր անոնց վրայ, որ այդ տիտղոսներով կ'ուզէին մակարդակ տալ իրենց մտաւորականի խեղճութեան: Ինք “պարոն” էր միայն, Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեղրոնին մէջ՝ “վարիչ” (իր բառն է):

\*  
\*   \*  
\*

Բազմակողմանի եւ հարուստ է Գրիգոր Շահինեանի կրթական, մշակութային, գրականագիտական եւ հրատարակչական վաստակը, որ կը տարածուի աւելի քան յիսուն տարուան վրայ: Անոր հիմնական զբաղումը եղած է ուսուցչութիւնը: Պաշտօնավարած է Համազգայինի Նշան Փալանճեան Ճեմարանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքին, Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեղրոնի եւ ոչ-հայ վարժարաններու մէջ:

Դասաւանդած է հայ եւ ֆրանսական գրականութիւն, մանկավարժութիւն եւ մանկավարժութեան յարակից դասանիւթեր: Դասախօսի պարտականութիւններ ստանձնած է Լիբանանի եւ Հայաստանի համալսարաններու, ինչպէս նաեւ Հայկազեան Քոլէճի (համալսարան) մէջ:

Հայաստանի վերանկախացումէն ետք, արեւմտահայ գրականութեան եւ յատկապէս Լեւոն Շանթի գրականութեան մասին կարճ դասընթացքներ վարած է Երեւանի Պետական համալսարանին, Արցախի Պետական համալսարանին եւ Հայաստանի Ամերիկեան համալսարանին մէջ: Հայերէնի դասեր տուած է Վենետիկի մէջ կազմակերպուած ամառնային դասընթացքներու ծիրին մէջ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն, յատկապէս առաջին շրջանին, ունեցած է մանկավարժական երկու փորձառութիւն՝ Առժամեայ վարժարանը եւ Շրջուն դպրոցը:

\*  
\*   \*   \*

1987ին հիմը կը դրուէր Անթիլիասի Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին: Շահինեան ստանձնած է ղեկավարութիւնը այս Կեդրոնին քսան տարի շարունակ (1987-2007): Այս ժամանակաշրջանին Կեդրոնը տուած է աւելի քան հարիւր շրջանաւարտ, որուն շուրջ 70-ը ստացած են նաեւ Լիբանանի պետական պաշտօնական BT-ի եւ TS-ի վկայական: Այսօր, գրեթէ բոլոր շրջանաւարտներն ալ կը պաշտօնավարեն Լիբանանի եւ Սփիւռքի հայկական վարժարաններու մէջ: Անհրաժեշտ է հաստատել, որ քսան տարուան ընթացքին Կեդրոնի դասախօսական կազմը, պաշտօնէութիւնը ունեցած են ներդաշնակ եւ համերաշխ գործունէութիւն:

Ոչ իսկ մէկ կարգապահական պարագայ  
արձանագրուած է այնտեղ՝ շնորհիւ  
փոխադարձ յարգանքի եւ փոխադարձ  
զիջողութեան սկզբունքին, այլ մանաւանդ  
ընտանեկան ջերմ մթնոլորտին: Երեւոյթ մը,  
որ արդիւնք է Շահինեանի վարուելակերպին  
եւ մանկավարժական մօտեցումին:

Էովին կը հաւատար հայալեզու մանկապատանեկան գրականութեան: Իր նախաձեռնութեամբ սկիզբ առած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայաստանեայց Եկեղեցոյ Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի եւ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի մանկապատանեկան մատենաշարը, որուն հատորներուն մեծ մասին կա'մ հեղինակն էր, կա'մ պատշաճեցնողը եւ կամ հրատարակութեան պատրաստողը:

\*  
\*   \*   \*

Շահինեան դասախօսութիւններ տուած է Լիբանանի, Հայաստանի եւ հայկական Սփիւռքի տարբեր գաղութներու մէջ՝ ընդառաջելով միութիւններու հրաւերներուն: Չէ ունեցած գաղափարական, յարանուանական կամ միութենական խտրականութիւն: Նմանօրինակ գործուղումներ եւ ուղեւորութիւններ ունեցած է մանկավարժական-կրթական նպատակներով՝ Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութները, նեռարեալ Պոլիսը:

Շահինեան ստանձնած է վարչական պատասխանատուութիւններ: Եղած է Համազգայինի Կրթական եւ Մշակութային Միութեան Լիբանանի Շրջանային Վարչութեան տարիներու անդամ եւ ատենապետ: Այդ օրերուն, հակառակ Լիբանանի քաղաքացիական պատերազմի սարսափին, քանդումներուն եւ մահասփիւռ ռումբերուն, տեսիլքը ունեցած է Համազգայինի Լեւոն Շանթ Կեդրոնի շէնքի ծրագրին: Աւելի՛ն. անդուլ հետապնդումով սատարած է այդ ծրագրի իրագործման, որովհետեւ ողջ էութեամբ եւ ամբողջական արիւնով կը հաւատար այս Կեդրոնի մշակութային առաքելութեան եւ բարերար դերակատարութեան մեր հաւաքական կեանքին մէջ: Տեղին է այստեղ հաստատել, որ իր եւ իր նմաններու աշխատանքին արգասիքը եղող այս Կեդրոնի զանազան բաժիններուն մէջ – երգչախումբ, պարարուեստ, երաժշտութիւն, նկարչութիւն – այսօր կը յաճախեն աւելի քան հազար տղաք եւ աղջիկներ:

Շահինեան մահացած է Պէյրութ, 15 Փետրուար 2009ին:

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շահինեանի հրատարակութիւնները կ'ընդգրկեն աւելի քան տասնհինգ գրականագիտական գիրք եւ մենագրութիւն, երեք մանկավարժական ուղեցոյց-գրքոյկ, երկու պատանեկան գրքոյկ եւ ինքնակենսագրական մը: Մանկավարժական պատշաճեցում կատարած է աւելի քան քսան գիրքի: Ըրած է թարգմանութիւններ:

Շահինեանի գրական աշխատանքը կը դասաւորուի հետեւեալ ձեւով.

#### Ա. ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահինեան աշխատակցած է հետեւեալ օրաթերթերուն.

“Այգ” (Պէյրութ),

“Ազդակ” (Պէյրութ),

“Յառաջ” (Փարիզ),

“Յուսարեր” (Գահիրէ),

“Մարմարա” (Պոլիս),

“Ասպարէզ” (Լոս Անճելըս),

Աշխատակցած է նաև հետեւեալ հանդէսներուն.

“Ակօս” (Պէյրուօ),

“Բազին” (Պէյրուօ),

“Տիրասաթ” (Պէյրուօ),

“Գարուն” (Երեւան),

“Սովետական Արուեստ” (Երեւան),

“Նորք” (Երեւան),

“Հայրենիք” (Պոսթըն),

“Հորիզոն” (Մոնթրէալ),

“Cahiers Bleus” (Թրու),

“Հասկ հայագիտական հանդէս” (Պէյրուօ),

“Հայկազեան հայագիտական հանդէս” (Պէյրուօ):

Շահինեան խմբագրած եւ ղեկավարած է  
“Ահեկան” գրական-մշակութային  
եռամսեայ հանդէսը, որուն շուրջ  
յաջողած է համախմբել գրողներ ու  
արուեստագէտներ: “Ահեկան” ի ճամբով  
յաջողած է ստեղծել գրական շարժում:

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահինեան հրատարակած է հետեւեալ գիրքերը.

Համաստեղ (մենագրութիւն), Պէյրուօ, 1961:

Հատընտիր (վերլուծումներ), Պէյրուօ, 1962:

Գուրգէն Մահարի վաթսունի հանգրուանին, Պէյրուօ, 1964:

Հանդիպումներ (գրադատական յօդուածներ), Պէյրուօ, 1966:

Ձիւներն ի վեր (մենագրութիւն Լեւոն Շանթի մասին), Պէյրուօ, 1967:

Drame et poesie de l'exil dans l'oeuvre d'Armen Lubin, Անթիլիաս, 1979:

Panorama de la litterature arménienne, Անթիլիաս, 1980:

Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն Շահան Շահնուրի, Անթիլիաս, 1981:

Շահան Շահնուր – արքայ եւ արուեստ, Անթիլիաս, 1985:

Թատերական պատկերներ, (բեմականացում Շահան Շահնուրի պատմուածքներու), Պէյրուօ, 1986:

*Oeuvres vives de la littérature arménienne*, Անթիլիաս, 1988:

*Le royaume arménien de Cilicie*, Քլոտ Մուրաֆեանի հեղինակած գիրքին գործակցաբար, Փարիզ, 1993:

*Հայրիկին եւ տուտունին ամառնային արկածները*, Անթիլիաս, 1999:

*Գործնական բառարան ֆրանսերէն-հայերէն, հայերէն-ֆրանսերէն*, Պէյրուօ, 2000:  
*Պիժու*, Անթիլիաս, 2003:

*Վերաքաղ*, Պէյրուօ, 2004:

*Հայերէնի բարեշաւուսի ձեռնարկ*, Անթիլիաս, 2006:

*Հայերէնի եւ հայ գրականութեան դասաւանդման կերպ*, Անթիլիաս, 1995:

*Հայոց պատմութեան դասաւանդման կերպ*, Անթիլիաս, 2002:

*La reprise de la tradition scolaire. Ecole et identité nationale. Les Arméniens (1917-1939). La quête d'un refuge*, Presse de l'université Saint-Joseph, Պէյրուօ, 2006, էջ 254-265:

#### Գ. ԽՄԲԱԳՐԱԾ ԳԻՐՔԵՐ

Շահինեան խմբագրած է հետեւեալ գործերը.

*Ամիս մը ծովուն վրայ, Մատթէոս Մամուրեան*, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1990:

*Գիժ Ղազար, Ղազարոս Աղայեան*, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1991:

*Արշակ Բ. եւ Շապուհ Երկարակեաց*, Փաւստոս Բուզանդ, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1991:

*Մեր վազքը*, Հրանտ Մաթեոսեան, արեւմտահայերէնի վերածում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1992:

*Իմ գայլս*, Հրանտ Մաթեոսեան, արեւմտահայերէնի վերածում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1992:

*Կարմիր ժամուց*, Արփիար Արփիարեան, վերախմբագրութիւն եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1992:

*Ծովինար*, Ա. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Մանասար եւ Պաղտասար*, Բ. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Առիւծ Մհեր*, Գ. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Մասունցի Դաւիթի մանկութիւնը*, Դ. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Մասունցի Դաւիթի պատմությունը*, Ե. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Մասունցի Դաւիթի եւ Մսրայ Մելիքի կռիւր*, Զ. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Դաւիթ եւ Խանդուր*, Է. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Փոքր Մհեր*, Ը. դրուագ Սասնայ Ծոեր դիւցազնավէպի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1994:

*Մանկութիւն եւ պատանեկութիւն*, Գուրգէն Մահարի, խտացում եւ մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1996:

*Հայկական աւանդավէպեր*, Մովսէս Խորենացի, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1996:

*Դպրոցական յիշատակներ*, Մատթէոս Մամուրեան, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 1999:

*Նիլս Հոլկերսընի հրաշալի ճամբորդությունը*, Սելմա Լակերլոֆ, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 2003:

*Աշակերտական տարիներ*, Ստեփան Զօրեան, արեւմտահերէնի վերածում եւ խտացում, Անթիլիաս, 2003:

*Կեանքիս յուշերէն*, Հրաչեայ Աճառեան, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 2003:

*Գիլլի յիճին գաղտնիքը*, Վախտանգ Անանեան, մանկավարժական պատշաճեցում, Անթիլիաս, 2003:

*Գայլիկներու աշխարհէն*, հրատարակութեան պատրաստութիւն, յառաջաբան եւ խմբագրում, 1949:

*Նաւասարդ-66*, արեւմտահայ գրականութեան ժողովածու, Պէյրութ, 1966:

*Գրիգոր Զօհրայ*, “Երկեր”, Անթիլիաս, 1988:

*Մատթէոս Մամուրեան*, “Երկեր”, Անթիլիաս, 1990:

*Լեւոն Բաշալեան*, “Երկեր”, Գրիգոր Շահինեան՝ Կարօ Յովհաննէսեանի հետ, Անթիլիաս, 1994:

*Միլվա Կապուտիկեան*, “Գիրս մնայ յիշատակող”, Անթիլիաս, 1996:

*Վահրամ Մավեան*, “Ամբողջական երկեր”, Անթիլիաս, 1993. նոյնը՝ Էջմիածին, 1996:

Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբէկեանի, Անթիլիաս, 2002:

## Դ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահինեան կատարած է հետեւեալ թարգմանութիւնները.

*Parages d'exil*, Շահնուրի պատմուածքներու թարգմանութիւն ֆրանսերէնի, Փարիզ, 1984:

*Բա՛ց միայն իմ դիմաց ճամբաներն Արմենիոյ*, ժանին Ալթունեանի գիրքի թարգմանութիւնը հայերէնի՝ Կարին Զոհրապեանի հետ, Անթիլիաս, 2001:

*Portraits du Caire: Van Leo, Armand, Alban*, Աքրամ Զաաթարիի եւ Մունիրա Խմիրի գիրքի թարգմանութիւն հայերէնի, 1999:

*Պատերազմի դպրոցը*, Ալեքսանտր Նաժժարի, թարգմանութիւն հայերէնի, Պէյրութ, 2001:

*Դար մը պատմութիւն ՀԲԸՄ-ի*, թարգմանութիւն հայերէնի Շաղիկ Արծրունիի հետ, Փարիզ, 2006:

*Զրոյցներ Ճիովանի Կուայթայի հետ – Մարդուն կեանքը հանդիպում մը երկինքի եւ երկրի միջեւ*, Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, թարգմանութիւն հայերէնի, Քանաթա, 2008:

Ամբողջացնելու համար Գրիգոր Շահինեանի հրատարակութիւններու շարքը յայտնենք, թէ 1980ական թուականներուն պատրաստած է հայերէնի “Օովասար” դասագիրքերու շարքը, որ նախատեսուած էր լիբանանահայ նախակրթարաններու Ա.-Ե. դասարաններու համար: Այս դասագիրքերը խմորատիպ ձեւով գործածուած են Համազգայինի Ճեմարանին մէջ 1980ական թուականներուն եւ ցարդ կը մնան անտիպ:

\*

\* \* \*

Կատարեցինք թուումը Շահինեանի գործերուն:

Այս գրութիւնը չի նպատակադրեր ամբողջական եւ մանրամասն քննարկումի ենթարկել անոր վաստակին եւ գործունէութեան զանազան կողմերը: Կը հաստատենք պարզապէս. ինչ որ ըրաւ Շահինեան՝ լա՛ւր ըրաւ: Յաջողեցաւ իր ստանձնած բոլո՛ր գործերուն մէջ: Եւ

բոլոր իրագործումներուն մէջ թաթխեց իր ստեղծագործ ոգին, սքանչելի տեսլականը, անկեղծութիւնը, մարդկայնութիւնը: Յետոյ, իր հմտութիւնը հարցերուն, անխոնջ աշխատողի տրամադրութիւնը, յարատեւ ոգին, գործը հետապնդելու յամառ ախորժակը, գործ մը անպայման յաջողցնելու ամբողջական հաւատքը լիովին կ'արժանացնեն զինք ընդհանուր մեծարանքի եւ համակրանքի՝ հանդէպ իր մաքուր եւ արդիւնաւէտ գործունէութեան:

Ու բոլորէն վեր,

Եւ ամէն բանէ առաջ,

## Մա՛րդ էր Գրիգոր Շահինեանը, գլխագիր ՄԱՐԴ:

Այս բոլորով հանդերձ, մեր իրականութեան մէջ կայ խաւ մը, որ չի բաժներ Շահինեանի մտածումները, սկզբունքները կամ աշխարհահայեացքը:

Շահինեանի խառնուածքով մտաւորական մը, երբ – իր բառերն են – անպատասխանատու կը նկատէ մեր կեանքը ղեկավարող պատասխանատուները, բնական է որ լաւ ընդունելութիւն չգտնէ շրջանակի մը կողմէ, որ սկզբունքով պատասխանատուութիւնը ստանձնած է ծանր ու պատասխանատու գործ կատարելու:

Շահինեան շատ հարազատօրէն, առանց աճպարարային դարձուածքներու, առանց դոյզն հաճոյակատարութեան, անկաշկանդ եւ անկեղծ դատողութիւնը կատարած է մեր ազգային-մշակութային-կազմակերպական բազմաթիւ հարցերու եւ գործելակերպի: Համաձայն չէ գտնուած անոնցմէ ոմանց, շատերուն, եւ տուած է իր անձնական տեսակէտը: Նկարագրով եղած է յախտուն, ըմբոստ եւ համարձակ: Ահա թէ ինչու անոր կարծիքներն ու կեցուածքները լաւ աչքով չեն դիտուած ոմանց կողմէ:

Շահինեան իր դատողութիւնները կատարած է դրական հիմքի վրայ, միշտ շինելու նպատակով եւ աւելի լաւին ձգտելու նախանձախնդրութեամբ: Անտեղի պիտի չըլլար հաստատել այստեղ այն իրողութիւնը, որ Շահինեանի եւ Շահինեաններու տիպարին ներկայութիւնը անհրաժեշտ է մեր կեանքին մէջ՝ մեր իսկ կեանքի յառաջդիմութեան, զարգացման եւ յարատեւութեան ի խնդիր: Ժողովրդավար որեւէ ընկերութեան, հաւաքականութեան կամ երկրի մէջ նախապայման է տարակարծիք ըլլալը: Այլապէս կ'ունենանք ամբողջատիրական-բռնատիրական կառոյցով ընկերութիւն մը: Աւելորդ եւ չափազանց հաճոյակատարութիւնները եւ բաժակաճառերը ոչ միայն առաջ չեն տանիր մեր կեանքը, այլեւ կը քանդեն զայն. արդէն կը քանդեն: Ըստ երեւոյթին, անկեղծութեան ժամը չէ հնչած տակաւին մեր կեանքին մէջ: Պիտի հնչէ՞ արդեօք, յայտնի չէ: Այնուամենայնիւ տիրապետող է իրողութիւնը. կարծէք մրցում կայ մեր հաւաքական կեանքին մէջ հաճոյակատարութեան ախոյեան դառնալու. երեւոյթ մը, որմէ կը խրտչէր Շահինեան:

\*

\* \* \*

## ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Ի ծնէ մանկավարժ էր Գրիգոր Շահինեանը: Կ'ուզէր որ միայն իբրեւ մանկավարժ յիշուի մեր կեանքին մէջ: Երիտասարդութեան սեմին, երբ կը ծառայէր ան ՀՄԸՄ-ի սկաւուտական շարժումին, ժամանակակիցներու վկայութեամբ, բոլոր խումբերու գայլիկները անխտիր կ'ուզէին որ իրենց ալ արելլան ըլլար Շահինեանը եւ ոչ թէ



միայն մէկ-երկու խումբի: Ասոր պատճառը այն է, որ գայլիկները հրապուրուած էին անոր մանկավարժական մօտեցումներէն: Միջանկեալ յայտնենք, թէ Շահինեան իր կեանքի այդ շրջանին ստորագրած է բազմաթիւ յօդուածներ եւ հրատարակած է գրքոյկներ՝ սկաուտական գիտելիքներու, սկզբունքներու եւ սկաուտի բարոյական տիպարին մասին:

Շահինեան սիրեց մանկավարժութիւնը: Ուսանեցաւ մանկավարժութիւն եւ մանկավարժական աշխատանք կատարեց միշտ վերանորոգուած կորովով ու տրամադրութիւններով:

Մեծ մանկավարժ էր Շահինեան, արդարեւ: Մեծ մանկավարժները ազնուագոյն իմաստով մեծ մարդ են, ու մեծ մարդ են, որ մանկավարժ եղած են:

Շահինեան ունէր դաստիարակութեան փիլիսոփայութիւն մը, որմով կ'առաջնորդուէր եւ որուն միջոցով կը դեկլարէր դասարանը: Ուէէ խղճամիտ ուսուցիչ չի կրնար չորդեգրել այդ փիլիսոփայութիւնը: Մանկավարժութեան հիմնական նպատակադրումներէն մէկն է անկասկած մարդու պատրաստութիւնը, մարդակերտումը, ինչպէս սովորութիւն ունինք ըսելու:

Իտէալ դաստիարակութիւնը անհրաժեշտ է որ համաձայն ըլլայ բնութեան հետ: Արարիչին ձեռքէն եկած ամէն բան լաւ է, պիտի հաստատէր Ժան-Ժաք Ռուսօ, սակայն ամէն բան կ'այլասերի մարդուն ձեռքին մէջ՝ եթէ անհրաժեշտ խնամքը չտրուի անոր:

Աշակերտները մաս կը կազմեն հարցերուն, դասընթացքը պատահական չէ, ուսուցիչը առաջնորդ է, պիտի յայտնէր Ճոն Տիւրի:

Տըքքոլիին համաձայն, դպրոցին նպատակն է ապրեցնել պզտիկը, բառին բուն իմաստով՝ զայն մարդ ըլլալու պատրաստել եւ ասոր համար բնականօրէն զարգացնել իր մէջ գտնուող ամէնէն բարձր կարողութիւնները, իմացականութիւնը, կամքը, զգացումը:

Վերջապէս, Նէյլ կը բացատրէ թէ դժուար պզտիկ չկայ, այլ կան դժուար ծնողներ. թերեւս անելի ճիշդ կ'ըլլայ ըսել, թէ կայ դժուար մարդկութիւն մը:

Վերոյիշեալ բոլոր մանկավարժներու ուսմունքը խորացնելու կողքին, Շահինեանի իտէալ ու պաշտած մանկավարժը Լեւոն Շանթն էր: Մեծ մանկավարժը կ'ըսէր իր աշակերտներուն. “Աշխատեցէք մա'րդ ըլլալ. մարդը տիեզերքի բարձրագոյն արժէքն է”: Ու կը պատկերացնեմ մեծ մանկավարժին մեծ աշակերտը՝ իբրեւ քանդակագործ մարդու:

Իտալական Վերածնունդի մեծագոյն արուեստագէտներէն՝ Մայքըլ Անճելօ՝ կը հաստատէր. “Մարմարին մէջ հրեշտակ մը տեսայ, քանդակեցի մինչեւ որ ազատ արձակեցի զայն քարէն”:

Շահինեանն ալ՝ իբրեւ հոգիի քանդակագործ՝ կ'աշխատէր իր աշակերտներուն վրայ անոնց ներաշխարհին մէջ մարդը պատրաստելու համար: Չէ՞ որ լատիներէնով դաստիարակութիւն (é-duceu) կը նշանակէ ներսէն դուրս քաշելու արարքը:

Լեւոն Շանթի մահուան առթիւ գրուած յօդուածներէն մէկուն մէջ, “*Ազդակ*” օրաթերթը կը գրէր.

“Արժեքաւոր գիտուններ, գրագէտներ եւ բանասէրներ, իրենց տեղը ունին անշուշտ հասարակութեան մէջ եւ յաճախ կը հանդիպինք անոնց նմաններուն: Բայց ՄԱՐԴ անունին արժանի եւ մարդկային բարձրագոյն ստորոգելիներով օժտուած անհատականութիւններն են որ կրթիչ եւ վարիչ դերեր կը խաղան ազգի մը ծոցէն ներս, իրենց օրինակով ներշնչելով շրջապատը:

“Շանթ այդ հազուագիստ անձերէն մէկն էր, որ գիտցաւ նախ մարդու կոչումին հաւատարիմ մնալ, բարոյական առաքինութիւններու ծառայել, վսեմ գաղափարներու հետեւորդը դառնալ եւ ապա նաեւ հարստացնել հայոց մշակոյթը՝ գեղարուեստական եւ գիտական իր երկերով:

“Այս իսկ պատճառով, անոր գործերուն ընդմէջէն գալիք սերունդները պիտի սիրեն եւ յարգեն նաեւ անոր ազնիւ դէմքն ու բարձր նկարագիրը”:

Այս հաստատումները ամբողջութեամբ կարելի է կատարել նաեւ Գրիգոր Շահինեանին:

---

ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

---

“Մենք՝ առաջին վարիչ եւ առաջին  
ուսանողները այս Կեդրոնին՝ մեծ  
պատասխանատուութիւն մը ունինք  
մեր ժողովուրդին եւ մեր  
յաջորդներուն հանդէպ. ճամբայ  
պիտի բանանք, մթնոլորտ պիտի  
ստեղծենք, ոգի պիտի դարբնենք”:

Այսպէս կը բանաձեւեր իր խօսքը Գրիգոր Շահինեան՝ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի բացման հանդիսութեան, որ տեղի ունեցաւ 2 Նոյեմբեր 1987ին, Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ:

Շահինեան գործեց իր առաջադրած պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, ճամբայ հարթեց եւ մանաւանդ մանկավարժական բացառիկ մթնոլորտ պատրաստեց:

Տնօրէն չեղաւ երբեք:

Չուզէ՛ց ըլլալ:

Խորապէս կը խրոչէր տնօրէն բառէն:

*Միրեց ըլլալ ճամբայ ցոյց տուող, խորհուրդներ թելադրող վարիչ:*

Եւ եղա՛ւ:

“Ինձի տրուած “վարիչ” տիտղոսը պատահականութեան արդիւնք չէ, այլ ընտրութեան մը, քաղաքականութեան մը”, կը հաստատէր ան:

Պատգամներ չփոխանցեց երբեք, ինչպես սովորաբար կը կատարեն կրթական պատասխանատուները իրենց աշակերտութեան եւ ուսանողութեան: Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի քսան տարիներուն ընթացքին եւ առհասարակ իր ամբողջ ուսուցչական կեանքին մէջ մանկավարժական թելադրանքներ կատարեց, “եւ իմ պատգամը մանկավարժական օժանդակութիւնն էր, որ տրամադրեցինք ձեզի մեր դասերու եւ խորհրդակցութիւններու ընթացքին”: [...]

“Ես ձեր աշխատանքը ղեկավարողն եմ,  
ոչ՝ ձեր կազմաւորումը տնօրինողը”:

Հաւատարիմ իր առաջադրանքին, Շահինեան յաւակնութիւնը չունեցաւ երբեք Կեդրոնի աշակերտութեան մանկավարժական անհատականութիւնը ի չգոյժ կերտելու, այլ պարզապէս աշխատեցաւ անոնց հետ անոր զարգացման ու բարելաւումին: Այդպէս է, որ երբեմն ճամբայ բացաւ անոնց առջեւ, եւ երբեմն քաջալերեց զանոնք որ իրենք բանան իրենց իսկ ճամբան:

“Այս կեդրոնը կաղապար մը չէ, որուն մէջ  
դասախօսները եւ ես հոսեցնէինք ձեր միտքերն ու  
հոգիները, այլ հաւաքական աշխատանքի վայր  
մը, ուր դուք ալ կը մասնակցիք ձեր  
կազմաւորումին: Եւ ամէն ինչ կ’ըլլայ փոխադարձ  
օժանդակութեամբ”:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի հիմնադրութեան առաջին տարիէն իսկ հիմնաւորուեցան անոր օրէնքներն ու աշխատելաձեւը: Քսան տարուան ընթացքին Շահինեան երբեք չդիմեց քարոզչական միջոցներու: Չէր հաւատար անոնց: 14 Դեկտեմբեր 1990ին, երբ տեղի կ’ունենար Կեդրոնի առաջին վկայականներու բաշխման հանդիսութիւնը, ան կը յայտնէր, ի շարս այլ բաներու. “Մենք անադմուկ սկսանք գործի եւ ահա առանց ադմուկի ալ կու տանք մեր առաջին վկայականները: Միջանկեալ, մեր աշխատանքն ալ եղաւ պարզ ու համեստ այս հաւաքոյթին պէս: ... Միրով կատարեցինք մեր աշխատանքը եւ փորձեցինք ամէն օր քիչ մը աւելի արդիւնաւոր դարձնել զայն”:

\*  
\* \*

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին մէջ Շահինեանի մեծագոյն իրագործումներէն մէկը եղաւ գոյակցութեան յատուկ մթնոլորտի մը ստեղծումը: Արդարեւ, մտերմիկ ու ժողովրդավար մթնոլորտի մը դարբինը եղաւ ան, որուն մանկավարժական հայեացքներն ու յարաբերական սքանչելի բնաւորութիւնը պատճառ կ’ըլլային, որ անձանօթներ ընտանիքի անդամներու պէս կապուին իրարու եւ ուրոյն նկարագիր ունեցող ամբողջութիւն մը առաջացնելու. աւելի՛ն, ուսանողութիւնը մղելու յարատեւ կատարելագործումի:

Համահայկական քաղաքականություն մը, արդարեւ, որ տուաւ բարեբաստիկ արդիւնքներ:

Կեդրոն յաճախած են, ու կը յաճախեն, երեք յարանուանութիւն-ներուն պատկանող եւ քաղաքական տարբեր հոսանքներու հովանաւորութիւնը վայելող վարժարաններէ ուսանողուհիներ, որոնք կը հանդիպին իրարու զուտ ազգային հողի վրայ ու կը յարաբերին իրարու հետ: “Մեր կեդրոնին մթնոլորտը ջերմ է, ազատ ու հաղորդական եւ իսկական հաճոյք է տեսնել, թէ ինչպէ՛ս տարբեր հորիզոններէ եկած հայ անհատներ սիրով ու լրջօրէն կը լծուին միասին համահայկական նպատակներ հետապնդող հաւաքական աշխատանքի”:

Այս մթնոլորտին մեծապէս օժանդակած է ժողովրդավար գործելակերպը: Կեդրոնին եւ ուսանողութեան հետ առնչուած որոշումները առնուած են խորհրդակցութենէ ետք, լայնամտութեան ազատ մթնոլորտի մէջ եւ համախոհութեամբ: Շահինեան առաջացուցած էր նաեւ ուսանողական եռանդամ խորհուրդ մը, որ, դասախօսներու հետ գործակցաբար, կազմակերպած է ընկերամշակութային ձեռնարկներ: Իսկ այս վերջինները ուրիշ բան չէին հետապնդեր այլ եթէ ընդլայնել ուսանողուհիներուն մտահորիզոնը եւ շեշտել ընտանեկան բնոյթը կեդրոնին:

Այս գործելակերպը կրթական մթնոլորտ մը ստեղծելու կողքին նպաստած է կրթական առաքելութեան նպատակայարմար իրագործումին: Իբրեւ առաջնորդ՝ Շահինեան որդեգրած է հետեւեալ սկզբունքները.

Առաջին, յարգանք ուրիշներու մանկավարժական եւ այլ տեսակետներու հանդէպ.

Երկրորդ, ժողովրդավար եւ լայնախոհ վարուելակերպ աշակերտներու հետ, եւ

Երրորդ, խոր ու մտերիմ գիտակցութիւն մեր առաքելութեան:

Ասոնք հիմքը կը կազմեն նաեւ Շահինեանի մանկավարժական սկզբունքներուն: Այսինքն, մարդկային իտէալներու հետապնդման կողքին ունենալ համազգային մտահոգութիւններ եւ գործադրել մանկավարժական ժողովրդավար սկզբունքներ:

Վերոյիշեալ սկզբունքներու իրագործման ճամբուն վրայ, Շահինեանի անդուլ աշխատանքը չէ եղած գիտելիքներ փոխանցել: Ան կը հաստատէր, որ Կեդրոն հասնող անհատները պէտք է որ ունենան անհրաժեշտ գիտելիքները, որ երկրորդական վարժարանէ մը ինքզինք յարգող շրջանաւարտ մը կ’ունենայ: Կեդրոնին նպատակը եղած է այդ գիտելիքները օգտագործելու կերպը սորվեցնել, ինչպէս նաեւ մանկավարժական վերաբերում մշակել: Այս բոլորը կ’ենթադրեն անշուշտ, որ ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնները հեռու կը մնային պաշտօնական հասկացողութենէ. մտերիմ զրոյցն էր յարաբերութեան ձեւը: Ու հանդիպումները – Կեդրոնին մէջ թէ դուրսը՝ տուններու մէջ – զուարթ էին, սրամտութիւններով ու զուարթախոհութեամբ լեցուն: “Դուք - խօսքը ուղղելով

ուսանողուհիներուն - ուրախութիւն պատճառեցիք ձեր դասախօսներուն եւ ինձի, եւ կը կարծեմ ուրախութիւն միայն ստացաք այս յարկին տակ ձեր գոյութենէն: Ես դառնութեան ոչ իսկ ակնթարթ մը կը յիշեմ”, կը հաստատէր ան վկայականաց բաշխման հանդէսի մը արտասանած իր խօսքին մէջ, ու կ’աւելցնէր,

“Մանկավարժութիւնը ճշգրիտ գիտութիւն չէ: Մենք միասին սորվեցանք անոր արուեստանման գաղտնիքները եւ մարդ անհատներու յարաբերութեան բարիքն ու քաղցրութիւնը”:

Բնական է, որ դիրին ձեռք չբերուեցաւ այս ամբողջ վաստակը, յատկապէս երբ նկատի ունենանք կեանքի այն պայմանները որոնց ենթակայ եղանք բոլորս, եւ որոնց տակ գործեց Կեդրոնը:

Շահինեան յուսահատիլ չէր գիտեր: Անոր նուիրումը, հաւատքը ստանձնած գործին, յարատեւութեան անխորտակելի ոգին, կանոնաւոր ու կազմակերպ աշխատանքը, այլ մանաւանդ

դրական ու լաւատես տրամադրութիւնը պատճառ կ’ըլլային, որ բարւօք լուծում տար ամէն հարցի, եւ զուարթութեամբ յաղթահարէր ամէն դժուարութիւն:

Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին մէջ Շահինեան գործեց լուռ նուիրումով եւ հետեւողական ջանասիրութեամբ: Ստեղծեց հաւաքական աշխատանք: Արդիւնքը այս բոլորին. Կեդրոնի դասախօսներ սիրտի եւ միտքի տուրք նկատեցին իրենց աշխատանքը, ուսանողուհիները լրջօրէն ու պարտաճանաչ մօտեցումով ու կատարելագործուելու ճիգով յաճախեցին Կեդրոն, եւ բոլորը միասին խիղճի պարտք նկատեցին իրենց գործը: Այս բոլորը, բնականաբար, կը նպատակադրէին բարելաւել մանկավարժական անձնակազմի պատրաստութիւնը որպէսզի բարձրանայ հայկական վարժարան յաճախող հայ աշակերտութեան մակարդակը:

“Կ’ուզենք այս ձեւով նպաստել ստեղծումին գիտակից ու բարեացակամ մանկավարժի տիպարի մը եւ կրթական-ուսուցողական լայնախոհ մօտեցումի մը, որոնց շնորհիւ հետեւողականօրէն բարելաւուի կրթական մեր օճախներու մթնոլորտը եւ մակարդակը”:

\*  
\* \* \*

Ջուտ կրթական-մանկավարժական աշխատանքներու կողքին, Շահինեան Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին մէջ ունեցած է նաեւ հրատարակչական գործունէութիւն: Քսան տարուան ընթացքին հայկական վարժարաններու աշակերտ-աշակերտուհիներուն հրամցուցած է յարակից ընթերցանութեան, երեւակայական, մանկական եւ պատանեկան աւելի քան քսան անուն գիրք:

Հրատարակչական իր գործերէն կ'ուզենք առանձնացնել երեքը, որոնք հայերէնի, հայ գրականութեան եւ հայոց պատմութեան ուսուցիչներուն համար պատրաստուած մեթոտաբանական գրքոյկներ են՝ տեսական բացատրութիւններով եւ գործնական օրինակներով:

Այդ գործերէն առաջինն է Հայերէնի եւ Հայ գրականութեան դասաւանդումի կերպ խորագրեալ գործը: Այս ուղեցոյցը կը նպատակադրէ սահմանել դասաւանդումի կերպ մը՝ «համադիր եւ ներդաշնակ ուսուցում մը ապահովելու համար առաջինէն մինչեւ աւարտական դասարան»:

Երկրորդը, Հայոց պատմութեան դասաւանդումի կերպ, կը փորձէ պատասխանել երեք հիմնական հարցումներու. ի՞նչ դասաւանդել, ինչո՞ւ դասաւանդել եւ ինչպէ՞ս դասաւանդել հայոց պատմութիւնը: Այս հարցումները, բնականաբար, կը թելադրեն աշխատանքի ուղեգիծ մը: «Տեսական խորհրդածութեան ու խորհուրդներու կողքին, ան կը ներկայացնէ նաեւ գործնական նմոյշ-դասեր»:

Հայերէնի բարելաւումի ձեռնարկ, երրորդ ուղեցոյցն է այս շարքին: Շահինեան կը հաստատէ, որ այս ձեռնարկը պատրաստուած է Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորման Կեդրոնի ուսանողուհիներուն համար, որոնք համապատասխան դասանիւթ մը ունին, բայց նաեւ կրնայ «գործածուիլ բոլոր անոնց կողմէ, որոնք կը փափաքին արագ վերաքաղը կատարել իրենց քերականական գիտելիքներուն եւ բարելաւել իրենց հայերէն գրաւոր ու բանաւոր արտայայտութիւնը»: Կարելի է հետեւցնել, թէ այս ուղեցոյցը չի նպատակադրեր փոխարինել ընթերցանութեան եւ քերականութեան դասագիրքերը, այլ կը ձգտի լրացնել զանոնք:

\*  
\*       \*  
\*

Շահինեան չունէր վարչական կարողութիւններ: Յաճախ կ'արտայայտուէր այդ մասին: Միութենական իր պաշտօնակիցներն ալ նոյն վկայութիւնը կու տան: Իր ինքնակենսագրական հատորին մէջ անդրադարձած է այդ երեւոյթին:

Շահինեան ունէր սակայն, տեսլական. բա՛ն մը, որ իր պաշտօնակիցներէն շատեր չունէին: Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի տարեկան կամ մասնակի գործունէութեանց տեղեկագիրներուն մէջ չկայ օրինակ մը, որուն աւարտին գրած չըլլայ ապագայ հեռանկարներու կամ ծրագիրներու մասին:

Իր այդ պայծառ տեսլականն է, որ Կեդրոնին տուած է ուրոյն դիմագիծ ու սեփական աւանդութիւններ:

Այդ տեսլականի իրականացման ճամբուն վրայ, յանուն ճշմարտութեան յայտնենք, թէ քսան տարի Շահինեան աշխատեր է Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին մէջ տիւ եւ գիշեր, ինչպէս կ'ըսէ մեր ժողովուրդը, առանց փողի ու թմբուկի: Տուած է անհաշուելի ցուցմունքներ: Դուրս ելած է իր գրասենեակէն եւ այցելած է Հայաստան ու բազում գաղութներ՝ մանկավարժական ճառագայթներ փոխադրելով նաեւ հայկական ուսումնարաններուն մէջ: Մանկավարժական գործնական հանդիպումներ ունեցած է կրթական պատասխանատուներու եւ ուսուցիչներու հետ: Գրած է կամ պատշաճեցուցած է բազմաթիւ մանկավարժական գրքոյկներ եւ գիրքեր: Ստորագրած է կրթական բնոյթի յօդուածներ: Աշխատած է լուռ, անաղմուկ, երբեմն – մանաւանդ սկզբնական շրջանին – թիավարած է հոսանքն ի վեր:

Քսանամեայ այս վաստակին դիմաց, կը հաստատենք անվերապահօրէն, որ

Խաչեր Գալուստեան Մանկավարժական  
Կազմաւորումի Կեդրոնը մեծաւ մասամբ  
հաւասար է Գրիգոր Շահինեանի: Իրապէս  
շատ խոր է անոր սերը Կեդրոնին նկատմամբ,  
որուն առաքելութեան կը հաւատար իր  
հոգեկան ամբողջ ներաշխարհին մէջ:

Իր Վերաքաղ ինքնակենսագրական հատորին մէջ, ան կը գրէ. “Ունիմ նաեւ տպաւորութիւնը սքանչելի *fin de carrière* մը, ասպարէզի վախճան մը ունենալու: Ամբողջ կեանքս աշակերտներու պատրաստութեան նպաստելէ ետք, հիմա ուսուցիչներու կազմաւորումին կը նպաստեմ: Շէնք մը շինելէ ետք համբերութեամբ ու հաճոյքով, անոր կամարը կը հաստատեմ ահա գոհունակութեան ծաւալող զգացումով”:

Իսկ շուրջ հինգ տարի առաջ Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ տեղի ունեցած Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնի քսանամեակի հանդիսութեան, ան կը հաստատէր ի շարս այլոց, հետեւեալ խօսքը, որուն նմանակին կը հանդիպինք նաեւ Վերաքաղին մէջ. “Սովորութիւն եղած է մանկավարժական ասպարէզը նմանցնելու վարդին եւ իր փուշերուն: Վարդը գոհունակութիւնն է որ կը զգանք ուսուցանելով, փուշերը՝ վարչական տաղտուկները, կարգապահական հարցերը, եւայլն: Ես կրնամ ամենայն անկեղծութեամբ ըսել, որ քսանամեայ իմ ծառայութեանս ընթացքին

“Խաչեր Գալուստեան”ի մէջ վարդ քաղեցի  
միայն, առանց փուշերէ վնասուելու:

Անխառն գոհունակութեան շրջան մը եղան ինծի համար պաշտօնավարութեանս քսան տարիները”:

Իր խօսքի աւարտին,

Շահինեան կը մաղթէր, որ Խաչեր  
Գալուստեան Մանկավարժական  
Կազմաւորումի Կեդրոնը մնայ  
“հոգեկան խաղաղութեան ովասիս մը եւ  
մանկավարժական լոյսի աղբիւր մը”:

Որուն հետ ամբողջութեամբ միաձուլուեցաւ անոր պայծառատեսիլ վարիչը:

\*

\* \*

Գրիգոր Շահինեան երբեք չցանկաց մեծարանքի հանդիսութիւն իրեն ի պատիւ:  
Մերժեց նմանօրինակ ամէն առաջարկ, որ ներկայացուեցաւ իրեն:

Չուզեց շքանշան ստանալ:

Վերոգրեալ քսանամեակի հանդիսութենէն օրեր ու շաբաթներ առաջ կը գտնուէր  
մտատանջութեան մէջ, որուն ակնարկելով անգամ մը ըսաւ ինծի.

- Կրնայ պատահիլ, որ Արամ Ա. Վեհափառը հանդիսութեան ատեն շքանշան տայ  
ինծի, ի նչ պիտի ընեմ ես այն ատեն:

Վճռական որոշումներ տուող այս մարդը շուարած էր իրապէս եւ չկրցաւ ծրագրել  
իր ընելիքը: Բարեբախտաբար Վեհափառ Հայրապետը շքանշան չտուաւ իրեն այդ  
օր, եւ Շահինեան փրկուեցաւ մեծ մղձաւանջէ մը: Դառնութեան բաժակը կարծէք  
անցած էր իրմէ:

Պիտի ուզէր սակայն, որ առանց շեփորահարումի եւ շատ քիչ մտերիմներու  
ներկայութեան, աւարտի նշում մը ըլլար Խաչեր Գալուստեան Մանկավարժական  
Կազմաւորումի Կեդրոնի քսանամեայ վարիչի իր գործունէութեան:

- Ինծի համար խօսքի ոյժը աւելի զօրաւոր է,  
քան շքանշանը, - կ'ըսէր ան:

Անկեղծ համեստութիւն մը կը լեցնէր իր ողջ ներաշխարհը: Հոգեբանութեան մէջ  
սովորաբար կը խօսուի երկու տեսակ համեստութեան մասին: Առաջինը  
արտաքին-երեւութական համեստութիւնն է, որ խորքին մէջ կը բաղձայ աւելի  
զօրաւոր մեծարանք, իսկ երկրորդը՝ իրաւ համեստութիւնն է, խոնարհութիւնը, որ  
անանձնականութիւնը ունի իբրեւ առանցք: Շահինեանի համեստութիւնը երկրորդ  
տեսակն է, բառին ազնուագոյն իմաստով:

Իր խօսքի կերպը փոխ առնելով, սխալ ըրած կ'ըլլամ երբ կը յայտնեմ “գործի  
աւարտ” բացատրութիւնը: Ի նչ գործի աւարտ. կը խօսինք ո՞ր գործի աւարտի



մասին: Կեդրոնի վարիչությունն հրաժարել է ասդին, Շահինեան շարունակեց դասաւանդել, յօդուած գրել եւ դասախօսութիւն պատրաստել: Կը պատահէր, որ բոլորէս կանուխ հասներ Կեդրոն: Եւ ուսուցչութիւնը շարունակեց մինչեւ իր հիւանդանոց փոխադրուիլը, որ վերջինը պիտի ըլլար: Պարտաճանաչ էր միշտ եւ ուսուցչական առաքելութեան գիտակից: Դիմագիծը դեղին գոյն առած կ'ըլլար երբեմն, կը հազար ատենէ ատեն, բայց միշտ կու գար Կեդրոն՝ որեւէ բանով օգտակար ըլլալու նախանձախնդրութեամբ: Վերջին շրջանին, երբ ունեցաւ շնչառութեան դժուարութիւն եւ տուն մնաց այդ պատճառով, փափաքեցաւ եւ առաջարկեց նոյնիսկ, որ աշակերտուհիները երթան իր տունը դասի: Անոր ծանր վիճակը նկատի առնելով իր այս փափաքին գոհացում չտուինք անշուշտ, բայց ինք յամառեցաւ իր առաջարկին վրայ: Շահինեան իր ներաշխարհին մէջ թերեւս կ'ուզէր մեռնիլ դասաւանդելու ատեն, պարտականութեան վրայ, իր աշակերտ-աշակերտուհիներուն դիմաց:

Երբ բժիշկները յայտնեցին իրեն, թէ վիրաբուժական գործողութեամբ մը փոքր հաւանականութիւն կայ որ բարելաւուի առողջական վիճակը, առանց վայրկեան մը իսկ տատամսելու՝ Շահինեան որոշում տուաւ եւ մտաւ հիւանդանոց: Լաւատես էր. պիտի ենթարկուէր գործողութեան եւ շատ յոյս ուներ որ պիտի առողջանար: Այդպէս է որ կը պատրաստէր կեանքի առաւել տասը տարուան աշխատանքի ծրագիր:

Մնացեա՞լը ...

\*

\* \* \*

Շահինեան մեռաւ ձմրան մէջ օր մը՝ աւելի զօրացնելով մեր կեանքի երկնակամարին վրայ կուտակուող պաղ ու թուխ պ ամպերը աշնան:

Շահինեանի մահը քիչ մը աւելի կը զգացնէ տերեւաթափը այս երկարող աշնան:

Տերեւաթափը՝ մարդկային եւ հայկական արժէքներու:

Երէկ մենք չէինք հանդուրժեր միջակութիւնները, իսկ հիմա միջակութիւններէ վար տրամադրութիւններն են որ կ'իշխեն մեր վրայ: Շահինեանի ուսուցիչներէն Կարօ Սասունի, ժամանակակիցներու վկայութեամբ, կը յայտնէր. “Ճճիները կ'ապրին ճահիճներու մէջ”:

Ո՞վ պիտի փոխարինէ Շահինեանները: Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ վերջ մը դնել հետզհետէ աւելի բոպիկցող եւ տափակութեան գացող այս երկար աշնան:

Շահինեանի մահը էովին կը յուշէ մեզ այս տերեւաթափը: Մեր առօրեայ սովորամոլական կեանքին մէջ մենք կը մոռնանք կենսական եւ առաջնահերթ եղող հարցերը:

Շահինեանի մահը կը թելադրէ երեք բան.

Առաջին, մարդ պատրաստել:

Երկրորդ, մարդ պատրաստել:

Երրորդ, մարդ պատրաստել:

ԱՆՏԻՊ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ  
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ

*Յաջորդական այս գրությունները կը պատկանին հանգուցեալ Փրոֆ. Խաչեր Գալուստեանին:*

*Վերնագիրները արդէն կը յուշեն, թէ մանկավարժը իր հարուստ փորձին ու վաստակին լոյսին տակ, կու տայ իր հայեացքները, դատումներն՝ ու դիտարկումները մանկավարժական ու դաստիարակութեան մասին, ինչպէս՝*

- Դաստիարակը
- Նպատակներ դաստիարակութեան մէջ
- Նպատակի մը բնութիւնը
- Դատանիշեր լաւ նպատակներու
- Կիրարկում դաստիարակութեան մէջ
- Դաստիարակչական արժէքներ
- Հայ դաստիարակը

## Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ը

1. Դաստիարակը իր կեանքով օրինակելի անձ մըն է աշակերտին համար
2. Դաստիարակը ճշտապահ է
3. Դաստիարակը խղճամիտ է
4. Դաստիարակը կը յարգէ ամէն մէկ աշակերտ
5. Դաստիարակը միշտ սորվող է
6. Դաստիարակը քաղաքավար եւ կիրթ է
7. Դաստիարակը գործակցող է իր պաշտօնակիցներուն հետ
8. Դաստիարակը իր ուսուցման մեթոտներուն բժախնդիր է
9. Դաստիարակը իր ուսուցած առարկաներուն մէջ ժամանակին հետ քայլ կը պահէ տեւական եւ գործնական կերպով
10. Դաստիարակը աշակերտներուն գուրգուրանքով կը մօտենայ
11. Աշակերտները իրենք զիրենք ապահով կը զգան իրենց դաստիարակով
12. Դաստիարակը հասկացողութեամբ կը լուծէ աշակերտին մօտ առաջացած դժուարութիւնները
13. Դաստիարակը խորհրդատու եւ առաջնորդ է աշակերտին
14. Դաստիարակը իր փորձառութիւնը կ'օգտագործէ աշակերտին ուսուցանելու իր կերպերուն մէջ
15. Դաստիարակը համբերատար ու հանդուրժող է

## ՆՊԱՏԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Դաստիարակութեան համար կարելի է շատ մը նպատակներ բնորոշել, սակայն այդ նպատակները բնորոշողները պետք է ի մտի ունենան թէ առաջադրուած նպատակները որքան իրագործելի են եւ ինչ են կիրարկուած միջոցները այդ նպատակներուն համար: Նպատակ բնորոշողները ըլլան ուսումնական մարդիկ, ծնողք, դաստիարակներ, հոգաբարձական մարմիններ, եւ այլն.: Միտքերնուն մէջ բաւական յստակ ըլլալու է թէ՛ այդ նպատակները գիտականօրէն ուսումնասիրուած նպատակներ են եւ թէ՛ անոնք ոչ միայն հասանելի են, այլ անոնց հասնելու պարագային այդ նպատակները կրնան դառնալ միջոցներ աւելի բարձր եւ խորացած նպատակներու, կարենալ յարմարելու համար ժամանակի ոգիին եւ պահանջքին ու դաստիարակողներուն նպատակներուն եւ կարիքներուն:

Դաստիարակութեան մէջ երեք հարցեր կան, որոնք մեզի անդադար կը ներկայանան. ինչ՞, ինչ՞ պէս, ինչու՞ -ով. անխուսափելի են եւ պատասխանի կը կարօտին: Առաջին երկուքը աւելի մեթոտաբանութեան հետ առնչուած են, իսկ երրորդը՝ իմաստասիրական դաստիարակչութեան հետ:

Ինչու՞ հարցը ինքնին մտածող մտքին, խիղճին եւ պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցող մարդուն համար գոյութիւն, իմաստ եւ սնունդ տուող հարց մըն է: Ինչու-ներուն պատասխանել փորձող անձը ինքզինք մեծ պատասխանատուութեան առաջ կը դնէ լաւագոյն կերպով կարենալ առաջնորդելու համար իր անձը եւ դիմացի անձը: Ինչու-ին պատասխանել փորձողը իմաստուն ըլլալու է լաւը եւ վատը զանազանելու, լաւը ընտրելու եւ լաւին մէջ ալ ինքզինք գերազանցելու:

Դաստիարակութեան համար կարելի է կարգ մը ընդհանուր նպատակներ առաջադրել, ինչպէս ընտանեկան բարեկեցութիւնը, ձգտիլ առողջ ապրելու համար կերպերը սորվիլ, լաւ քաղաքացիներ պատրաստել, դաստիարակութեան եղանակներուն ծանօթանալ, տնտեսական բարեկրթութիւն ապահովել, զբօսանքի պահերը հաճելի կերպով գործածել, բարոյական կամ բարոյագիտական կեանքի վերելքով ընթանալ: Այս շարքին կարելի է աւելցնել այլ նպատակներ՝ թէ ինչու՛ եւ ինչպէ՛ս անհատը պատասխանել իր բոլոր կարողութիւններով եւ հրաւիրել զինք ընկերային արդիւնաւոր ծառայութեան, տնտեսական յարաճուն յաջողութիւնը ապահովելով:

Այս գրութեան նպատակն է դաստիարակութեան ընդհանուր նպատակները առաջադրել եւ զանոնք ընկերութեան բոլոր խաւերուն ընդունելի դարձնել եւ անկարելին փորձել, ճիշդ որոշել կարգ մը ընդհանուր նպատակներու բնութիւնը եւ թուել լաւ նպատակներու դատանիշը եւ անոնց կիրարկումը ապահովել դաստիարակութեան մէջ:

## ՆՊԱՏԱԿԻ ՄԸ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Դաստիարակության նպատակն է կարողանալ անհատները մղել շարունակելու իրենց դաստիարակությունը, եւ կամ սորվելու նպատակն ու վարձատրությունն են աճումը յարատեւ կարողութեան: Այս գաղափարը կրնայ կիրարկուիլ ընկերութեան այն անդամներուն միջեւ, ուր յարաբերությունը մարդ մարդու հետ փոխադարձ է: Մեր նպատակներու փնտռութիւն մէջ դաստիարակութեան մասին մենք հետաքրքրուած չենք, ուրեմն, գտնելով նպատակ մը դաստիարակութեան եղանակէն դուրս՝ որուն դաստիարակութիւնը ստորադաս ըլլայ: Ասիկա մեր մտածողութիւնը կ'արգիլէ: Մենք աւելի հետաքրքրուած ենք հակադրութեան մը հետ, որ գոյութիւն ունի եւ երբ նպատակներ կ'ապ կը հաստատեն կիրարկուած միջոցառումներուն հետ:

Ուրեմն, հիմա մեր առաջին հարցն է սահմանել նպատակի մը բնութիւնը:

Նպատակ մը իմաստալից կը դառնայ այն ատեն միայն երբ  
ան կ'իյնայ գործունէութեան մը ներքեւ, հետապնդուած եւ  
ծրագրուած նշանակակէտի մը հասնելու նպատակով,  
փոխանակ արտաքին ազդակի մը ներգործումով:

Մենք մեր սահմանումին կը մօտենանք, հակադրելով պարզ արդիւնքներ՝ նպատակներու հետ: Օրինակի համար, հովը կը փչէ անապատին աւազները, աւազի հատիկները կը փոխեն իրենց տեղը. հոս արդիւնք մըն է որ կ'ունենանք եւ ոչ թէ նպատակի մը հետապնդումը: Ներգործող ուժը մեզմէ անկախ արտաքին ազդակի մը արդիւնք է:

Պահ մը նկատի առնենք մեղուններուն գործունէութիւնները՝ հակադրելով աւազի հատիկներուն տեղափոխութեան հետ: Մեղուններուն գործունէութեան արդիւնքները կարելի է նպատակներ կոչել եւ ոչ թէ այդպէս ընել նախաձեռնութեամբ ըլլալուն համար, այլ մէկ գործունէութիւն միասին առաջնորդած ըլլալուն համար, ամբողջացնելով նախորդ գործունէութիւնը: Երբ մեղունները բեղմնափոշին կը հաւաքեն եւ մեղրամոմ կը պատրաստեն եւ խցիկներ կը շինեն, իւրաքանչիւր քայլ կը պատրաստէ ճամբան յաջորդին, մինչեւ որ կատարումի եղանակը վերջանայ: Այսպէս է դաստիարակութիւնը: Դաստիարակութիւնը կը յաջորդէ դաստիարակութեան: Դաստիարակութիւնը ստորադաս չէ որեւէ մէկ բանի եթէ ոչ աւելի դաստիարակութեան:

Քանի որ նպատակները միշտ կը յարաբերին արդիւնքներու հետ, առաջին բանը որուն պէտք է ուշադրութիւն դարձնել, այն է թէ՛ առաջադրուած նպատակները եւ նշանակուած գործերը ներքին շարունակականութիւն ունին եւ ոչ թէ անոնք պարզապէս գումարն են շարք մը հաւաքուած գործունէութիւններու:

Դաստիարակչական նպատակի մը  
մասին անիմաստ է խօսիլ, երբ գրեթէ  
աշակերտին իւրաքանչիւր  
գործունէութիւնը թելադրուած է  
ուսուցիչին կողմէ:

Դարձեալ անիմաստ է եւ աղիտաբեր նպատակի մը համար թոյլատրել քմահաճ կամ շարունակութիւն չունեցող գործունէութիւն մը՝ ինքնաարտայայտութիւն անունին ներքեւ:

Նպատակ մը կ'ենթադրէ կանոնաւոր եւ դասաւորուած գործունէութիւն, ուր կանոնաւորութիւնը կը բաղկանայ յառաջացող, ամբողջացնող եղանակէ մը: Գործունէութիւն մը որ ժամանակի տեւողութիւն ունի եւ կուտակական աճում՝ ժամանակի յաջորդականութեան մէջ: Նպատակ մը կը նշանակէ նախատեսութիւն, ի յառաջագունէ վերջաւորութիւն մը եւ կամ նպատակ եւ կամ կարելի վերջաւորութիւն: Եթէ մեղուները նախատեսէին իրենց գործունէութիւններուն հետեւանքները, եւ եթէ անոնք ըմբռնէին իրենց նպատակը երեւակայական նախատեսութիւնով մը, անոնք ուրեմն ունեցած պիտի ըլլային նախնական առարկան նպատակի մը: Ուրեմն անիմաստ է խօսիլ դաստիարակութեան նպատակի մասին, եւ կամ ուրիշ որեւէ ծրագրի մասին, ուր պայմանները թոյլատու չեն նախատեսելու արդիւնքները եւ չեն պատճառեր անձ մը դէպի առաջ նայիլ՝ տեսնելու համար հետեւանքը տուեալ գործունէութեան մը:

Նպատակը որպէս նախատեսուած վերջաւորութիւն՝ ուղղութիւն կու տայ գործունէութեան. անիկա պարզ հանդիսատեսի մը դերը չի խաղար. նպատակը կ'ազդէ գործունէութիւնը իր վերջաւորութեան հասցնելու քայլերուն: Նախատեսութիւնը կը գործէ երեք կերպերով.- առաջին՝ ան կ'ենթադրէ ուշադիր դիտարկութիւն տրուած պայմաններուն, տեսնելու համար թէ ինչ են մատչելի միջոցները վերջաւորութեան հասնելու համար, եւ գտնելու ճամբու ընթացքին արգելքները: Երկրորդ՝ ան կը թելադրէ կանոնաւոր կարգը կամ հետեւանքը միջոցներու գործածութեան: Ան կը դիւրացնէ խնայողական ընտրութիւնը եւ կարգադրութիւնը: Երրորդ՝ ան կարելիութիւն կու տայ փոխընտրութիւններու: Եթէ մենք կրնանք նախատեսել մեր այս կամ այն կերպ գործերուն արդիւնքը, ուրեմն մենք կրնանք բաղդատել արժէքը երկու տեսակ գործունէութիւններու. մենք կրնանք դատել իրենց յարաբերական բաղձալիութիւնը: Եթէ երբեք մենք իմանանք թէ կայուն ջուրը մժեղներ կը յառաջացնէ եւ անոնք հիւանդութիւն կը սնուցանեն, մենք նախատեսելով այդ արդիւնքը, քայլեր կ'առնենք արգիլելու զայն: Քանի որ միայն արդիւնքներ չենք նախատեսեր որպէս մտաւորական դիտողներ, այլ շահագրգռուած անձեր ենք արդիւնքով, ուրեմն մենք բաժնեկիցներ ենք այն միջոցառումին մէջ, որ կ'արտադրէ արդիւնքը: Մենք միջամուխ կ'ըլլանք այս կամ այն արդիւնքը յառաջ բերելու համար:

Յստակ եզրակացութիւնը այն է թէ

նպատակով մը գործել կը նշանակէ խելացիօրէն գործել:

---

Գործունեության մը  
վերջաւորութիւնը նախատեսելը  
հիմ ունենալ է դիտարկելու,  
ընտրելու եւ կարգաւորելու  
առարկաները եւ մեր  
անձնական կարողութիւնները:

---

Այս բաները ընել կը նշանակէ միտք ունենալ, որովհետեւ միտքը ճշգրտօրէն դիտումնաւոր նպատակաւոր գործունեութիւնն է կառավարուած իրողութիւններու՝ անոնց իրարու հետ յարաբերութիւններու ճանաչումովը: Բան մը ընել միտք ունենալ կը նշանակէ, նախատեսել ապագայ կարելիութիւն մը ծրագիր ունենալ է անոր կատարելագործումին համար. անիկա միջոցները նկատել է որ ծրագիրի մը գործադրութիւնը կարելի կը դարձնէ եւ ճամբու ընթացքին կը բառնայ արգելքներ, եւ կամ ան իրապէս միտքն է գործը ընելու եւ ոչ թէ անորոշ յուսադրութիւն մը. ան ծրագիր ունենալ է, որ նկատի կ'առնէ կարելիութիւնները եւ դժուարութիւնները: Միտքը կարողութիւն է յղելու ներկայ պայմանները ապագայ արդիւնքներուն եւ ապագայ հետեւանքները ներկայ պայմաններուն: Այս գիծերն են որ կը նշանակեն նպատակ եւ կամ մտադրութիւն ունենալ: Մարդ անկատար ուշիմութիւն կը ցուցաբերէ երբ ան ինքզինք կը գոհացնէ թոյլ կարծիքներով, իր բախտը փորձելով եւ կամ պայմանները լրիւ չի սերտելով ներառեալ իր անձնական կարողութիւնները: Այսպիսի միտքի յարաբերական բացատրութիւն կը նշանակէ մեր զգացումները դարձնել պատահելիքին չափով: Խելացի ըլլալու համար պէտք չէ “կենանք, դիտենք, լսենք” գործունեության ծրագիրը կազմելու համար:

Նոյնացնել, նպատակով մը գործել եւ խելացի գործունեութեամբ՝ բաւարար է ցոյց տալու անոր արժէքը, անոր պաշտօնը փորձառութեան մէջ: Գիտակից ըլլալ կը նշանակէ գիտնալ թէ ինչ կ'ընենք. գիտակից կը նշանակէ շրջահայեաց, դիտարկող, ծրագրող ըլլալ գործունեության մը ամբողջական գիծերուն մէջ: Նպատակ ունենալ կը նշանակէ գործել նշանակութիւն ունեցող գործով մը, ոչ թէ գործել ինքնավար մեքենայի մը նման. ան կը նշանակէ բան մը ընել եւ ըմբռնել եղած բաներուն նշանակութիւնը այդ նպատակի լոյսին ներքեւ:



## ԴԱՏԱՆԻՇԵՐԸ ԼԱԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ

1. Սահմանուած նպատակը գոյութիւն ունեցող պայմաններուն արդիւնքը պէտք է ըլլայ: Ան հիմաւորուած պէտք է ըլլայ այն նկատողութեամբ, որ ներկայիս տեղի կ'ունենայ կացութեան կարելիութիւններու եւ դժուարութիւններու համաձայն. միջոցառ շատ յաճախ անոնք կ'ենթադրեն վերջաւորութիւններ մեր գործունեութիւններէն դուրս: Վերջաւորութիւններ՝ օտար կացութեան բաղադրեալ վիճակին: Վերջաւորութիւններ, որոնք կը ցոլացնեն դուրսի աղբիւրէ առնուած նպատակ մը, եւ այսպիսով մեր ամբողջ ճիգը կը դառնայ դուրսէն առնուած նպատակ մը իրագործել: Իրականին մէջ այս մէկը միտքը կաշկանդել է:

Դուրսէն ներածուած նպատակ մը  
միտքին թռիչք չի կրնար տալ. ան անձը  
կը դնէ քնողական վիճակի մէջ:

2. Նպատակ մը ճկուն ըլլալու է: Ան կարող ըլլալու է փոփոխութեան ենթարկուելու՝ կարենալ դիմագրաւելու համար պարագաները: Դուրսէն բերուած նպատակը յաճախ քարացած է: Տրուած ըլլալով որ ան դուրսէն բերուած է, ուրեմն չ'ենթադրէր սահուն յարաբերութիւն ունենալ կացութեան բոլոր պայմաններուն հետ: Արժէքը օրինաւոր նպատակի մը, կը կայանայ այն իրականութեան մէջ, որ մենք կարենանք զայն գործածել պայմանները փոխելու՝ ըստ պէտքին: Նկատի ունենանք երկրագործ մը, որ իր նպատակին հասնելու համար աննկատ թողու հողին տեսակը, կլիման: Լաւ նպատակ մը կը քննէ աշակերտներուն ներկայ փորձառութեան վիճակը եւ կը փորձէ զայն դարմանելու ծրագիր մը մշակել. Ծրագիրը միշտ աչքին առջեւ կ'ունենայ եւ տակաւին կը բարեկարգէ զայն, քանի պայմանները զարգանան:

Նպատակը փորձառական է, եւ ուրեմն  
շարունակաբար աճող գործի մէջ է ան եւ  
փորձի կ'ենթարկուի:

Talk to any teacher, and you will quickly find that between students, parents, classes, assignment preparation, test corrections, photocopying and lesson planning, let alone their personal lives, teachers barely have the time to talk to one another in structured settings, to share ideas, plan lessons and in general benefit from each other's work. All my own language teaching experience has taken this form to a legally specialized form. The prevalent theme running through all my one-on-one and group teaching, with children, high school students, undergraduate students, graduate students, refugees, and teachers across diverse settings, including language schools, business corporations, elementary schools, high schools, test prep schools and so on, has been isolation, a concept that is the very antithesis to a profession dedicated to working with others: teaching.

Not surprisingly, my "teacherly way of viewing the world" (Lytle, 2000, p.696) recognizes the need for collaboration – collaboration with teachers first and foremost, as well as, in Freirian fashion, collaboration with students. Collaboration in my understanding sees individuals working together in order to improve upon particular experiences – in this case teaching and learning – for everyone.

Goddard and colleagues (2007) discuss this very perspective of teaching, as an inseparable part of teaching, and one that shapes positively teachers' and students' teaching and learning experiences. They cite Smylie et al. (1996), who, in looking at hundreds of teachers at some twenty-five schools undergoing some type of organization restructuring, found that:

Individual teacher autonomy was negatively associated with student achievement; conversely, team control over resources and accountability for outcomes was positively associated with student success. Although not related directly to collaboration, their results imply that the mutuality and shared responsibility that emerges when teachers collaborate may actually improve instruction and student learning (p.880).

The development here, of what Marks and Louis (1997) call a "professional community and collective responsibility for student learning," (p. 248) contributed to a sense of empowerment for teachers and students alike.

On the same token, Rosenholtz (1989a, as cited in Goddard et al., 2007, p.878) argues that a lack of collegiality and collaboration among teachers, and the reality of isolation is the biggest impediment to teachers teaching and learning to teach. Not only is it an emotional impediment, but a professional development impediment as well, "in the manner that it forces teachers to rely on trial and error methods, trials based on memories of their own schooling" (p.878). Consequently,

---

teachers are at an immediate disadvantage in school systems where they do not have time even outside of school hours, let alone during school hours, to engage in any sort of on-going dialogue with other teachers.

---

Clearly, this type of experience merely contributes to stunting the growth and development of a field that is urgently calling for better means to deal with old problems.

Interestingly, Day (1997) continues to explain that teacher "...alienation also exists because many have colluded in this [set-up]" (p.48). Day describes that teachers, as the practitioners, have bought into the idea that academicians, researchers, theorizers and policymakers know better than the teachers; these researchers and policymakers, as the thinking goes, probably know what they are doing when they decide what a teacher's workday should look like, and take for granted that teachers should be able to fend for themselves. It does not take much to realize, however, that the teachers are the ones on the field – they are the ones in the classrooms, with the students, interacting with tens, if not hundreds of individuals, each of whom come with their own stories and histories.

The takeaway here is clear:

teachers in collaboration are more powerful than teachers in isolation.

While it may not be easy for teachers to fight the systemically supported isolation, in addition to their own habit-based isolation, doing so may save time and labour, and at the same time build a professional and emotional support system, ultimately contributing to an actual community.

Talar Kaloustian, March 2013

Doctoral candidate, Teaching, Learning & Teacher Education Ed.D.

University of Pennsylvania

#### References:

Day, C. (1997). In-service teacher education in Europe: Conditions and themes for development in the 21st century. *British Journal of In-service Education*, 23(1), 39-54.

Freire, P. (1970). *Pedagogy of the oppressed*. New York: Herder and Herder.

Goddard, Y. L., Goddard, R. D., & Tschannen-Moran, M. (2007). A theoretical and empirical investigation of teacher collaboration for school improvement and student achievement in public elementary schools. *Teachers College Record*, 109, 877-896.

Lytle, S.L. (2000). Teacher research in the contact zone. In M. Kamil, P. Mosenthal, D. Pearson, & R. Barr (Eds.), *Handbook of reading research*, Volume III (pp. 691-719).

## 25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Նկարագրի կերտումը առողջ դաստիարակութեան առաջադրանքով, աշխատողական ընկերութեան հարստութիւնը ու զայն կերտողներուն տեսլականին մարմնաւորումը իրականացնող ուժը կը ներկայացնէ:

Իր լայն առումով, իրենց հետքը ձգած քաղաքակրթութիւնները պատմութեան դարերու ընդմէջէն կը ներկայացնեն որոշ մարդկային հասկացողութիւն մը ու կենցաղավարժութիւն մը, գորս կարելի է ամփոփել միքանի հիմնանպատակներու լոյսին տակ.-

- Ձգտում աշխատանքի եւ հպատակներու կենսամակարդակի բարելաման
- Գործարքներ իրականացնելու ճանապարհներ
- Գործադիր մարմիններու կազմաւորում
- Վերականգնումի աշխատանք
- Գնահատական եւ նոր փուլի մը ձգտումներու աշխատանք

Ազգային մեր կեանքի փորձառութեամբ, վերոյիշեալ հանգրուանները միշտ ալ գոյութիւն ունեցած են, որով բնական ընթացքի մը իրերայաջորդ երեւոյթներն են:

Մանկավարժական եւ կրթական մարզերու առաջադրանքով մղուած Խաչեր Գալուստեան Մանկավարժական Վերակազմաւորումի Կեդրոնը իր նպատակադրած հեռանկարով, ընթացք տուած է կարեւորութիւնը շեշտելու առողջ դաստիարակութեան կերտումի ճանապարհները որոնելու պատմական յետադարձ ակնարկներով եւ ներկայի մնայուն հետազօտական ուսումնասիրութիւններու ճանապարհով:

Ընկերային կառոյցներու յարափոփոխ նուաճումներու բացած նոր ընկալումները եւ անոնց ներդրումներուն զարգացուցած նկարագրային, եւ հետեւաբար, արդարադատական նոր օրէնքներու կերտումը կ'ենթադրէ տարբեր ժամանակահատուածներու ընկերային հաւաքական կենցաղի բարեփոխութիւններ ակնկալել, տեսնել, վերլուծել, ուղղել եւ արդարացնել՝ կերտելու համար առողջ դաստիարակութեան կորիզները առաւելագոյն չափով յաջողցնելու հասարակաց երեւոյթներու ստեղծումը ու համոզումները:

Երբ 19-րդ դարու սկզբնական շրջանին Տէր Թոթիկեան մօտեցումը համոզումով պարտադրուած գիտութիւն ջամբելը ընդունուած ուսումնական կերպեր էին, այդ օրերու աննստարան, գետնածալ եւ գիտական ու հետազօտական ոչ յառաջացած պայմաններու մէջ, այսօրուան 21-րդ դարասկզբին գիտութիւն քաղելու ազատութիւնը մանուկին, հուսկ միջազգային հետազօտութեան արդիւնքներու, կը տարբերին, առ այդ գործադրելով իւրաքանչիւր հասարակութեան ժառանգը կազմող հարստութիւնները եւ զանոնք բաղդատականի դնելով եւ տարբերութիւնները յարգելով իշխող ընկերային պայմաններուն ընդմէջէն:

Մարդ անհատին կազմաւորումին եւ ընկերային փոփոխութիւններուն եւ



զարգացումներուն դիմաց մարդկային բնութիւնը միշտ կը ցանկայ գիտնալ, կ'ըսէ Արիստոտէլ (384-322 Ք.Ա.)

Գիտութիւնը զօրութիւն է կ'ըսէ Ֆրէնսիս Պէյքըն (1561-1626)

Ներկայիս, այդ գիտութիւնը, որուն մասին կը խօսի վերեւ, ազատօրէն եւ առատօրէն հրամցուած է ընդհանուր առմամբ:

Առատ գիտութիւնը, կրնայ բեռ ըլլալ եւ բարդութիւններու առաջնորդել եւ յոգնեցուցիչ կեանքի մը սերմերը ցանել, կ'ըսէ Տէգիտերիուս Էրասմըս (1465-1536)

Գիտութիւնը ունեցողներուն իրենց 'գիտութիւնը' եւ 'զօրութիւնը' ճարտարօրէն, արդիւնաբեր եւ գործնական փուլի մէջ դնելով եւ օգտակար դարձնելով իրենց եւ շրջապատի մտածողութեան մէջ նոր հորիզոններ բանալով է որ կ'արժեւորուի: Առ այդ գիտնալը եւ գիտութիւն ունենալը ինքնին նպատակակէտ ըլլալէ կը դադրին եւ կը դառնան նախանիւթ մը զայն արդարացի դարձնելու:

Այս է, որ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնը կը ձգտի յաջողցնել.- մանուկին վաղահաս տարիներու ընթացքին կերտել առողջ դաստիարակութեան համար պատրաստուած դաստիարակ/օժանդակ անհատներ, եւ որուն համար նման պատրաստութեան կարեւորութիւնը ներկայիս անընդհատ կը շեշտուի յառաջադէմ երկիրներու մէջ եւ անոնցմէ օրինակ առնող յառաջացող երկիրներու մէջ եւս:

Այս բոլորին հասարակ յայտարարը մէկ է.- Աստուածային նախախնամութեամբ ստեղծուած մանուկները օժտուած կ'ըլլան բազմակողմանի շնորհներով, եւ որոնց խորհրդանշական կերպարը կարելի է համապատասխանեցնել Հոգեգալուստին վերնատան մէջ խմբուած անդամներու բազմազան շնորհներով լեցուած պատգամաւորներուն՝ մանուկներուն:

Առողջ դաստիարակութեան արմատական այդ "սրբութիւնները"՝ մանուկները, առաջնորդել է, հասկնալով Աստուածային այդ ստեղծագործութիւններուն հարստութիւնը՝ անոնց առիթը տալով փթթուելու, ծաղկելու եւ իրենց շնորհները բաշխելու մարդկութեան, անոնց անսահման առիթներ ընծայելով ազատ մտածողութեան ու անոնցմէ սորվելու միշտ ու միշտ: Որքան դիպուկ է մեր մակապարտէզներու եւ մանկամտութիւններու տարիքային աճման նշանակ այդ ծաղիկներու ծաղկումը բնորոշող համակարգերը:

Դաստիարակին պարտականութիւնը առիթներ ստեղծելն է, դիւրացնել ընկալումը տիրող ընկերութեան եւ ընկերութիւններուն պայմանները, եւ

ձգել մանուկներուն ստեղծագործել առանց որ մեր, մասամբ մը կարծրատիպ համոզումներով եւ մօտեցումներով արգելք հանդիսանալու մանուկներուն ազատօրէն արտայայտելու պարփակուած շնորհները եւ օրինակները՝ օրինակելի եւ դաստիարակելի ուղեցոյց հանդիսանալով:

Մինչ 1950-ական թուականներու, յետ պատերազմեան շրջանին կային հազուադէպօրէն գտնուող միայն ու միայն միքանի տեսակի ինքնաշարժներ եւ ինքնաշարժներու գոյներ, նաեւ խաղալիքներ եւ արտնին առարկաներ, տիրող տնտեսական եւ՝ քաղաքական եւ՝ ռազմական պայմաններու մէջ, այսօր ազատ մտածողութեան արդիւնք եղող նորութիւնները եւ ստեղծագործութիւնները առիթներ բացած են մրցակցութեան եւ բազմազանութեան եւ նորաստեղծ բառերու եւ բառարաններու:

Մանկավարժական մեծաքայլ ուսումները քսաներորդ դարու ընթացքին՝ եւ վաղահաս մանկութեան (early childhood) կրթական ուսումնասիրութիւններու ընդմէջէն՝, Ճոն Տիլի, Եռհանն Բեստալոնցի, Լորիս Մալակուցի, Փաուլօ Ֆրէյրէ, Էրիք Էրիքսըն, Լեւ Վիկոթսկի, Ժան Փիաժէ, Ճերոմ Պրունըր, Հաուրըրտ Կարտնըր, Մարիա Մոնթեսորի, Ֆրիտրիխ Ֆրէօպել, Լիլիան Քաթզ, Մարկարէթ Պէնքրոֆթ, Էտուարտ Թիորնտայք, Կէշթուլտ, Ալֆրէտ Պինէ, Քուրթ Քոֆֆըա, եւ շատ ուրիշներ, վերջին հաշուով եւ

---

հետազօտութեանց արդիւնքներու  
համոզումով հասան ազատ մտածողութեան  
հիմնաքարին՝ արձագանգելով Քրիստոսի  
չափանիշին՝ կատարելագոյնին՝

---

որ մեծերու յորդորով պզտիկներուն ազատութիւնը տան Քրիստոսի մօտ գալու: Փրոֆ. Խաչեր Գալուստեանի հաստատ համոզումով՝ Քրիստոս Ինք այդ մօտեցումով, մանկավարժական սկզբունքներու ամենաարմատական սզգբունքը կը կազմէ:

---

Պէտք է ձգտիլ մօտենալ մանուկներուն  
այնպիսի ձեւերով՝ կարենալ հասկնալու  
համար պարփակուած Աստուածային  
հօգորութիւնը եւ Աստուծոյ պատկերով  
ստեղծուած մարդ էակին հարստութիւնը  
հրաշակերտ տաճարին՝ մարդ էակին  
հարստութիւնը եւ անոր նկատմամբ  
յանձնարարուած յարգանքը,

---

Եւ որուն ընդմէջէն կարելի կը դառնայ մօտենալ Աստուծոյ եւ Աստուածային փառքին՝ ապրելով երջանիկ կեանքի պայմաններու մէջ:

Մանուկներու ուղեղի կազմաւորումէն առաջ արդէն քանդակուած կերպար ստացած կ'ըլլայ նկարագիրը՝ այսինքն բեղմանւորումէն եւ ծնունդէն մինչեւ երկու-

երկուքուկէս տարիք, որուն հիման վրայ ընկերային գիտելիքներու հարստացման շրջանը կը բազմապատկուի տակաւ առ տակաւ՝ մինչեւ հինգուկէսէն վեց տարիքը, որմէ ետք միտքը եւ ուղեղը պատրաստ կ'ըլլան ընկալելու փոքրիկներուն պարտադրուած կրթական ծրագիրը: Դաստիարակները/օժանդակող անձերը պարտաւորութիւնը ունին այդ բազմազանութիւնը բեղմնաւորելու եւ աշակերտը մղելու զայն բազմապատկելու:

Այժմու վերջին հետազօտական աշխատանքները կեդրոնացած են մանուկի ուղեղին զարգացման տուեալներուն վրայ:

Որքան խեղճ եղած են մեր, ի մասնաւորի Սփիւռքի յետ պատերազմեան կրթական մօտեցումը, ուր մանկապարտէզի եւ մանկամտօրի դաստիարակ նշանակած ենք եւ կը կը տարուինք ներկայիս ալ նշանակելու, իններորդ եւ քիչ մը աւելի բարձր դասարանի “օրիորդներ”, երբ գիտականօրէն հետազօտող դաստիարակներ միայն նման պարտականութեան գլուխը անցած ըլլալու են: Հետազօտող անձերը, այսօրուան ըմբռնողութեամբ, Դոկտորայի տիտղոսի արժանացած եւ տարիներու հետազօտական աշխատանք տարած, ստեղծագործութիւններ կատարած եւ փորձառութեամբ հետազօտական մեթոտաբանութեամբ հարստացած կ'ըլլան:

Ազգապահպանում եւ հայապահպանում մասնաւորաբար եւ մարդակերտում՝ ընդհանուր առմամբ նախ տեսլականով կ'ամրապնդուի եւ տնտեսական այդ հետապնդումն ալ կը դառնայ շատ աւելի պտղաբեր:

Ահա այս տեսլականով ստեղծուած է Խաչեր Գալուստեան Հիմնադրամը եւ այս քսանհինգամեակի ոգեկոչումով է որ կ'առաջադրենք աւելի եւս պտղաբեր դարձնել Սփիւռքի մանկավարժութեան այս Կեդրոնը, որ իր ներքին ծրագրին մէջ կը պարփակէ բազմաթիւ գաղութներ:

Մեր մաղթանքն է որ ամրապնդուի հիմնադրամին աշխատանքը յօգուտ մեր ազգին եւ այն բոլոր շրջապատներուն մէջ ուր կը գտնուինք:

Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը վայելող եւ յատուկ պաշտօնագրով պետական ճանաչողութիւնը վայելող այս կեդրոնը առանցքային դեր կը կատարէ առողջ հայապահպանման աշխատանքի կապակցութեամբ:

Տիրոջ օրհնութիւնը մնայուն հովանի ըլլայ բոլոր անոնց վրայ, որոնք բարոյական թէ նիւթական գոհողութիւններով ազգապահպանման եւ ազգակերտումի առողջ տեսլականով եւ հաւատքով կ'առաջնորդեն իրենց վստահուած առաքելութիւնը: Փառք ու պատիւ այդ միջավայրը ստեղծող քաղաքական հեռատեսութեամբ օժտուած պետական եւ ընկերային մարդկանց:

*ՇԱՀԷ Խ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ*

*Նոյեմբեր 2011*

## ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԻ ԵՒ

### ԱԶԳԱՊԱՀԱԿՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Սուրբիոյ Ազեզ գիւղը, Թուրքիոյ մէջ գտնուող սահմանամերձ գրաւեալ Քիլիսէն ոտնաքայլերով անցանելի հեռաւորութեան վրայ, նաեւ քիչ մը անդին՝ Այնթապէն, եւ այլ շրջաններէն, եղաւ օրինաբեր անմիջական կայան մը Եղեռնէն ճողոպրած տարաբախտ Տարագիր հայութեան անդարձ կերպով Կիլիկիայէն եւ վերականգնումի վճռական հեռանկարով Հայաստանի գրաւեալ արեւմտեան հողերէն տեղահան եւ գաղթական եղած հայութեան մէկ մասնիկին:

Ազեզ գիւղը՝ երեսուն տարիներու ընթացքին եղաւ հայկական գաղթոճախի բաբախող օրրաներէն օրինակելի համայնական կարեւորագոյններէն մին, իր մէջ ունենալով հազարաւոր հայեր իրենց պարագաներու եւ հողային ու բնակավայրերու կորուստներէն յետոյ:

Ազգապահպանման աշխատանքով, սահմանամերձ այս ոստանին մէջ կառուցուեցաւ Ազեզը բնորոշող կեդրոնական եկեղեցին եւ յարակից վարժարանը, եւ ծաղկեցան գիւղին յատկանիշը կերտող հայ արհեստաւորներու անձնական արհեստանոցները: Եկեղեցւոյ զանգը հնչեց մօտ եօթանասուն ամեակ մը իրերայաջորդ սերունդներու ականջին, ընդգրկելով ազգային ոգին վառ պահող շարժումներ եւ շատ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին ձեռք բերուած յաջողութիւններ՝ ինչպէս մարզական (ֆութպոլ), թատերական, դասախօսական, սկաուտական, ընկերային, տակաւ առ տակաւ նոսրանալու եւ հասնելու եկեղեցւոյ ժամկոչին արձանագրած վերջին կանչին երեսնամեակ մը տարիներ առաջ, հայկական վարժարանը վաղուց փակուելէ յետոյ, ուր նմոյշի եւ յիշատակի համար մէկ հայ իսկ մնացած չէր: Հոն էր, Սուրբիական հողին վրայ, սահմանամերձ այդ ակունքին, որ ազգային գաղթոճախը զարգանալու եւ շրջանը զարգացնելու կոչուած պիտի ըլլար վերապրող տարագիր տարրերուն կորիզը եւ որ այժմ՝ հարիւր տարիներ ետք գոյութիւն չունենալով, այդ նախդիրներն ալ չգոյացած են:

Այս ճակատագրին նմանօրինակ բախտին արժանացան Աֆրին, Անտիոք, Եագուպիէ, Ճարապլուս, Այն Արապ, Այն Արուս, Ռաքքա, Հասիչէ, Թէլ Ապիատ, Րաս Ուլ Այն, Տէրպէսիէ, Արապ Բունար: Մնացին աւելի բախտաւոր կեդրոններ ուր հայապահպանման սերմերը աճեցան աւելի եւս չզարգանալու ճակատագրով, բախտորոշ անորոշ ապագայով մը, որ կը վկայենք ներկայիս: Ասոնց կողքին են Լաթաքիա, Դամասկոս, Հալէպի Նոր Գիւղը, Քամիշլի, Քեսապ, Գարատուրան, Տէր Զօր եւ այլ աննշան կարգ մը գիւղեր ուր ազգայնական պատկանելիութիւնը արդէն անվերադարձօրէն, եւ կամ հայապահպանումի վերականգման տկար հաւանականութեամբ, փոփոխութիւն կրած են: Այսօր այս շրջանները պարպուած են հայկական տարագրեալ այդ մեծամասնութենէն եւ փոխարինուած քրտական զանգուածներով, որոնք նոյն ձեւով, աշալուրջ կը սպասեն անցնելու այդ՝ ‘միւս’ կողմը որուն համար իրենց պահանջներն ալ բացորոշ են: Հարցադրենք.- ո՞վ աւելի պատրաստ է մեր երկուքէն այդ հեռանկարը իրականացնելու: Այս իրաւունքը արեամբ կը շահուի, համընթաց հեռուէն եկող ամրապնդուած կանչերով:

Տարագրութեան աւիւններուն դանդաղ կորուստը եւ անոր սերմերուն տակաւ տկարացումը եւ չքացումը, ի մասնաւորի սահմանամերձ այս գիւղերուն, նմանօրինակ մթին երեսակն է ներկայիս տարուող տարագիր հայութեան

ազգապահպանման աշխատանքին, որուն մէջ մանկավարժական սերմերը եւ ղեկավար տարրը վերակենդանացումի լրջախոհ աշխատանքի կը կարօտին: Այս վերլուծողական մօտեցումով տեսնուած իրականութիւնն է, որ ծնունդ տուած է Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Կեդրոնին, եւ որ ցանուած է Խաչեր Գալուստեանի որբանոցի տարաբախտ կեանքէն ներս մանկութիւն չապրած մղումէն:

Առաջադրանքը՝ նուազագոյն քսան տարուան Սփիւռքի, եւ ի յարկին մինչեւ յիսուն տարուան տեսլական մը որդեգրել ազգային գետնի վրայ, վերանորոգելու հրամայականով քսան տարին անգամ մը, եւ կամ իւրաքանչիւր սերնդափոխութեան սեմին:

Ներկայ ժամանակահատուածին հետ համապատասխան տուեալներու ընդմէջէն, նպատակադրել կարելիութիւններ ստեղծել, ներմուծելու համար ճակատագրական եւ հարուստ կարելիութիւններու հեռանկարներով եւ ոգեւորութիւն արթնցնելու նոր սերունդներու ապրելակերպին մէջ, շիտակ նշանառում պիտի նկատուէր:

Տարագիր հայր՝ բռնի ոյժով տեղահանուած հայր, բռնի ոյժով կրօնափոխ դարձած հայր, համշէնահայր, Ջազա հայր, թրքացած հայր, քրտացած հայր, եւ թագուն հայր, ազգին այս հատուածներն են, որոնք կոչուած են հայապահպանութեան եւ ազկապահպանման սիւները կազմելու եւ աննախատեսելի նոր էջեր բանալու հայկական պատմական հողերուն վրայ: Ազատ կամքով գաղթած տարաբնակ հայր, հեռու հայապատկան հողերէն, ուղին կորսնցուցած ազգապահակութեան հայն է, հետեւողական հայն է: Հայկականութեան բարոյականը պահող հայր, որ բարոյական նկարագրով կ'առընչուի, հայեցի դաստիարակութեան հետքն է որ կը կրէ: Նոյն ատեն ազատ կամքով գաղթած տարագիր հայն ալ, Հայաստանէն դուրս տարաբնակ հանգամանք ստանալու հեռանկարով, տարաբնակ դառնալու, եւ ոչ տարագիր հանգամանքը պահելու հայրենական հողերու վրայ վերապրելու վճռական կամքով, հաւասար որոշումով՝ կը դադրի ազգապահպանումի եւ ազգակերտումի ռահվիրայ ըլլալէ, պահելով հանդերձ սկզբունքային բարոյականութիւնը ազգապահակ հայ մնալու: Այս հատուածին մեծամասնական հանգամանք ունենալն է, որուն որպէս հետեւանք, թուաբանակ արձանագրելը անցնող տասնեակ մը դարերու ընթացքին դանդաղութեամբ յատկանշուած է:

Մեր տարած աշխատանքը ազգապահպանում անուան տակ, իրականին ազգապահակութեան բնորոշումին աւելի մօտ հանազամանք ունի. այդ ալ ուծացումի եւ չգոյատեւելու ենթակայ է:

Մի քանի տարիներ առաջ կատարուած պատմական վիճակագրական տուեալներու համաձայն, տասնմէկերորդ դարէն ասդին հայապահպանումը յաջողած է մօտ 30% տոկոս համեմատութեամբ միայն՝ արձանգրելով կրկնապատիկ աճ հազար տարուան ընթացքին, երբ ներկայ տուեալներով աշխարհի տարածքին աճը կը կրկնապատկուի յիսուն տաին անգամ մը: Այս տուեալներէն դատելով մեր փորձերը յաւելեալ ամրապնդուած եւ աւելի լայնատարած դաստիարակչական աշխատանքին մէջ է կայանալու, վերլուծողական, գիտական աշխատասիրութիւններով եւ գործադրելի դարձնելու մեր առօրեային մէջ:

Անցնող յիսուն տարիներու ընթացքին, հայկական վարժարաններուն կիսով նուազեցումը Լիբանանի մէջ, օրինակ, նաեւ անդրադառնալով կարելիութիւնը

աւելիով բազմացող նոր ուսումնական օճախներու ծաղկումը հայկական գաղթոճախներէն ներս, առողջ վիճակի մէջ եղող Տարագիր գաղթօճախներէն ներս, հարցադրումներու առջեւ կը դնէ ազգապահպանման տեսլականը Մփիւռքի մէջ տիրող իրականութեան՝ ուր ոտնակոխ եղած են դարերու ժառանգութիւնը, ոչ հայկական սովորութիւնները եւ կենցաղավարժութիւնները ներմուծելով արագացած կորուստի ճամբու ընթացք մը, ուր առիթներ կը տրուին մօտակայ ներառումով հեռաւոր նպատակադրումները խախտելու, առնուազն նոյն այդ խորացեալ հանգամանքով չդիտելու կարճատես եւ ոչ լուսամէտ տեսլականով:

Այս առումով, Տարագիր հայուն ազատ կամքով տարաբնակի հանգամանք ստանալու անկողմնացոյց ընթացքն է, որ աւելի եւս նօսրացնելով ազգապահպանման մարտահրաւերներու դրականութիւնը, նման վերել յիշուած Սուրիական առհասարակ եւ նահապետական սնունդով ծաղկող եւ խայտող սահմանամերձ կեդրոններու պարպումով եւ հետամուտ հազարաւոր մղոններու հեռաւորութեան վրայ, ոչ-հայկական բնոյթ կրող մեծամասնութեան օրէնքներուն՝ խղճմտօրէն՝ հետեւողական ընթացք բռնելով եւ միաժամանակ ազգապահպանութեան ձայներ բարձրացնելով, նաեւ այլազան շարժումներով լիացած հայկական որակումով հեռացող տարաբնակ հայ գաղութներ ստեղծելով, որ թէեւ խղճմտանքով տարուած՝ բարգաւաճումի եւ ինքնագոհունակութեան տպաւորութիւնը ստեղծած է անոնց մէջ:

Հաղորդութիւնը Առաքելական եկեղեցւոյ կիրակնօրեայ պատարագի ընթացքին Յիսուսի խորհրդանշական մարմնին բաժնեկից դառնալէ անմիջապէս ետք, եւ այդ խորհրդաւորագոյն պահը խորհրդանշող Յիսուսի երկրորդ գալուստը մարմնաւորող խորհրդաբար գոց վարագոյրին ետին վեղարապատ պատարագիչին Յիսուսը խորհրդանշող պատրաստութենէն յետոյ, էջքը՝ երկինքը խորհրդանշող խորանի միջավայրէն դէպի երկիր՝ առ հաւատացեալներ եւ կրօնասէրներ, նաեւ հոգեհանգիստի համար յիշուած եւ մնացած հանգուցեալները եւ ողջ մարդկութեան անդամները դատելու, հոգեմտաւոր եւ մարմնաւոր իմաստաւորումի անհուն զօրութեան ակունք է հաւատացեալին համար: Պատարագի կրթութիւնը հայերէն լեզուի ուսուցումին հետ առընթեր մեր լիիրաւ ազգային պարտաւորութեան եւ ազգապահպանման մաս կը կազմէ: Այս կրթութեան տուեալներուն օժանդակելով մեր ազգային անքակտելիութիւնը նպաստաւորող սերմերը ցանած կ'ըլլանք:

Պատարագը իր ամբողջականութեան մէջ, պատարագիչին առաջին քայլերէն սկսեալ, Խորհուրդ Խորին-ով սկսած, որ ինքնին պատարագին ամբողջական հաւատամքի խորհուրդ ըլլալու եւ հոգեպարար երգեղողութեամբ իմաստաւորուած ըլլալով յատկանշուած է՝ հոն մատի վրայ հաշուող հաւատացեալներ կան միայն:

Այս ապրելաոճը, ուր վճռականութեան համակարգի հոգեւոր եւ հոգեմտաւոր ռազմական պարտաւորութեան աղբիւր են, եղած են պակասաւոր հայկական վարժարաններու կրթական ծրագրի տուեալներէն դատելով:

Ազգապահպանման կերտումը եւ դաստիարակչական խախտումները դարմանելով եւ յաւուր կարեւորութիւն ընծայելով առողջ դաստիարակչական սկզբունքներով՝ մանուկ հասակին կրնայ նպաստաւորուիլ արմատականօրէն: Կանուխ տարիքին առողջ դաստիարակութեան պակասը մեծ տոկոսով անդարմանելի է անհատին կեանքին ապրած տարիներու ընթացքին: Չափահաս պայմաններու մէջ անհատին ընկալումը մանկութեան շրջանին ստացած

ուղեցոյցներէն տարբեր, շատ քիչ տոկոսով եւ քիչերով միայն իրագործելի է: Վիճագրականօրէն՝ նման ուղեցոյցներու ընկալումը քսան չորս ժամ վերջ, ներկաներուն 70% տոկոսին մէջ ոչ մէկ հետք ձգած կ'ըլլայ, քառասուն ութ ժամ վերջ 5% ը ներկայ գտնուողներուն կը յիշեն որոշ բաներ եւ որ կը չէզոքանայ գրեթէ ամբողջովին մէկ շաբաթ վերջ:

“Առողջ դաստիարակութիւնը  
անբաժանելի հարստութիւնն է անհատին”  
– կը գրէ Փրոֆ. Խաչեր Գալուստեան:

“Մանուկին հրամցուած դաստիարակութիւնը  
մանկական կանուխ տարիներուն  
ճգնաժամային է, կերտելու համար հիմքերը  
կենսատեւ առողջ նկարագրի կազմութեան” –  
կ'ըսէ Շահէ Խ. Գալուստեան

Այս մէկը կ'ենթադրէ պատրաստուած դաստիարակչական կազմեր ստեղծել եւ գնահատել զանոնք: Չի բաւեր ուսուցչական ասպարէզի որոշումը ընտրողները գնահատել եւ վարձատրել, այլ այդ պատրաստութիւնը պահանջող որակեալ եւ մասնագիտական նշանակումներ արհեստագիտականօրէն կատարել եւ հրամայական գործադրութեան վերածել է պէտք: Մեծերուն կազմուած նկարագիրներէն հետազօտական նորաստեղծ մօտեցումներով ‘մկրտուիլը’ դժուարին ծրագիր է: Հոն հասնողը ինք անձնապէս կազմուած պէտք է ըլլայ այդ պարտականութեան համար: Տեղական դպրոցներու համար համահաւասար իրաւունքով քաղաքիական լիիրաւ պարտականութիւն է նաեւ պատրաստել դաստիարակներ ոչ-պայմանական եւ ոչ-ամբողջականօրէն հայկական՝ վարժարաններու համար: Ներկայի կրթական մարզին մէջ, յառաջադէմ հետազօտական ըմբռնումով,

ուսուցիչ բառը փոխարինուած է ‘օժանդակող’ որակումով,

ուր ուսուցիչ եւ աշակերտ փոխադարձ հասկացողութեան դաշտի մը մէջ կը գործեն:

Հարցադրումներու կողքին եւ թեր ու դէմ կարծիքներու լուսաւորումին ընդմէջէն՝ ո՞րն է աւելի բաղձալին եւ արդէօք պատրա՞ ստ էինք, եւ այսօր ալ պատրա՞ ստ ենք գործնական եւ տնտեսական անկիւններէ դիտուած եւ մօտալուտ վերածադկումի եւ ազգապահպանումի ծրագրային աշխատանքի մէջ տեսնել բազմացած (ի հեճուկս նուազող) հայկական վարժարաններու հայկական վարչամեքենայով եւ թէեւ նօսրացած հայ ուսանողութեան թուաքանակին, եւ բացը լեցուած ոչ-հայ աշակերտական կազմով որոշ համեմատական տոկոսի մը դրութեան, հաւանաբար աւելի եւս ապագայի քաղաքացիական առողջ կերտումով եւ մշակոյթներու փոխադարձ եւ աւելի ամբողջական եւ յարգալի ծանօթացումով առաջնորդելու

եւ առաջնորդուելու աւելի եւս ամրապնդուած ազգապահպանման ոգիի կերտումով:

Առաջնորդութեան նման գաղափարներու դրական եւ բացասական տուեալներու վերլուծումը, հայապահպանման դիտանկիւնէն դիտուած, եւ տնտեսական բարելաւումի ակնոցով ուսումնասիրուած՝ ներկայի իրավիճակներու մարտահրաւերները դիմագրաւելու նոր ծալքերը տեսնելու մղիչ ուժ կը դառնան առաջնորդող տարրերուն ազգային բոլոր խաւերէն ներս:

Անցնող 2011 տարուան հրչակումը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառին կողմէ, եւ մանուկներու վրայ տարուած աշխատանքը, կ'ենթադրէ մասնագիտական մօտեցում՝ հիմնուած հետազօտական ծրագրային աշխատանք՝ փորձարականին հետ առնչութիւն: Այդ հետազօտական աշխատանքներուն համար, դասական փորձառական ըմբռնողութեան հետ միասին, պատրաստել մասնագէտներ անհրաժեշտ հրամայական է արդիւնաւորելու համար մանուկի նկարագրի կերտման նկատմամբ տարուած աշխատանքը, եւ, ի յարկին, յաջորդական Մանուկի երեք եւ աւելի տարիներ հոչակել հրամայական դառնան, ուր զարթնին մանկավարժութիւն ուսանած հետազօտող մասնագիտացած մարմիններ ազգային առաջնորդութեան հրամայականով: Լիբանանի տարածքին գտնուող մօտ չորս հարիւր յիսունէ աւելի մանկամտօրներուն համար կայ մէկ Դոկտորայի մակարդակով կանխահաս մանուկներու համար մասնագիտացած անհատ:

Մանուկներու տարուան, եւ կամ տարիներու, հոչակումին անհրաժեշտ է ազուցել ասպարէզի պատրաստուող եւ պատրաստուած համալսարանականներ Սփիւռքի բոլոր գաղութներէն ներս եւ ի յարկին, կազմելով մարմիններ իմաստասիրական եւ վիճակագրական տուեալներ հաւաքելով աշխարհի տարածքին հազարաւոր հայ համալսարանականներու, բարձր ուսման հետեւող համալսարանաւարտներու, եւ վերլուծելով անոնց մասնագիտական հետաքրքրութիւնները, նման կեդրոնական աշխատանքներու ներկայի համացանցի ընծայած անձայրածիր դիրտութիւններուն, գործնական պարբերական տուեալներ մամուլին հայթայթելու, կարելիութիւններու աշխատանքը նորանոր հորիզոններ դիտարկելու եւ վերլուծելու հայապահպանման ծառայութեան ծիրէն ներս նորահաս սերունդներուն տեսլականը, նպատակ ունենալով տնտեսական բարգաւաճում՝ ազգին ներկայի եւ ապագայի սերունդներուն համար ի մասնաւորի, եւ մարդկային արժեքներու ծանօթացումին զոյգ անցեալի եւ ներկայի պատմութեան մէջ եւ այդ ալ յարատեւ եւ զարգացող ուժգնութեամբ:

Մինչ ազգապահպանման ներկայի աշխատանքները եւ քաղաքական զարգացումները միջազգային մօտակայ եւ հեռակայ պաստառներուն վրայ, ուժգին թափով յառաջ կ'ընթանան անվիճելի դրական եւ նպաստաւոր հողային վերատիրացումի հեռանկար մը ստեղծելով, Խրիմեան Հայրիկի թղթէ շերտփի յիշեցումը շեշտելով, չըսելու համար որ ոչ իսկ շերտփի նկարը ունենալու հրաման տրուեցաւ համագումարի վայրէն հարիւրաւոր մէթր անդին իջեւանելով եւ հայկական պատուիրակութեան հրահանգ տրուելով որ համագումարի շէնքին մօտենալու փորձ իսկ չընեն, եւ որուն բացակայ բաղադրեալը, երկաթեայ շերտփէն անկախ, դիւանագիտական եւ ռազմավարական բացակայութիւնն է, կը բնորոշուի նախօրօք տարուած ազգապահպանութեան որակումով յատկանշուած հետապնդումներէն, այլ բացատրութեամբ՝ այլոց հետեւողական ու անկողմնացոյց յառաջխաղացքով եւ ոչ առաջնորդական մղումով: Բանակցութեան մասնակցութիւնը ինքնին յաղթանակի կէտեր արձանագրած ըլլալու ճարտարութեամբ



արդարանալի է, եւ որուն ողնասիւնը գետնի վրայ ռազմական նպաստաւոր պայմաններով ամրապնդուած կ'ըլլայ:

Ամփոփելով՝ ազգապահպանման աշխատանքը, մեղմ ըսաց, բարելաման աշխատանքի կը կարօտի վերին գերմարմինի մը հսկող արժեւորումի մը ստեղծումի հրամայականի պահանջով՝ վճռական Հայաստանի հեռատես կառավարական կազմով մը, որուն դրական հունտերը եւ ապագայ հունձքերու հեռատեսութիւնը անվիճելի են: Օսմանեան շրջանի անկազմակերպ, իսկ Իթթիհատականներու, ներկայի թուրք նախահայրերուն, կազմակերպած եւ կամ անոր կողմանկիցներուն անմարդկայնութիւնը վկայելով, թէեւ քիչ մը ուշ, նաեւ Սովետական կարգերու նոյնպէս ոչ-ազատ եւ անբացատրելի խստութեան պատճառաւ, մղիչ տուեալներ են մարդկային իրաւանց շրջագիծէն ներս, ամբողջական ակունքներով պայքարելու, շահելու եւ վերատիրանալու դարերու ընթացքին թափուած հայու արիւնը արժանաւորապէս արդարացնելու իրաւունքով, Արցախեան դիւցազներգութեան օրինակով, Լոռիի ձորերու աստուած եւ սարերու արծիւ, անտառներու առիւծ Յովակիմով:

Համակիրներ շահիլը դրականութեամբ եւ վճռականութեամբ կը հարստանայ եւ յառաջ կ'ընթանայ, եւ ի վերջոյ բնական եւ հարուստ գարնանային օրհնութիւններով կը հասնի գործնական արդիւնաւետութեան:

Դատարանը, կ'ըսեն, առիթը կու տայ իրաւունքը պաշտպանելու եւ ոչ իրաւունք տալու: Այդ առումով, ընդհանուր առմամբ աշխարհի մէջ, վճիռ արձակուած դատապարտեալներուն եօթանասուն տոկոսը անարդար վճիռի արդիւնք կ'ըլլան, կը հաստատեն վիճակագրական տուեալները, հակառակ անոր որ հոն հասնիլն իսկ քիչ ճիգ չ'ենթադրէր: Ոտնակոխուած արդար իրաւունքները յաճախ կ'արդարացուին անարդար եւ բարոյականէ գուրկ պայմաններու մէջ, ներկայի նիւթապաշտ իրականութիւններէն դատելով:

Հայ Ազգին եւ հայկական արժեքներուն պահապան կանգնիլը եւ մասնայատուկ յատկանիշերով կերտելը վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, հայկական նահապետական իրաւունքները վերականգնեցնելու անձնագոհ եւ մաքուր սրտով՝ մարտիկներու զգեստաւորումով կ'առաջնորդուին եւ կը խնայեն Հայութիւնը Գարնանային զարթօնքի պահանջէն՝ ազդակ մը որ անխուսափելի կը թուի ներկայի քաղաքական ալեկոծ վիճակէն դատելով, եւ ոչ շատ բարձր գնահատելի կրթական ըմբռնողութեան ընթացքէն:

Ժամանակը անցած՝ հայապահակութենէն անցնելու է հայապահպանման եւ հայակերտման սրբանուէր աշխատելաոճին, եւ որուն պտղաբեր արդիւնքը, իրերայաջորդ առողջ առաջնորդութեամբ, սպասելու է ի յարկին տասնեակներ տարիներ վերջ արդիւնաւորուելու, ապագայի սերունդներու ազգակերտման հայկական իւրայատուկ դաշտը պատրաստելու՝ միջազգայնացումի ապագայ-նացման ընդհանրական յատկապատկերով, նորաստեղծ եւ առողջ վճռականութեամբ եւ լաւատես եւ անվիճելի յաջողութեան հեռանկարով: Նպատակադրուած յաղթականի հեռապատկերը ոչ նահանջ եւ ոչ իսկ նահանջատիրութիւն չեն ճանչնար:

*ՇԱՀԷ Խ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ*

*Դեկտեմբեր 2012*

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑԻ  
ՀԵՌԱԿԱՅ ՀԱՄԱԼԻՐԻ ԾՐԱԳԻՐ  
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆ**

*Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը կը միտի իր արդիւնաւէտութեան դաշտը ընդլայնել ու հանդէս գալ նոր համայնքով մը, որուն իրականացման համար, զուակները պատրաստ են յաջողցնելու գործունէութեան ու շինարարական նախագիծ-ծրագիր մը, ինչպէս կը բացատրուի կցեալ նկարագրութեան մէջ:*

Առողջ ընկերային կառոյցներ զարգացում եւ յառաջացում կ'արձանագրեն՝ բազմաթիւ իրերայաջորդ սերունդներու ազգային հաւաքական գոհաբերութեամբ եւ իրենց կեանքի տեւողութեան փորձառական ճանապարհով եւ դասեր քաղելով ընկերային տարբեր խաւերու միջեւ հասարակ յայտարարներ ստեղծելով, ինքնուրոյն մշակոյթի յատկանիշերը եւ դիւցագներգութիւնները շեշտելով:

Մանկավարժական Կեդրոնին նպատակը անհատական յատկութիւնները կերտելով եւ համադրողական վարչամեթենայով ինքնաբաւ ընկերութիւն եւ ընդհուպ միագոր ազգային կառոյց մը ստեղծելն է, կարենալ ընկերային առաւելագոյն գոհունակ եւ բարարելի կեանքի պայմաններ արմատացնելու համար:

Հիմնուելով այն մեկնակէտին վրայ, որ կը նպատակադրէ աւելի ընդարձակ ծիր մը ապահովել Մփիւռքին այլազան գաղութներէն ներս, համագոր ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տեսլականին, Խաչեր Գալուստեան Մանկավարժական անուան անկախ կառոյցով եւ ինքնաբաւ վարչակազմով Մանկավարժական Կեդրոնի եւ Ուսուցչանոցի մը ստեղծման հարցով նախագիծի մը պատրաստութիւնը իր նախնական յատակագիծով ներկայովս տրուած է հեռակայ այս ծրագրին աշխատանքային սերմը ցանելու հեռանկարով:

Մանկավարժական Կեդրոնը համալսարանի մակարդակով եւ Լիբանանի պետականութեան կողմէ ճանչցուած եւ արտօնագիր ստացած ուսումնարան մըն է, ուր մանկավարժներ դպրոցական եւ ի մասնաւորի մանկապարտեզի եւ նախակրթարանի աշակերտներու նպաստաւորման համար կը պատրաստուին:

Ծրագիրը կը ներառէ հաստատութիւն մը սրահով, գիշերօթիկի բաժինով, ճաշարանով, ներքին եւ բացօթեայ զբօսանքի դիրութիւններով, դասախօսական սրահով, դասասրահներով: Նախագիծը իրագործելու համար մօտաւոր պահանջը գնահատուած է երկու հազար քառակուսի մեթր հողային տարածութեամբ, Մէթնի շրջանին մէջ:

## Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Շենքը նուազագոյն տուեալներով օժտելու նախաձրագիրը կ'ընդգրկէ հետեւեալ դիրութիւնները.-

- Դասասրահներ երկու յարկերու վրայ, վեցական մասերով, առաւելագոյն հարիւր աշակերտ ընդունելու նախատեսութեամբ
- Այլազան չափի դասասրահներ եւ կահաւորումներ
- Գիշերօթիկի բաժին մէկ յարկի վրայ երեսուն հոգի պատսպարելու պատշաճեցումներով
- Ճաշարան եւ բացօթեայ պատշգամ վերին յարկին վրայ վաթսուն հոգիի համար պատրաստուած յարմարեցումներով
- Հանգստասրահ գետնայարկի վրայ երեսուն հոգիի հանգիստի դիրութիւններով
- Թատրոն համահաւաքի եւ պաշտօնական արարողութիւններու համար, երկու հարիւր հոգի ընդունելու յարմարութիւններով
- Դասախօսասրահ վաթսուն հոգիի պատշաճեցումներով
- Գրադարան եւ սերտարան երեսուն հոգիի պատշաճեցումներով
- Զբօսանքի կազմածներ եւ յարմար զբօսասրահ
- Առետրական եւ արհեստագիտական սրահ եւ համակարգիչի կեդրոն, քսան հոգի ընդունելու յարմարութիւններով
- Գլխաւոր ժողովասրահ, երեսուն հոգի ընդունելու դիրութիւններով
- Երկրորդական ժողովասրահ վեց հոգիի համար
- Բաղնիքներ եւ լուացարաններ՝ կարիքի համաձայն
- Բացօթեայ կառատուն յիսուն ինքնաշարժներու համար
- Այլազան այլ դիրութիւններ եւ աշխատատեղի, պահակի սենեակ, ուսուցչարան, քարտուղարութեան գրասենեակ, շտեմարան, լուացքի սենեակ, խոհանոց, մարզասրահ, մեքենաներու համար յատկացուած սենեակ, ելեկտրական կազմածներու համար յատկացուած սենեակ, շտապ օգնութեան սենեակ՝ երկու անկողինով, եւ այլ դիրութիւններ:

Յարկերու ընդհանուր թիւը նախատեսուած է հինգ յարկ՝ օժտուած նախասրահով, մուտքի սրահով, պահակի սենեակով եւ վերելակով:

Շենքը յատկանշուած պիտի ըլլայ ազգային եւ կրօնական կերպարով եւ դրոշմուած լիբանանեան եւ հայկական ճարտարապետական յատկանիշերով:

Ներկայովս որոշակի հողամասեր նկատի առնուած չեն: Վերոյիշեալ տուեալներու նախնական բնորոշումը պիտի օգնէ յարմարագոյն ճարտարապետական ընդլայնուած մանրամասնութիւնները պատրաստելու, հետեւեալները նկատի առնելով.-

- Յատկորոշումներ
- Շէնքի ուրուագիծ
- Քարտեզներու պատրաստութիւն
- Ընտրութիւններ աւարտական տուեալներու
- Շէնքի ընդհանուր ծախս
- Շինարարութեան համար ծրագրուած եւ գնահատուած ժամանակահատուած
- Շինութենէն յետոյ յաջորդ քսան եւ աւելի տարիներու պահպանութեան աշխատանքներ
- Մնայուն վարչակազմ եւ անձնակազմ կեդրոնի գոյատեւումը եւ պահպանումը ապահովելու եւ ինքնաբաւ աշխատանքի պայմանները արմատացնելու համար:

Այս տեսլականով յատկանշուած է հեռակայ ծրագիրը լիբանանեան հողամասին վրայ, ուր Սփիւռքէն ներկայացուցիչներու աշխատանքային այցելութիւնները կարելի կը դարձնեն իրականացնելու այս ծրագիրը, տուեալ ամբողջական օժտուածութիւններով:

## ՀԱՄԱԼԻՐԻ ՅԱՏԱԿԱԳԻԾ




Նախագիծի պատրաստումին՝  
Ճարտարապետ Տիգրան Գալուստեան



## ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ


*Կեղրոնը ունենալով նաև հրատարակչական գործ, ձեռնարկած է մատենաշարային աշխատանքի, գործակցությամբ՝ «Քրիստոնեական Դաստիարակություն» մատենաշար ձեռնարկության, որուն ցանկը՝ ստորև.-*

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Խաչեր Գալուստեան  
Մանկավարժական կազմաւորումի  
Կեղրոնի 10 ամեակ  
Անթիլիաս, 1997

Խաչեր Գալուստեան  
Մանկավարժական կազմաւորումի  
Կեղրոնի 20 ամեակ  
Անթիլիաս 2007










Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ԾՈՎԻՆԱՐ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Ա. Դրուազ  
38 էջ, Անթիլիաս - 1994

Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՄԱՆԱՍԱՐ ԵՒ  
ՊԱՂՏԱՍԱՐ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Բ. Դրուազ  
63 էջ, Անթիլիաս - 1994




Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ԱՌԻԻԾ ՄՇԵՐ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Գ. Դրուազ  
47 էջ, Անթիլիաս - 1994

Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹԻ  
ՄԱՆԿՈՒԹԻԻՆԸ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Դ. Դրուազ  
46 էջ, Անթիլիաս - 1994



Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹԻ  
ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՆԸ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Ե. Դրուազ  
63 էջ, Անթիլիաս - 1994

Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹԻ ԵՒ  
ՄՍՐԱՅ ՄԵԼԻՔԻ ԿՈՒԻՆԸ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Զ. Դրուազ  
48 էջ, Անթիլիաս - 1994



Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ԴԱԻԻԹ ԵՒ ԽԱՆՂՈՒԹ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Է. Դրուազ  
54 էջ, Անթիլիաս - 1994

Խտացում և պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՓՈՔՐ ՄՇԵՐ  
Սասնայ Ծոեր  
Դիւցազնավէպ,  
Ը. Դրուազ  
38 էջ, Անթիլիաս - 1994







Պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԷՆ  
Հրաչեայ Աճառեան  
104 էջ, Անթիլիաս - 2003



Պատշաճեցում  
Գրիգոր Շահինեան  
ՆԻԼՍ ՀՈԼԿԵՐՍԸՆԻ  
ՀՐԱՇԱԼԻ  
ՃԱՍԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ  
Սեւմա Լակըրյոժ  
111 էջ, Անթիլիաս - 2003

*2012 Տարին «ՀԱՅ ԳԻՐՔԻ ՏԱՐԻ» հռչակեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Հայրապետը: Իր պատգամէն հատուած մը կը մէջբերենք այստեղ.-*

«Հայ Տպագրութեան 500-ամեակին առիթով, դարերու հարուստ փորձառութեամբ, անմահացած Հայ Գիրքը դառնայ ամենօրեայ դպրոցը հայ մարդուն, անոր սիրելի ընկերը, կողմնացոյցը իր կեանքին եւ յաւերժութեան բացուող ճանապարհը հայ ժողովուրդին:

Գիրք կարդացողը գիրքո՛վ կը հարստանայ,  
Գիրք տպողը գիրքո՛վ կը բարձրանայ,  
Գիրք պահողը գիրքո՛վ կը հզօրանայ,  
Գիրք գրողը գիրքո՛վ կ'անմահանա՛յ...»:



## ՖԱՆԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՍ

- Կեդրոնին կոչումը
- Ֆանարի Գալուստեան Հիմնադրամ

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Հիմնարկի հաստատման եւ ի գործ դրուած կատարողական եւ առողջ տեսլականով աշխատանքային ծրագրին առընթեր, կ'առաջադրենք հարազատօրէն մեր մասնակցութիւնը բերել սոյն նուիրական եւ պատմական հիմնարկին եւ յետագայ քայլարշաւին:

Իսչէր Գալուստեանի գիտամանկավարժական եւ գրական ժառանգութիւնները, գրադարանները եւ ձեռագրերը, զիրար լրացնող Սփիւռքի ազգային մէկ կարեւոր օղակը կը կազմեն մեր պատմական ու մշակութային ցայտօր նուաճած եւ արձանագրած հազարամեակներու ժառանգութեան կողքին՝ Մեսրոպեան անկիւնադարձային հանգրուանէն անցնելով, Ոսկեդարը քանդակելով, Օսմանեան կայսրութեան բոլոր մարզերուն մէջ հայկական վիթխարի ներդրումը իրականացնելով՝ հասնելով Զանգեզուրի, Սարդարապատի հերոսներուն, երջանկայիշատակ Գարեգին Յովսէփեան Կաթողիկոսի ազգային ամբողջական տիպարին, Շուշիի ազատագրման, բարգաւաճումի ընթացք բռնած Հայաստանի հանրապետութեան, վճռականութեամբ քանդակուած հայուն՝ որպէս անբաժանելի եւ անքակտելի նկարագիրը Քրիստոնեայ հաւատացեալին՝:

Սոյն նպատակին իրագործումը, որպէս Գրադարանի ներքին կանոնագրութիւն՝ կ'ընդգրկէ հետեւեալ աշխատանքները որպէս փոքր մաս մը առնուելիք առաջադրանքներուն.-

1. Գրադարանի հայերէն եւ օտար լեզուներու հրատարակութիւններու ցանկագրութեան պատրաստութիւն
2. Իսչէր Գալուստեան Հիմնադրամի նեցուկ հաստատութիւն
3. Արեւմտահայ արուեստագէտներու եւ ականաւոր դէմքերու աշխատասիրութիւն
4. Թերթերէ յօդուածներու պատրաստութիւն Սփիւռքի տարածքին
5. Հետազօտական աշխատութիւններու իրագործում այլազան մարզերու մէջ.-

- Բանասիրական
- Կրթական
- Պատմական
- Ընկերային
- Քաղաքական
- Մշակութային
- Գեղարուեստից
- Մարզական

- Երաժշտական
- Թատերական

6. Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան ամպիոնի հետ գործակցութիւն

7. Տոհմաճառերու պատրաստութիւն 19րդ եւ 20րդ դարերու արեւմտահայ ականաւոր գերդաստաններու ծիրէն ներս

8. Հրատարակութիւններ ազգային միասնական եւ հասարակ յայտարարի յատկանիշերով

9. Յայտնաբերութիւններ պատմական իրողական տուեալներու ընդմէջէն, յատկանշական փաստարկութիւններու հրապարակումով

10. Դաստիարակներու պատրաստութեան դասընթացքներ՝ գիտամանկավարժական սկզբունքներու ուղիով, բացատրական հրապարակումներով, դասախօսութիւններով եւ կամ հանդիպումներով

11. Համագործակցութիւն Հայաստանի մանկավարժական համալսարաններու եւ գրադարաններու հետ

12. Արժեւորումներ եւ գնահատումներ յետ-եղեռնեան դէմքերու՝ ի սփիւռս աշխարհի, Սփիւռքի գաղութներու բոլոր մարզերէն ներս

Ծրագրային այս աշխատանքներուն առաջադրանքները կ'առընչուին Մեծին Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ հրատարակութիւններու, Հայաստանի կրթութեան նախարարութեան հրատարակութիւններու, նաեւ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան Սփիւռքի գիտաուսումնական աշխատանքներուն հետ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

(ՈՐՈՆՑ ՀԵՏ ԿԵԴՐՈՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԾ Է)

### Ա. ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1. Ազգային Խանամիրեան գոլէճ
2. Ազգային Գ. Չաթալպաշեան Միջնակարգ վարժարան
3. Ազգային Աբգարեան Միջնակարգ վարժարան
4. Ազգային Եղիշէ Մանուկեան Երկրորդական վարժարան
5. Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան գոլէճ
6. Ազգային Քառասնից Մանկանց վարժարան
7. Ազգային Ռուբինեան վարժարան
8. Ազգային Աքսոր Գասարճեան վարժարան
9. Ազգային Կիլիկեան վարժարան
10. Ազգային Արհեստից Էհրամճեան վարժարան
11. Ազգային Նուպարեան – Խրիմեան վարժարան, Թրիփոլի
12. Ազգային Յառաջ վարժարան, Այնճար
13. Ազգային Պալրզճեան վարժարան, Զահլէ

### Բ. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1. Հայ Աւետարանական գոլէճ
2. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան
3. Հայ Աւետարանական Թրատ վարժարան
4. Հայ Աւետարանական Թորոսեան Միջնակարգ վարժարան
5. Հայ Աւետարանական Կէրթմէնեան վարժարան
6. Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան Երկր. վարժարան
7. Հայ Աւետարանական Երկրորդական վարժարան, Այնճար
8. Հայկազեան Համալսարան

### Գ. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1. Վիեննական Մխիթարեան վարժարան, Հազմիէ
2. Սրբ. Խաչ Միջնակարգ վարժարան

3. Սրբ. Գրիգոր Լուսավորիչ ճեմարան
4. Մեսրոպեան Երկրդ. վարժարան
5. Մեսրոպեան Արհեստագիտական կեդրոն
6. Սրբ. Խաչ Արհեստագիտական կեդրոն
7. Սրբուհի Ակնէս վարժարան
8. Սրբոց Հովհաննէանց Երկրդ. վարժարան
9. Հայ Կաթողիկէ վարժարան, Այնճար
10. Սրբուհի Շուշան վարժարան

Դ. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1. Լեւոն Կ. Նազարեան վարժարան
2. Պօղոս Գ. Կարմիրեան Միջնակարգ վարժարան
3. Արհեստագիտական գոլէճ
4. Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկ
5. Դարուհի Յակոբեան Երկրդ. վարժարան
6. Յովակիմեան - Մանուկեան Երկրդ. վարժարան
7. Սահակեան - Լ. Մկրտիչեան գոլէճ
8. Թէքէեան Միջնակարգ վարժարան
9. Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն հիմնարկ
10. Համազգային Հ. Եւ Մ. Արսլանեան ճեմարան

Ե. ԱՅԼՔ

1. Թոչնոց Բոյն
2. Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոն
3. ՔԱՀԼ-ի Մասնավոր Դասընթացքներ
4. Գարակեօղեան Հաստատութեան յետմիջօրէի եւ գիշերային դասընթացքներ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ  
ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ  
25 ԱՄԵԱԿԻ

Պատրաստութիւն՝  
Շահէ Խ. Գալուստեան

Համակարգումի, դասաւորումի, խմբագրումի պատասխանատու՝  
Պարոյր Աղպաշեան

Հրատարակութիւն՝  
Ինթըրմարգ

Տպարանակ՝ 500 Օրինակ

Ստանալու համար դիմել՝  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գրատուն  
email: bookstore@armenianorthodoxchurch.org  
Tel: (+9614) 410001/3, 410550/511, 523461/2  
FAX: (+9614) 419724  
Armenian Catholicosate of Cilicia Bookstore  
PO Box 70317

25TH JUBILEE  
KHATCHER KALOUSTIAN  
PEDAGOGICAL CENTER

Prepared by  
Shahe Kaloustian

Edition and coordination by  
Barouyr Aghbashian

Published by  
Intermarc

To place your orders please contact our bookstore  
email: bookstore@armenianorthodoxchurch.org  
Tel: (+9614) 410001/3, 410550/511, 523461/2  
FAX: (+9614) 419724  
Armenian Catholicosate of Cilicia Bookstore  
PO Box 70317